ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶԱՔԱՐՅԱՆ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
6

Սփյուռքի դպրոցների համար

(արևելահայերեն ուսուցմամբ)

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2019

ՀՏԴ 373.167.1:821.19(075.3)
ԳՄԴ 84(5Հ) գ72
Զ 431

Զաքարյան Հովհաննես
Զ 431 Հայ գրականություն 6: Սփյուռքի դպրոցների համար / Հ. Զաքարյան. — Եր.: «Զանգակ» հրատ., 2019. — 144 էջ:

Սույն դասագիրքը նախատեսված է Սփյուռքի այն դպրոցների համար, որոնցում ուսուցումը կատարվում է արևելահայերենով: Սա «Հայ գրականություն 5» դասագրքի շարունակությունն է: Գրքում տեղ գտած գեղարվեստական բնագրերը կարող են օգտագործվել նաև թելադրությունների, փոխադրությունների համար: Դրանց հարակից թեմաներով կարելի է հանձնարարել շարադրություններ:

Սիրով կընդունենք դասագրքի կատարելագործմանը վերաբերող դիտողություններն ու առաջարկությունները: Մեզ կարող եք գրել հետևյալ հասցեներով.

ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի 49/2
info@zangak.am

ՀՏԴ 373.167.1:821.19(075.3)
ԳՄԴ 84(5Հ) գ72

ISBN 978-9939-68-506-9

© «Զանգակ–97» ՍՊԸ, 2019

ԴԱՍ 1

Իսկական ազգանունը՝ Սողոմոնյան: Ծնվել է 1897–ի մարտի 25–ին Կարսում: 1908–1912 թթ. սովորել է Կարսի ուսումնարանում: 1915–ին զինվորագրվել է Քանաքեռում կազմավորված հայկական կամավորական խմբերին: 1916–1917 թթ. սովորել է Մոսկվայի՝ Հանյավսկու համալսարանում, 1921–1924 թթ.՝ Մոսկվայի՝ Արևելքի աշխատավորների համալսարանում: Ապա մեկնել է արտասահմանյան շրջագայության: 1925–ին Երևանում ստանձնել է «Նոյեմբեր» գրական կազմակերպության ղեկավարությունը: 1935–ին նրան քաղաքական մեղադրանքներով հեռացրել են աշխատանքից և գրողների միությունից, 1937–ին՝ բանտարկել: Մահացել է 1937–ի նոյեմբերի 27–ին բանտում: Հիրիմի տեղն անհայտ է:

Գրել է բանաստեղծություններ («Ես իմ անուշ Հայաստանի», «Լուսամփոփի պես աղջիկ», «Տաղ անձնական» և այլն), պոեմներ («Կապուտաչյա հայրենիք», «Դանթեական առասպել», «Սոմա», «Ամբոխները խելագարված», «Խմբապետ Հավարշը», «Պատմության քառուղիներով», «Դեպի լյառը Մասիս», «Կոմիտասի հիշատակին», «Նավզիկե» և այլն), բալլադներ («Ազգային երազ», «Հարղագողի ձամփորդներ» և այլն), «Երկիր Նաիրի» վեպը, «Երևանի ուղղիչ տնից» հուշագրությունը և այլ երկեր: Դրանց մեծ մասն ամփոփված է «Հրո երկիր», «Տեսիլաժամեր», «Ծիածան», «Ողջակիզվող կրակ», «Տաղարան», «Ութնյակներ արևին» և այլ շարքերում, «Պոեզոզուռնա», «Կոմալմանախ», «Էպիքական լուսաբաց», «Գիրք ճանապարհի» ժողովածուներում:

Եղիշե Չարենցը համարվում է նորագույն շրջանի հայ գրականության հիմնադիրը:

Չարենց անունը դարձել է մեր խղճի ու արժանապատվության խորհրդանիշը: Ու քանի դեռ շարունակվում է Նաիրյան պատմությունը, այդ անունը ժողովուրդը միշտ էլ կպարզի իբրև դրոշ...

Մարտիրոս Սարյան

Ասուպի նման ծնվեց ու մի ակնթարթում կիզվեց Չարենց մահկանացուն: Բայց հոգու լույսը հավերժաբար մնաց ու գնալով պայծառանում է:

Մարտիրոս Սարյան

Եղիշե Չարենցի հուշատախտակը Երևանում՝ Մաշտոցի պողոտայում

Եղիշե Չարենցի դիմանկարը նկարիչ՝ Մարտիրոս Սարյան

Չարենցը խոհուն, կիրթ, մեծ զարգացման տեր անձնավորություն էր՝ անհանգիստ բնավորությամբ, ըմբոստ ու եռուն: Բոլոր ազգերի գրականությունները գիտեր, լավ ճանաչում էր և մեծ ճաշակի տեր էր:

Ավետիք Իսահակյան

ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

Ջյունապատ լեռներ ու կապույտ լճեր:
Երկինքներ՝ որպես երազներ հոգու:
Երկինքներ՝ որպես մանկական աչեր:
Մենակ էի ես: Ինձ հետ էիր դու:

Երբ լսում էի մրմունջը լճի
Ու նայում էի թափանցիկ հեռուն,
Ջարթնում էր իմ մեջ քո սուրբ անուրջի
Կարոտը այն հին, աստղային, անհուն[1]:

Կանչում էր, կանչում ձյունոտ լեռներում
Մեկը կարոտի իրիկնամուտին:
Իսկ գիշերն իջնում, ծածկում էր հեռուն՝
Խառնելով հոգիս աստղային մութին...

ՄԵՐ ԼԵԶՈՒՆ

Մեր լեզուն ձկուն է ու բարբարոս,
Առնական է, կոպիտ, բայց միևնույն պահին
Պայծառ է նա որպես մշտաբորբոք փարոս՝
Վառված հրով անշեջ դարերում հին:

Եվ վարպետներ՝ խոնարհ ու հանճարեղ,
Հղկել են այն դարեր որպես մարմար,
Եվ փայլել է նա մերթ ինչպես բյուրեղ,
Մերթ կոպտացել ինչպես լեռնային քար:

Բայց միշտ պահել է նա իր կենդանի ոգին,
Եվ եթե մենք այսօր կոտրատում ենք այն մերթ,
Այդ նրանից է, որ ուզում ենք՝
Մեր նոր խոհերի վրա ժանգ չչոքի:

Այդ նրանից է, որ մեր այսօրվա ոգուն
Այլևս չի կարող լինել պատյան
Ո՞չ Տերյանի բարբառը նվագուն,
Ո՞չ Նարեկի մրմունջը մագաղաթյա:

[1] անսահման

Եվ ո՞չ անգամ Լոռու պայծառ երգիչ
Թումանյանի բարբառը գեղջկական.
Բայց նա կգա՝ լեզուն այս երկաթյա բերքի
Եվ խոհերի այս խոր ու երկրական...

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Հայ գրականության համար ինչո՞վ է նշանավոր Եղիշե Չարենցը:
2. Համացանցում գտի՛ր լրացուցիչ տեղեկություններ Եղիշե Չարենցի ու նրա երկերի մասին և պատմի՛ր դասընկերներիդ:
3. Դասընկերներով հայթայթե՛ք նշանավոր ասույթներ՝ քաղված Եղիշե Չարենցի երկերից:
4. Կարդա՛ Եղիշե Չարենցի «Խմբապետ Հավարշը» պոեմը և համեմատի՛ր քո կարդացած այլ պոեմների հետ:
5. Վերհիշի՛ր Եղիշե Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը:

ԼԱՆԼ ԾԻԵՐ

ՀԱՅՈՑ ԹԱԳՈՒՀԻՆ

Երբ Սասունի թագավոր Սանասարը մեռավ, Բաղդադի խալիֆն առաջվա զորությունը չուներ: Մեկ ուրիշ զորեղ թագավոր էր հայտնվել՝ Մսրա Մելիքը:

Անճոռնի մի հսկա էր՝ խոշոր ու գեր, կոպերը կախված էին երեսի վրա: Նա հենց որ Սանասարի մահն իմացավ, զորք հավաքեց, եկավ Սասնա տան վրա կռիվ: Ավա՜ղ, Սասունը մնացել էր անպաշտպան:

Չկար Սանասար հսկան, ծուռ Բաղդասարը երկրից հեռացել էր, Դեղձուն–Ծամը կին էր՝ երեք պստիկ տղայի մայր, կախարդելու շնորհքն էլ վաղուց մոռացած: Քեռի Թորոսը մենակ էր մնացել: Ո՞վ պիտի վերցներ Սասնա տան գուրզը, բռներ Թուր–կեծակին: Վերգոն փորձեց հոր գուրզը վերցնել, չկարողացավ տեղից շարժել, ճողվեց ու հիվանդացավ: Օհանը փոքր էր, Մհերը՝ ավելի փոքր. թաքցրին, որ Մսրա Մելիքը չտեսներ: Քուռկիկ Ջալալին կապեցին մի մութ ախոռի մեջ, երդիկն ու դուռը շարեցին:

Մսրա Մելիքը առանց կռվի մտավ Սասուն: Հարկ դրեց մեր Սասնա վրա:

Արարատյան դաշտը՝ Չարենցի կամարից

Հայկական դրամանիշ՝ Եղիշե Չարենցի նկարով

Քեռի Թորոսը մի օր Սասնա մեծամեծերին ասաց.

— Սասնա տան կառավարողը պետք է լինի Սանասարի ցեղից: Ի՞նչ կասեն Սանասարի որդիները:

— Վերգո՛, մեր մեծ եղբայրը դու ես, դո՛ւ պետք է Սասունը կառավարես, — ասաց Ջենով Օհանը:

— Ես չեմ կարողանա: Ճողված եմ:

— Բա ո՞վ կառավարի, — հարցրեց Քեռի Թորոսը: — Օհանն ու Մհերը փոքր են:

Շատ խորհուրդ արին, վերջը Քեռի Թորոսն ասաց.

— Թող Դեղձուն–Ծամը կառավարի, մինչև երեխաները մեծանան:

Դեղձուն–Ծամը դուրս քաշեց Քուռկիկ Ջալալին, վրան դրեց Թամք–սադաֆին, բերանը՝ Սանձ–պողպատին, հագավ Սանասարի զգեստները, ձեռքն առավ Թուր–կեծակին, վահանը կապեց մեջքին, հեծավ, քշեց գնաց՝ իր Սասնա սարերը ման գալու, իր թագավորությանն աչք ածելու:

Ամբողջ քաղաքը դուրս էր եկել, որ նայի Սասնա թագուհուն, քանի որ Դեղձուն–Ծամը Սանասարի մահից հետո չէր երևացել մարդկանց: Ժողովրդին բարև տվեց, իր ձին ասպանդակեց, գնաց:

Շատ գնաց, քիչ գնաց, հասավ Կաթնաղբյուրին, որից մի ժամանակ ջուր էին խմել Սանասարն ու Բաղդասարը: Ջիուց իջավ, սանձը հանեց, որ ձին արածի: Ինքը նստեց աղբյուրի մոտ, հաց կերավ, ջուր խմեց, Քուռկիկ Ջալալուն էլ խմեցրեց, պառկեց կանաչ խոտերի մեջ, քնեց: Ինքն էլ, Քուռկիկն էլ Սանասարից հետո շատ նիհարել էին, դարձել ոսկոր ու կաշի: Երբ արթնացավ, տեսավ՝ ինքն էլ, ձին էլ պարարտացել են, լցվել, խոշորացել: Շատ զարմացավ: Եկավ տուն, տնեցիներին պատմեց այդ հրաշքը:

— Շատ մի՛ զարմացիր, — ասաց Քեռի Թորոսը: — Չէ՞ որ Սանասարն ու Բաղդասարը իրենց դյուցազնական զորությունն այդ աղբյուրից էին առել: Այդ աղբյուրի մասին գրված է Սասնա գրքերում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ է Մսրա Մելիքը արշավում Սասուն:
2. Նկարագրի՛ր հեծյալ Դեղձուն–Ծամին այնպես, ինչպես պատկերացնում ես:

ԴԱՍ 2 ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

ՈՒՂԵՐՁ ՄԵՐ ՀԱՆՃԱՐԵՂ ՎԱՐՊԵՏՆԵՐԻՆ

Ա

Մեր վարպետները հնուց տուփ են սիրել ու մարմար,
Հունչ ներշնչող են եղել կարծր քարին ու հողին.
Մեր վարպետները հնուց երգ են սիրել ու պայքար,
Մահ են բերել անքանքար, բութ ու տխմար տիրողին.
Ես խոնարհում եմ գլուխս հանճարի առջև ձեր անճառ,
Ո՛վ վարպետներ, որ տվիք ձև, կերպարանք մեր հողին:

Բ

Քաղաքներ էիք կառուցում, կամուրջներ, բերդեր ու տներ,
Հոյակապ շենքեր, որ դրին հանճարեղ կնիքն իրենց վառ
Ողջ ճարտար արվեստի վրա՝ Մասիսից մինչև Միջագետք,
Մեր երկրից մինչև Արևմուտք՝ սնելով գոթականն անմար...
Ձեր ձիրքով թողիք աշխարհում դուք անանց և անջինջ մի հետք,
Եվ մնացիք հավիտյան քերթության վարպետներ անմահ...

Գ

Աշխարհի ծայրերում բոլոր մենք գտնում ենք հիմա բեկորներ,
Որ տաշած կողերի վրա աստղաձև խազեր են կրում.
Այդ կորած անուններն են ձեր, ո՛վ անանուն վարպետներ,
Որ կերտել եք լուռ ու անցել և ձեր շունչը թողել դարերում.

Եղիշե Չարենցի արձանը Չարենցավանում, 1987 թ. քանդակագործ՝ Արա Շիրազ

Եղիշեն նրանցից է, որ բացի իր ժամանակինը լինելուց՝ բացատրությունն ու այդ ժամանակի տեսանելի և շոշափելի մարմնացումը եղավ: Հին դարերում նման մարդկանց մարգարե էին անվանում:

Վահրամ Փափազյան

Չի հաջողվում մեզ թեկուզ ձեր անունները գտնել,
Բայց գիտենք, որ ապրել եք դուք գետնաքարշ, խարխուլ խուղերում:

Դ

Ունեիք դուք չափ ու կշիռ, ունեիք ձիրք անհեղլի,
Որ նյութին տալիս էր վսեմ կերպարանք ու ձև խորզգա.
Թռող ձեզանից ուսանեմ ես այսօր գաղտնիքը գեղի,
Որ արվեստս լինի դաշնավոր, ինչպես ձեր հմտությունն հսկա.
Ո՜ւժ ներշնչեք իմ երգին, որ ընթացքը իր չշեղի,
Որ ժառանգորդը դառնամ հանճարեղ արվեստի ձեր ոսկյա:

Ե

Ուզում եմ աշակերտ լինել ձեզ և տիրել արվեստին ձեր անհուն,
Որ տողերս լինեն մեջտեղից ձեր ոսկյա օրենքով հատած,
Որ հանգերս լինեն հարդարած ձեր արդար, անխաբ թեզանով,
Եվ ձեր նուրբ քարերի նման՝ բառերս լինեն սրբատաշ.
Թռող ձեր հին շենքերի նման գործերս մնան անանուն,
Բայց լինեն դարի արևով և երկրի եղյամով պատած...

Զ

Մի՞թե իմ մեջ է այսօր արթնացել հանճարը ձեր սեզ.
Ե՞ս եմ շառավիղն արդյոք ձեր, ո՛վ հանճարներ մեր մեռած.
Թռող հուրհուրա իմ գրքում ձեր ոգու ցոլքը լուսե,
Թռ ող երգերում իմ այսօր, խոսքերում իմ ձեր ջանքը եռա:
Ո՛վ մեր մեռած վարպետներ, իմ թախանձանքը լսեք.
Ձեր անմահ կնիքը դրեք իմ անմար երգերի վրա...

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Դասընկերներով հայթայթե՛ք ասույթներ Եղիշե Չարենցի մասին:
2. Կարդա՛ Եղիշե Չարենցի «Երկիր Նաիրի» վեպը և համեմատի՛ր քո կարդացած այլ վեպերի հետ:
3. Կարդա՛ նաև Եղիշե Չարենցի «Պատմության քառուղիներով» պոեմը:

Նա բազում գետեր ու առուներ է ընդունել իր մեջ և վերածվել է մի վիթխարի ջրվեժի, որ կոչվում է Չարենց: Նա համազումարն է հայ, ռուսական, ապա համաշխարհային բանաստեղծության լավագույն ավանդույթների: Այս ամենով հանդերձ՝ Չարենց է՝ գրական շեշտված, մեծ անհատականություն, դարաշրջանի նշանավոր երևույթ:

Գուրգեն Մահարի

«Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բարն եմ սիրում»...

Անոր չհանդիպած՝ արդեն գիտեի իր այս քերթվածը: Սկսած էի արտասանել Ամերիկայի մեջ: Ամեն մեկ բառ բացատրել տված էի ու գրեթե զոց սորված: Ձայն մինչև այսօր կնկատեմ մեր երկրին, մեր հողին, մեր պատմությանը նվիրված ամենեն գեղեցիկ երգը, գովաբանական աղոթքը, «Հայր մեր»-ին նմանող աղոթք մը:

Վիլյամ Սարոյան

Նա ապրում էր մեր ժամանակակիցների հետ և մեջ... Բայց միաժամանակ նա նրանց մեջ միակն էր, որ ապրում էր նաև ապագայում և անցյալում:

Պարույր Սևակ

ՔՈՒՌԱԿԸ ՇԱՂԱԿԻՆ

Մհերը եղավ յոթ տարեկան: Մայրը նրան տարավ դպրոց: Շուտով Մհերը ամեն բան սովորեց, լցվեց ամեն շնորհքով: Մի օր էլ մորն ասաց.

— Թո՛ղ՝ սար ու ձոր ման գամ, որս անեմ, դառնամ իսկական տղամարդ:

— Որդի՛, դու դեռ փոքր ես, այդ բաները դժվար են քեզ համար: Համբերի՛ր, որ մի քիչ մեծնաս:

— Մեր տանն իսկական տղամարդ չկա: Թո՛ղ՝ պատրաստվեմ թշնամու դեմ կանգնելու համար:

Դեղձուն–Ծամը տեսավ՝ չի կարողանա համոզել իր տղային, համաձայնեց:

Մհերը, նետ–աղեղն առած, գնում էր որս անելու: Ոտքով էր գնում–գալիս, ձի չուներ: Մի օր այնքան վազեց աղվեսների հետևից, որ երեկոյան հոգնած, նեղսրտած եկավ տուն ու նետ–աղեղը գցեց գետնին: Քեռի Թորոսը հարցրեց.

— Որդի՛ս, ինչո՞ւ ես նեղսրտել:

— Է՛, քեռի՛, այդ գազանները փախչում են, հետևներից վազելով՝ հոգիս դուրս է գալիս:

— Մարդ էլ ոտքով կվազի՞ որսի հետևից: Դու Բիթլիս քաղաքի մեջ մի քեռի էլ ունես՝ անունը Գորկիկ իշխան: Քառասուն ձիու տեր է: Գնա՛, այդ քեռուց մի լավ ձի՛ վերցրու, հեծի՛ր:

Առավոտյան Մհերը առավ մահակը, երկու կորեկ հաց ու ճանապարհ ընկավ: Հասավ Բիթլիս: Երեխաները փողոցում խաղում էին: Տեսան՝ գալիս է մի հսկա՝ ուսին մի ծածկի գերան: Մհերը հարցրեց.

— Երեխանե՛ր, Գորկիկ իշխանի տունը ո՞րն է:

Երեխաները տարան, տեղ հասցրին: Մհերը մահակը մի կողմ դրեց, ներս մտավ: Գորկիկ իշխանը իր ընկեր իշխանների հետ, սենյակում նստած, զրույց էր անում: Մհերը բարև տվեց: Գորկիկ իշխանը բարևը չառավ: Մհերը բռնեց քեռու թևը ու մի թեթև սեղմեց: Իշխանին թվաց՝ իր թևը յոթ տեղով կոտրեցին.

— Ո՞վ ես, կտրի՛ճ:

— Քրոջդ որդին եմ՝ Սանասարի տղան՝ Մհերը:

— Վա՜յ, դու բարով եկար, հազար բարով եկար:

Մհերը նստեց, որ հանգստանա: Հաց բերել տվին, հացը կերավ պրծավ, նոր քեռին հարցրեց.

— Մհե՛ր, որդի՛ս, ինչպե՞ս եղավ՝ եկար ինձ մոտ:

— Քեռի՛, եկել եմ, որ ինձ մի ձի տաս՝ հեծնեմ:

— Գնա՛ ախոռ: Ո՛ր ձին հավանես, տա՛ր:

Ախոռում քառասուն ձի էր կապած: Որի մեջքին ձեռը դրեց, փորն իջավ, դիպավ գետնին: Քառասունն էլ փորձեց ու մտքում ասաց. «Ինձ համար պետքական ձի չկա: Սրանք իմ տակ չեն դիմանա»:

Դուրս պիտի գար ախոռից, մեկ էլ տեսավ՝ երկու տարեկան փոչոտ մի քուռակ ախոռի մեջ արձակ ման է գալիս: Մհերը բռունցքով խփեց քուռակի մեջքին, քուռակը թռավ, տասը ձի հաշմեց, քացով դիպավ մի մեծ քարի, կայծեր թռան: Մհերը մտքում ասաց. «Ինձ վերցնող որ կա, այս քուռակն է: Ես իմ ուժը գիտեմ. բռունցքով որ խփեցի, քուռակը պիտի սատկեր»: Մհերը գնաց իշխանի հյուրասենյակ:

— Քեռի՛, տո՛ւր ինձ այն փոչոտ քուռակը, որ այնտեղ արձակ վազվզում է:

— Մհե՛ր, ամոթ է: Մարդիկ պիտի ասեն՝ Գորկիկ իշխանի ձեռքը չգնաց, որ մի գեղեցիկ ձի տար:

— Քեռի՛, իմն այն քուռակն է, կտա՞ս՝ տանեմ:

— Դո՛ւ գիտես, որդի՛ս, տանում ես՝ տար:

Մհերը քուռակն ախոռից հանեց, մի պարան ուզեց, քուռակի չորս ոտքը կապեց իրար, իր մահակը մտցրեց ոտների մեջ, քուռակն իր շալակը գցեց: Բիթլիսի երեխաները, Մհերի հետևից ընկած, ծաղրեցին, թե մարդն է ձին շալակած տանում:

Եկավ, հասավ Սասուն: Քեռի Թորոսը տեսավ՝ Մհերն է գալիս՝ մի քնձռոտ քուռակ շալակին.

— Որդի՛ս, հենց այդ քուռա՞կը բերիր: Գորկիկ իշխանը չէ՞ր կարող քեզ մի գեղեցիկ ձի տալ:

Մհերը պատմեց, թե ինչու ընտրեց այդ քուռակը:

— Օոո՜, տղա՛ս, դա հասարակ ձիու քուռակ չէ: Քուռկիկ Ջալալիի զարմից է երևում: Տո՛ւր՝ ես պահեմ, երեք տարի հետո նոր կհեծնես:

Երեք տարի հետո Մհերը եղավ ձիավոր: Գնում էր սարերը, այծյամ ու գազան էր խփում, բաժանում սասունցիներին: Յոթ տարի Սասունը որսով պահեց:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ Մհերը գնաց Բիթլիս:
2. Նկարագրի՛ր քուռակին հեծնած Մհերին այնպես, ինչպես պատկերացնում ես:

ԴԱՍ 3

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆ

Ծնվել է 1877–ի փետրվարի 18–ին Ախալքալաքում (այժմ՝ Վրաստանում): Սովորել է ծննդավայրի հայոց ծխական դպրոցում: 1892–ին ընդունվել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը: 1898–ին ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը: 1900–ին հաստատվել է Թիֆլիսում, մասնակցել Հ. Թումանյանի նախաձեռնությամբ ստեղծված Վերնատուն գրական ընկերության աշխատանքներին: 1905–1910 թթ. սովորել է Ժենևի համալսարանում, վերադարձել Թիֆլիս և զբաղվել ուսուցչությամբ: 1925–ին տեղափոխվել է Երևան, եղել Հայաստանի գիտության և արվեստի ինստիտուտի գիտքարտուղարը: Վախճանվել է 1956–ի դեկտեմբերի 6–ին Երևանում:

Գրել է բանաստեղծություններ («Մի՛ լար, մի՛ թացիր աչքերդ», «Լուսնակն ելավ ամպն ի վեր» և այլն), պոեմներ («Կյանքի տեսիլ», «Լենկ Թեմուր», «Սրբի աղջիկը» և այլն), պատմվածքներ («Ավելորդը», «Ստամոքս», «Ջութակ և սրինգ», «Գիրք ծաղկանց» և այլն), վիպակներ («Ռաշիդ», «Նիգյար» և այլն), վեպեր («Քաղաք», «Մեսրոպ Մաշտոց» և այլն), թատերգություններ («Վասակ», «Ազգային խայտառակություն», «Հովնան Մեծատուն», «Երկիր հայրենի», «Նապոլեոն Կորկոտյան» և այլն), մանրապատումներ, ակնարկներ, թերթոններ, քննադատական, գրականագիտական, լեզվաբանական, պատմագիտական, արվեստաբանական հոդվածներ:

Գլուխգործոցը «Վարդանանք» պատմավեպն է: Հայ թատերգության մնայուն արժեքներից է «Քաջ Նազար» կատակերգությունը:

Մանուկների համար գրել է «Պոյպոյ մուկիկը», «Արջուկ–լրջուկ», «Փիսիկի վիշտը» և այլ երկեր:



Դերենիկ Դեմիրճյանի տուն-թանգարանում

Ես ճանաչեցի հայ ժողովրդի մեջ համամարդկայինը, ես գտա հայ ժողովրդին, երբ փայլեց իմ առջև նրա հանճարը Խորենացու, Եզնիկի, Եղիշեի և այլոց գլուխգործոցների մեջ, երբ ժպտաց հայկական վերածնությունը Նարեկացու, Երզնկացու, Ֆրիկի, Քուչակի վերապրացքի մեջ, երբ իմ առաջ կանգնեց հայկական վեհ ճարտարապետությունը, ծաղկեց հայկական մանրանկարչությունը:

Դ. Դեմիրճյան

ՀԱՅԸ

Արդյոք մի բան հասկանո՞ւմ եք Հայից... Ինչ տարօրինակ, հանելուկային արարած: Որքա՜ն խաբուսիկ է առերևույթ: Բայց ի՞նչ է ինքը՝ իր նկարագիրը:

Անհանգիստ դեմք ունի, չի թողնում՝ նկարես: Իր ցեղային պատկերն էլ տարօրինակ է: Թվով գրեթե ամենափոքրն է, տառապանքով՝ ամենամեծը: Ժամանակով ամենահինն է, վիճակով՝ ամենից անփոփոխը: Ամենից աննպաստը իր երկրի դիրքն է, բայց ինքը ամենից համառ կառչեց դրան: Որքա՜ն անհույս է թվում իր ապագան, բայց և որքա՜ն հուսացող է նա: Ասենք՝ իր կյանքում երկու բան բնավ չտեսավ. մեկբախտ, մեկ էլ՝ հուսահատություն:

Ինչպե՞ս ճանաչես նրան, ինչպե՞ս չափես: Իր չափը չափազանցն է. զարմանալի՜ հավասարակշռություն, որ ծայրահեղության մեջ է:

Ահա նայի՛ր, մեջքին մի սար բեռ՝ ձկվում է, մեջքը կոտրում: Աշխատանք է կատարում, թե՞ ինքնախորտակում: Ո՞ւմ դեմ է չարացել, որ իրեն է պատժում: Որքա՜ն ուժ, որքա՜ն աշխատասիրություն: Ի՞նչ է միտքը. մի փոքրիկ գումար վաստակի, գնա, խանութ բաց անի: Մարդը իր հացի և իր գործի տերն է ուզում լինել և ոչ թե սրա–նրա ծառան: Եվ արդեն Հայ նշանակում է տեր... Սա այն գյուղացին է, որ կատաղած, գազանացած՝ հողը քանդում է, չարչարվում, մզվում, հոգին հանում: Այնպես է հավաքում բերքը, կարծես հավիտյան պիտի ապրի, կարծես ոչ ոքի բաժին չպիտի թողնի: Բայց գնա՛ իր խրճիթը. հազար գող, մարդ, շուն ու գել նրա հացի վրա են: Ուտում են նրա հացը, ինչպես Հայր Աբրահամի սեղանից:

Տեսնե՞լ եք նրա խղճուկ բնակարանը... բայց անցի՛ր նրա երկիրը: Ինչ հիասքանչ վանքեր, հոյակապ աշտարակներ, գողտրիկ խաչքարեր: Հավատալ կարելի՞ է, թե ինքն է շինել այդ բոլորը: Լցրել է իր երկիրը եկեղեցիներով, բայց տարին մեկ անգամ չի մտնում մեջը՝ աղոթելու: Իր կրոնը երբեք չի քարոզել ուրիշներին: Եվ հավատալի՞ բան է, որ իր պատմությունը կրոնական ամենամեծ պատերազմների պատմությունն է, և այս չաղոթող ցեղի Նարեկացու շուրթերից թռավ աղոթքի ամենաբարձր թռիչքը առ Աստված...

Ցանել չի կարողանում ծես, ձև, աստիճան, քաղաքավարություն: Իր Խրիմյան Հայրիկը ամենից շատ կաթողիկոսությունը ատեց: Դիվանագիտության մեջ մի բանում է շատ հոգածու՝ անկեղծ լինել: Այնքան անկեղծ է և միամիտ, որ անկասկածելի խորամանկի և կեղծավորի տպավորություն է թողնում:

Խոնարհ է իր Սասունցի Դավթի նման և անսպասելի ըմբոստ, հարվածող նրա պես: Երբ վրա է հասնում զերազույն վտանգը, հերոսանում է հանկարծ և ծառանում վիշապի նման: Բարի է առհասարակ, շոյի՛ր, ու կկողոպտվի, բայց և առհասարակ ինքն է բարեկամ քեզ, իսկ քո բարեկամությունը վանում է: Ցաղանդ է՝ իր դեմ ատելություն ստեղծելու: Ուրիշի հաջողության մեջ նախանձոտ է: Եթե գժտվեց մեկի հետ, ոխակալ է, ինչպես ուղտ: Ամեն հայ մի հայ ունի, որի հետ թշնամի է մինչև մահ: Սա նրա անհրաժեշտությունն է: Անկարգ է և անիշխանական թե՛ հասարակության, թե՛ պետության և թե՛ գաղափարների մեջ: Իբրև ժողովրդական՝ անմիաբան է, խռովարար:

Ուր՝ հեղափոխություն, այնտեղ՝ Հայություն: Բայց իբրև «–ական»՝ ծայրահեղական է: Ասենք՝ ամեն հայ մի փոքր Հիրակացի է՝ Դոն Քիշոտի պես: Կոտորածներից ամենազարհուրելին ինքը տեսավ, և ինքն էր, որ չխրատվեց: Ինչո՞ւ է այսպես, ինչի՞ց է դժգոհ, ի՞նչ է կամենում... Ինչո՞ւ է այսպես անհավասար, անչափելի՝ իր վեհ թռիչքներում:

Հայի ամենամեծ առաքինությո՞ւնն ես ուզում. ամենաներողամիտ ցեղը աշխարհիս մեջ: Իր պատմությունը եղավ զարհուրելի ջարդեր, բնաջնջում... «Ջարդի՛ր ինձ, — ասում է նա, — ահա քո պատիժը և իմ վրեժը»: Ինձ թվում է՝ մի շատ մեծ վիրավորանք կա հայի սրտի խորքում թաքնված... Ինձ թվում է, թե դրա համար է նա ջարդվում, ճապոնացու պես, որ երբ մեկից խորապես վիրավորվում է, կանչում է իր բարեկամներին, հայտնում է իր վիրավորանքը և վերցնելով դանակը՝ պատռում է իր որովայնը:

Այսպես է Հայը: Չի ուզում, որ իրեն դիպչեն, մոտենան, սիրեն թեկուզ: Նա մեկուսի է, խստակյաց, բարի և ազատասեր:

«Ավելորդը» պատմվածքը եզակի է մեր գրականության մեջ, մշտարժեք: Ջանազան անկյուններից կարելի է նայել այդ երկին և միշտ ընդունել այն զեղեցիկ ու կատարյալ:

.... Ինձ զարմացնում են հոգեբանական այն խորունկ, ճշմարիտ վերլուծումները, որ անում է հեղինակը խղճմտանքի անպարտելի ուժի, խղճի խայթերի և ներքին ահեղ ու արդար դատաստանի վերաբերմամբ: Սրանք համաշխարհային գրականությունը զարդարող էջեր են:

Ավետիք Իսահակյան

Դու եկել էիր հին Ավարայրից,
Քո ձեռքերի մեջ թուրն էր Վարդանանց,
Դու եկել էիր հինգերորդ դարից,
Ավանդում էիր մեր փառքը անանց:

Համո Սահյան

Դերենիկ Դեմիրճյանը հոգեբանական վերլուծության վարպետ է, ունի դիտող սուր աչք, թափանցող միտք, օժտված է հումորով, նրա լեզուն յուրահատուկ է՝ անհատական մի ոճ, որ գեղեցիկ է ինքնին, հարուստ՝ ինքնուրույն պատկերներով, անսպասելի փոխաբերություններով, թանավոր դարձվածքներով:

Ավետիք Իսահակյան

Երբ նայում եմ Հային, ինձ թվում է, թե նրա վիրավորանքը այն արծվի վիրավորանքն է, որին ցած են բերել բարձր լեռներից: Թպրտում է, ընկնում քարերի մեջ, թևերը կոտրում: Չի սիրում ո՛չ ստրկություն, ո՛չ երջանկություն, գերադասում է տառապանք և ազատություն: Մաղձոտ է, մեկուսի, բայց չունի ատելություն, որ բարձր լեռներին անծանոթ զգացում է:

Գերի արծվի խոր վիշտն է իր սրտի մեջ: Սա Հայկն է, որին զրկել են իր կյանքի միակ պայմանից՝ ազատությունից: «Ոչինչ չեմ ուզում ձեզնից, — ասում է նա իր նեղիչներին, — ձեզ լինի ձեր լուծը, ձեզ լինի ձեր երջանկությունը, գնացե՛ք, ապրե՛ք խաղաղ և երջանիկ: Եթե դուք սիրում եք կյանքը, ես սիրում եմ կյանքից ավելի թանկ բանը՝ Ազատությունը...»:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Հայ գրականության համար ինչո՞վ է նշանավոր Դերենիկ Դեմիրճյանը:
2. Համացանցում գտի՛ր լրացուցիչ տեղեկություններ Դերենիկ Դեմիրճյանի ու նրա երկերի մասին և պատմի՛ր դասընկերներիդ:
3. Դասընկերներով հայթայթե՛ք նշանավոր ասույթներ՝ քաղված Դերենիկ Դեմիրճյանի երկերից:
4. Կարդա՛ Դ. Դեմիրճյանի «Ավելորդը» պատմվածքը և համեմատի՛ր քո կարդացած այլ պատմվածքների հետ:
5. Կարդա՛ նաև Դերենիկ Դեմիրճյանի «Քաջ Նազար» կատակերգությունը:

ԱԼԱՆԱ ԾԱԵՐ

ԱՌՅՈՒԾԱՁԵՎ ՄՀԵՐ

Մահերը հազիվ տասնհինգ տարեկան էր, երբ Սասունում հացի թանկություն ընկավ: Ժողովուրդը, որ մեռնում էր սովից, եկավ, բռնեց Մահերի դուռը.

— Մահե՛ր, աստծո՛ւ սիրուն, մեզ մի ճա՛ր արա, վերև՝ աստված, ներքև՝ դու:

Մահերը կանչեց Քեռի Թորոսին.

— Քեռի՛, ինչո՞ւ է հացը պրծել:

— Մհե՛ր: Սասունը վար ու ցանք չունի: Մեր հացը գալիս է դրսից: Մարդակեր մի առյուծ կտրել է ճամփան: Հաց բերող չկա:

— Քեռի՛ Թորոս, առյուծն ի՞նչ է:

— Գազան է. ասում են՝ գազանների թագավորը:

— Մարդկանց հեռվի՞ց է ուտում, թե՞ մոտենաս, նոր կուտի:

— Չէ՛, մոտենաս, նոր կուտի:

— Առավոտյան կգնամ այդ առյուծի վրա կռիվ:

— Մհե՛ր, չգնա՛ս, քեզ կբռնի, կպատառոտի:

Առավոտ վաղ Սասունում ինչքան հեծյալ կար, Մհերի հետ գնացին առյուծի վրա: Առյուծը, պոչը գետնին խփելով, փոշի անելով, գալիս էր: Եկավ կանգնեց Մհերի և նրա զորքի դիմաց: Այնպես էր մռնչում, որ սար ու ձոր դմբդմբում էին:

— Հացն ու գինին, տեր կենդանին, — ասաց Մհերը. — Ով առյուծին զարկի թրով կամ գուրզով, ես առյուծին կթողնեմ, նրան կսպանեմ: Ես մոր բերած եմ: Առյուծն էլ է մոր բերած: Առյուծը զենք ու զրահ չունի, ես էլ իմ զենքն ու զրահը կթողնեմ գետնին, առյուծի հետ կբռնեմ գոտեկռիվ:

Զենքն ու զրահը հանեց, թևերը քշտեց, մեկ ձեռքով բռնեց առյուծի վերի ծնոտը, մյուսով՝ վարի ծնոտը, մեջտեղից ճղեց ու գցեց գետնին:

Համբավը տարան Դեղձուն–Ծամին, թե աչքդ լո՛ւյս, քո Մհերը այն ահռելի առյուծին սպանեց:

Մհերի անունը դրեցին Առյուծաձև Մհեր:

Սասունցիները հավաքվեցին, եկան Մհերի դուռը.

— Առյուծաձև՛ Մհեր, հիմա դու ես մեր թագավորը, Սասունը կառավարի՛ր:

Դեղձուն–Ծամը որդու երեսը համբուրեց, հանեց Սասնա տան զենքերն ու զգեստները, տվեց Մհերին.

Մհերը հագավ հոր զգեստներն ու զենքերը, հեծավ, գնաց ման գալու Սասնա սարերը, իր թագավորությանը աչք ածելու:

Թշնամիները կորագլուխ հեռացան Սասնա սարերից: Հիմա Սասնա երկրին կար տեր ու պաշտպան:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ էր Սասունում հացի թանկություն:
2. Նկարագրի՛ր առյուծին պատռող Մհերին այնպես, ինչպես պատկերացնում ես:

ԴԱՍ 4

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ

Հզոր է Ակսելի մեջ բնապաշտական զգացողությունը. նա ապրում է, զգում է հողը, տարերքը, եղբայրական մի բարությամբ է համակված ղեպի բույսերը, թռչունները, կենդանիները...

Ավետիք Իսահակյան

Իսկական անունը՝ Ալեքսանդր Թևոսյան: Ծնվել է 1899 թ. հունիս 13–ին Գորիսում: Ավարտել է Գորիսի ծխական դպրոցը 1910–ին: 1910–1917 թթ. սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում:

Որոշ ժամանակ մանկավարժական աշխատանք է կատարել Զանգեզուրի Լոր գյուղում: 1917–1918 թթ. որպես շարքային զինվոր մասնակցել է թուրքերի դեմ Աշկալայի, Իլլիջայի, Արդահանի կռիվներին և Սարդարապատի ճակատամարտին: 1919–ից սովորել է Թիֆլիսի պոլիտեխնիկական ինստիտուտում, 1920–1923 թթ.՝ Խարկովի գյուղատնտեսական ինստիտուտում: 1924–1926 թթ. որպես գյուղատնտես աշխատել է Գորիսում, 1926–1931 թթ.՝ Երևանում: 1936–ին բանտարկվել և 1937–ի հուլիսի 18–ին Ստալինի ցուցումով գնդակահարվել է որպես ազգայնական:

Գրել է պատմվածքներ (հիմնականում ամփոփված են «Մթնաձոր», «Սև ցելերի սերմնացանը», «Անձրև» ժողովածուներում), վիպակներ («Հովնաթան Մարչ», «Կյորես»), անավարտ վեպեր («Կարմրաքար», «Որդի որոտման», «Խաչատուր Աբովյան»), կինոռեմագրեր («Սև թևի տակ», «Արևի զավակը», «Զանգեզուր» և այլն), ակնարկներ, գրաքննադատական, հրապարակախոսական, գյուղատնտեսական հոդվածներ: Աշխարհաբարի է փոխադրել Վարդան Այգեկցու առակների «Աղվեսագիրք» ժողովածուն:

Հատկապես աչքի է ընկնում նրա քնարական արձակը՝ «Ալպիական մանուշակ», «Միրհավ», «Խոնարհ աղջիկը», «Ծիրանի փողը» և այլն:

Նրա պատմվածքների հիման վրա նկարահանվել են «Լուսաբացից առաջ» և «Այս կանաչ, կարմիր աշխարհը» ֆիլմերը:

ԾԻՐԱՆԻ ՓՈՂԸ
(հատված)

Հանդարտվում էր Ջյանբերդ գյուղի երեկոյան աղմուկը: Լեռան սպիտակ սառույցները լույս էին տալիս: Մարգազետինները ծխում էին դաղձի բույր:

Ներքևի կտուրի վրա հավաքվել են գյուղի հոգնած մշակները: Ես բարձրանում եմ կտուրը:

— Հազրո՛, — կանչում է մի մշակ, — նվագե՛ս:

Ուրեմն այս բարձրահասակ մարդն է Հազրոն, որի մասին պատմել էր ինձ իմ վաղեմի ծանոթը:

Հազրոն մոտենում է ինձ և մեկնում ձեռքը:

— Բարի տեսանք:

Նա ունի լայն ճակատ, որ լուսնի տակ պղնձագույն է երևում, ձերմակ մազեր և կեռ արծվաքիթ: Նրա աչքերը փայլում են երիտասարդական ավյունով:

— Կպարե՞ք, — նայում է մյուսներին:

Ես երբեք, երբեք չեմ մոռանա այդ լուսնյակ գիշերը բարձր լեռան մի գյուղում, Հազրոյի տան կտուրը, նրա նվագը և հսկաների հին պարը:

Ցնից բերեցին սրինգը՝ այն ծիրանի փողը, որ քիչ ավելի երկար էր մեր հովիվների սովորական սրինգից: Նա կանգնեց կտուրի ծայրին, փողի բերանը դարձրեց դեպի գյուղի կողմը, և հետզհետե, ինչպես լուսաբացը լեռներում, զարթնեց յարխուշտան: Նա սկսեց դանդաղ և մեղմ, հետո ձայները զորացան, արագացավ չափը: Հետո վայրենի կանչով վեր թռավ մեկը, նրան հետևեց երկրորդը, երրորդը, և շուտով նրանց երկու շարքը, ինչպես երկու վիթխարի ապառաժ, զարնվեցին իրար՝ ձեռքերով, ծնկներով և կրծքով: Դողում էին կտուրի գերանները, կարծես իրար վրա արշավում էին բանակներ: Նրանց ձեռքերի հարվածը պողպատի ձայն էր հանում, և կայծեր էին թռչում նրանց բորբոքված աչքերից:

Հարևան կտուրների վրայից, տների բակերից կանայք և աղջիկները դիտում էին լեռնականների պարը: Երբ մի շարքը մյուսին ետ էր մղում ձեռքերի հարվածով, կարծր կրծքերի զարկով, նահանջողները արշավում էին նոր թափով, որպեսզի վրիժառու լինեն ամոթի և պարտության համար:

Կոմիտասի երգերի և Մարտիրոս Սարյանի գույների մասին խոսում են որպես բառերով անթարգմանելի հրաշքների մասին: Բայց դա այնքան էլ ճիշտ չէ: «Հայաստանում կա մի գրող, որի բառերը երգում են կոմիտասյան հանգով և փայլատակում Սարյանի կտավների բոլոր գույներով: Դա Ակսել Բակունցն է: Նա մեր արձակի ամենատաղանդավոր ներկայացուցիչն է»:

Ավետիք Իսահակյան

Ակսել Բակունցի տուն-թանգարանը Գորիսում

Հուշակոթող Երևանում՝ Ակսել Բակունցի տան մոտ քանդակագործ՝ Է. Աղայան

Պատմության և բնության զարմանալի ներդաշնակ համաձայնությամբ էր կյանքի կոչված նա: Մշտասևեռ, ներհուն ու թախծոտ հայացքով նա ասես հավաքել էր ուզում նորածագ արևի փրկարար զորությունը և կիզել ինչ-որ անլուծելի գաղտնիքների հանգույցը:

Հավերժ սիրելի և աչքերիս առջև կենդանի կանգնած Ակսելի յուրաքանչյուր բառի ու դարձվածքի մեջ մերթ մրմնջում են, մերթ երգում Հայաստան աշխարհի երկնահաս լեռները ու անդնդախոր վիհերը, անհուն երկինքն ու արագավազ գետերը, և այդ ամենից վեհ ու պայծառ՝ Հայաստանի հրաշք արևը:

Ավետիք Իսահակյան

Հազրոն նվագում էր իր ծիրանի փողը, նվագում էր նոր զվարթությամբ այն երգը, որ նվագել էր իր հայրենի քարանձավներում, այնտեղ, ուր ամպերը հյուղակներից ցածր են լողում, և երբ զարկում է կայծակի լախտը, մի վայրկյան բռնկվում են ձորերը:

Նվագն ավարտվեց: Մարդիկ ցրվեցին: Կտուրի վրա մնացինք Հազրոն և ես: Լուսնի տակ դիտում էի նրա կարմրավուն փողը, որ կարծես ձուլված էր ծանր մետաղից: Ես բռնում էի այդ փողը գիշերային զովի դիմաց, և փողը մեղմ քամուց մետաղի ձայն էր հանում:

Իսկ Հազրոն պատմում էր, որ իր կյանքում ամենածանր հարվածը եղել է կնոջ մահը: Աղջիկն ամուսնացել է դաշտի գյուղում: Պապի մոտ հաճախ է լինում փոքրիկ տղան՝ նրա առաջին թոռը:

Երբեմն նա իջնում է լեռան գյուղից, վերցնում է չոր ցախ և կնոջ գերեզմանի գլխավերևը կրակ վառում: Նա նստում է այնքան, մինչև հանգչում է կրակը, հետո ծիրանի փողով տխուր նվագում է այն երգերը, որ նվագում էր իրենց հեռու երկրում, որտեղ ինքը հովիվ էր, կինը՝ գյուղական աղջիկ: Հետո թեթև հոգով գնում է աղջկա տունը, լսում է նրա տան աղմուկը, խաղում է թոռների հետ և մենակ ճանապարհ ընկնում դեպի լեռը՝ դեպի լեռան գյուղի իր պարզ խրճիթը:

— Հազրո՛ն, դու լա՞վ էիր ապրում քո գյուղում:

— Մեր քարափների վրա՞... — և լռում է: — Հեյ վա՜խ ջահելություն, թռար...

Եվ նորից վերցնում է փողը: Նվագում է, այս անգամ ոչ թե լեռնականների կորովի երգը, որից բորբոքվում է արյունը, այլ հովվական պարզ մի երգ: Կա թախիծ այդ երգի մեջ, կարծես մեկը մոլորվել է խոր ձորերում և տխուր հեկեկում է, կա և ջինջ ուրախություն, երբ լեռների վրա ծագում է արևը, ելնում է ծուխը, մշակը գնում է աշխատանքի, վերջապես կան և կարոտի հնչյուններ՝ վերադարձի և վերջին հույսի:

— Գոնե մի անգամ գնամ տեսության մեր քարերին, մեր ձորերին, մեր Մարութա բարձր սարին: Առնեմ իմ ծիրանի փողը, ժողովեմ մարդկանց, նստեմ անուշ խոտերի վրա, գառների պես մարդիկ նստեն իմ չորս բոլորը, երգեմ նրանց խաղաղության իմ երգերը, մարդիկ եղբայրների պես գրկեն իրար, չլինի

ո՛չ տեր, ո՛չ մշակ, ո՛չ թուր, ո՛չ բռնություն: Փչեմ իմ ծիրանի փողը, էլի ծուխը բարձրանա երդիկներից, խմեմ մեր լույս աղբյուրներից, իմ քրտինքը կաթա մեր քարերի վրա, մեր բարձր սարի ամպը թող լիզի իմ սպիտակ ոսկորները...

— Հազրո՛, իսկ ո՞ւմ կտաս քո ծիրանի փողը:

— Իմ փողը կտամ իմ քաջարծիվ թոռնիկին:

Ջյանբերդ... Ջյանբերդ...

Դու դառնում ես անպարտելի ամրոց, քո բարձր լեռները զարթնել են, և քո լանջերին հնչում են հաղթության երգերը:

Մի վիթխարի ծիրանի փող առանց հին ահի և նոր խնդությամբ հնչեցնում է մեր արդար երգերը:

.... Եվ բառերի համար քո մարմարյա,
Հնամենի, բուրյան, որպես մեր հին
Քարաքանդակ անդուռ մատուռների
Անջնջելի գրերն հնադարյան ....
Քո «Միրհավի» համար և լուսեղեն ....
«Ալպիական ծաղկի» այն բուրավետ,
Որ բուրելու է հար աննյութեղեն....
Այս ամենի համար և «Ծիրանի»
Հազարամյա փողի համար քո այն ....
Ես քեզ օրհնում եմ արդ իմ անաղարտ երգով...

Եղիշե Չարենց

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Հայ գրականության համար ինչո՞վ է նշանավոր Ակսել Բակունցը:
2. Համացանցում գտի՛ր լրացուցիչ տեղեկություններ Ակսել Բակունցի ու նրա երկերի մասին:
3. Դասընկերներով հայթայթե՛ք նշանավոր ասույթներ՝ քաղված Ակսել Բակունցի երկերից:
4. Կարդա՛ Ակսել Բակունցի «Միրհավ» պատմվածքը և համեմատի՛ր քո կարդացած այլ պատմվածքների հետ:
5. Կարդա՛ նաև Ակսել Բակունցի «Խաչատուր Աբովյան» անավարտ վեպի «Լիբեր Արմենիեր» հատվածը:

ԱԼԱՆ ԾԻԵՐ

ԱՐՄԱՂԱՆ

Մի օր Քեռի Թորոսն ու մյուս իշխանները եկան Դեղձուն–Ծամի մոտ.

— Դեղձո՛ւն տիկին, Սանասարի որդին մեծացել է, պիտի ամուսնացնենք:

— Ես էլ այդ մտքին եմ:

— Մանազկերտի Թևաթորոս թագավորը մի լավ աղջիկ ունի՝ անունը Արմաղան, — ասաց Քեռի Թորոսը: — Այդ աղջիկն ուզենք Մհերին:

Խնամախոսները գնացին Մանազկերտ:

— Քեռի՛ Թորոս, — ասաց Թևաթորոսը, — որ դուք իմ դուռն եք եկել, պատի՛վս վկա, աղջիկս ձեզ մատաղ կանեի, բայց ահա եղավ յոթ տարի՝ Սպիտակ դևը փախցրել է իմ աղջկան: Թող Մհերը Արմաղանին գերությունից ազատի, իրեն արժանի է:

Սպիտակ դևը Խլաթի թագավորն էր: Երբ լսեց, որ Սասնա Մհերի անունն օրեցօր բարձրանում է աշխարհում, մտածեց. «Օրերից մի օր այդ Սասնա ծուռն ինձ վնաս կտա, Խլաթը կվերցնի»: Մի թուղթ գրեց, տվեց Քամի կտրիճին, ուղարկեց Սասուն: Այնտեղ գրած էր. «Մհե՛ր, դու պիտի գաս ինձ հետ կռիվ, թե չէ Սասունը կավերեմ, քո ժողովուրդը կտանեմ գերության»: Մհերը թուղթը կարդաց, ասաց.

— Լա՛վ, Սպիտակ դևին ասա՛, շուտով գալիս եմ:

Գնաց տուն, հագավ հոր զգեստներն ու զենքերը, հեծավ Քուռկիկ Ջալալին, մոր ձեռքը համբուրեց, քշեց: Հասավ Սպիտակ դևի արոտավայրերը: Այդ օրերին Սպիտակ դևը եկել էր հանդը:

Մհերը ծարավել էր: Երկու դև–հսկա մի աղբյուրի վրա գոմեշի տիկը ջրով լցրել, կանգնել էին: Մհերը բարև տվեց.

— Կթողնե՞ք՝ աղբյուրից մի պուտ ջուր խմեմ:

— Չէ՛, այս աղբյուրը Սպիտակ դևինն է, հրաման չկա, որ ուրիշ մարդ այս աղբյուրից խմի:

— Մի պուտ ջո՛ւր տվեք: Ճամփորդ մարդ եմ:

— Չէ՛, — ասին, — չի լինի:

Մհերի համբերությունը հատավ, պահապաններից մեկին սպանեց, մյուսն էլ վիրավոր փախավ:

Մհերը մի կուշտ ջուր խմեց ու դևի արյան հետքերով գնաց հասավ մի մեծ քարայրի մոտ: Քարայրից բոց էր դուրս գալիս: Քարայրի առջև ծառին կապած հուր–հրեղեն մի աղջիկ դևի արյունն էր լվանում: Մհերը դևին կապեց ու դրեց մի մեծ քարի տակ, ապա այդ հուր–հրեղեն աղջկա կապերն արձակեց:

Աղջիկը խորունկ ախ քաշեց.

— Ա՛խ, այս յոթ տարի է՝ տանջվում եմ Սպիտակ դևի ձեռքին: Այս անիրավը եկավ մեր Մանազկերտի վրա կռիվ: Ինձ փախցրեց, բերեց այստեղ, ուզեց՝ ինձ իր կինը դարձնի: Բայց աստված ինձ ուժ տվեց, ես դևին անձնատուր չեղա: Երազի մեջ ինձ ասին՝ շատը գնաց, քիչը մնաց. Մհեր անունով մի կտրիճ կգա, Սպիտակ դևին կսպանի, ինձ գերությունից կազատի:

— Ո՞ւր է Սպիտակ դևը, — հարցրեց Մհերը:

— Քնել է: Ինն օր է անցել: Այսօր կզարթնի:

Մհերը գնաց անտառ, մի վիթխարի կաղնու տակ սպասեց, մինչև Սպիտակ դևն արթնանա: Մհերի բնությունում չկար զարկել քնած մարդուն:

Սպիտակ դևը քնից ելավ, կուշտ կերավ, խմեց, տրամադրությունը լավացավ, ու սարսափելի ծարավեց: Ջուր բերող դևերը չէին գալիս: Հեծավ ձին, քշեց աղբյուրի կողմը: Մեկ էլ տեսավ՝ ահագին կաղնու տակ նստած է սարի պես մի մարդ, կողքին էլ արածում է հրեղեն ձին: Սպիտակ դևը գոռաց.

— Է՛յ, հողածի՛ն, հավքն իր թևով, օձն իր պորտով չեն հանդգնում իմ սարերին մոտենալ: Դու ի՞նչ սրտով ես իմ սահմանն անցել:

— Կանչել էիր Մհերին կռիվ: Մհերը ես եմ:

Սիպտակ դևն այդ անունը որ լսեց, ահից ոտքն ու ձեռքը թուլացան, ասաց.

— Վա՛յ, դու բարո՛վ եկար, Մհե՛ր, հազա՛ր բարով: Վե՛ր կաց՝ գնանք իմ վրանը, կերուխում անենք մինչև լույս. աստված կա՛մ ինձ կտա, կա՛մ քեզ:

— Չէ՛, մեր պապերը մեզ այնպես են խրատել, որ թշնամու դեմ ելնելուն պես պիտի կռվենք:

Առյուծաձև Մհերն ու Սպիտակ դևը ձիերը հեծան ու քշեցին իրար վրա: Երկու օր ու երկու գիշեր ձիերով կռվեցին: Գետինը ճկվում էր նրանց ոտքի տակ: Սար ու ձոր դմբդմբում էին: Կարիճները ձիերից իջան ու բռնեցին գոտեկռիվ: Օրվա վերջում Մհերը Սպիտակ դևին սպանեց, Արմաղանին ձիու վրա առավ ու սլացավ Սասուն: Մհերը տուն հասավ այն պահին, երբ Քեռի Թորոսն ու Ջենով Օհանը Մանազկերտից նոր էին դարձել:

Շատ ուրախացան: Համբավը տարան Թևաթորոս թագավորին: Նա ու իր իշխանները ձիերը հեծան, քառատրոփ եկան Սասուն, այն լույս–լուսեղեն Արմաղանին պսակեցին Առյուծ Մհերի հետ, յոթ օր, յոթ գիշեր հարսնիք արին, եղնիկի միս կերան, նռան գինի խմեցին, ուրախացան:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որտե՞ղ էր գերի ընկել Արմաղանը:
2. Նկարագրի՛ր Մհերի ու Սպիտակ դևի գոտեմարտը այնպես, ինչպես պատկերացնում ես:

ԴԱՍ 5

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ

Ակսել Բակունցի կիսանդրին Գորիսում՝ Բակունցի անվան հրապարակում
քանդակագործ՝ Արա Հարությունյան

Մեր հին շինարար վարպետները վանքերի համար ոչ թե վիթխարի ու բազում զանգեր էին անում, այլ զգայուն արձագանքիչներ. ոչ թե նախշազարդում էին վանքերն ու իջևանատները, այլ միակ զարդը հնչեցնում էին զարդախմբերի ուժով: Բակունցն այդ վարպետների զուգահեռ սկիզբն է մեր արձակի մեջ:

Հրանտ Մաթևոսյան

ԱԼՊԻԱԿԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ
(հատված)

Կաքավաբերդի գլխին տարին բոլոր ամպ է նստում, բերդի ատամնաձև պարիսպները կորչում են սպիտակ ամպերի մեջ: Հեռվից ավերակներ չեն երևում, և այնպես է թվում, թե գոց են ապարանքի երկաթե դռները, աշտարակի գլխից մեկը ահա ձայն է տալու քարափը բարձրացողին:

Իսկ երբ քամին ցրում է ամպերը, երևում են աշտարակի խոնարհված գլուխը և կիսով չափ հողի մեջ խրված պարիսպները: Ոչ մի երկաթյա դուռ, և ոչ մի պահակ՝ աշտարակի գլխին:

Լռություն կա Կաքավաբերդի ավերակներում: Միայն ձորի մեջ աղմկում է Բասուտա գետը, ասես նրա սպիտակ փրփուրի տակ ոռնում են հազար գամփռներ և կրծում քարե շղթաները:

Պարիսպների գլխին բույն են դրել ցինը և անգղը: Հենց որ պարիսպների տակ ոտնաձայն է լսվում, նրանք կռնչյունով աղմկում են, թռչում բներից և ահարկու պտույտներ անում բերդի կատարին: Ապա բարձրանում է արծիվը՝ կտուցը կեռ թուր, մագիլները սրածայր նիզակներ, փետուրները պողպատե զրահ:

Կաքավաբերդի բարձունքի միակ ծաղիկը ալպիական մանուշակն է՝ ցողունը կաքավի ոտքի պես կարմիր, ծաղիկը ծիրանի գույն: Քարի մոտ է բուսնում ալպիական մանուշակը, պարիսպների տակ: Արևից քարերը տաքանում են, և երբ ամպերը ծածկում են քար ու պարիսպ, մանուշակը թեքվում է, գլուխը հենում քարին: Ծաղկափոշու մեջ թաթախված գունա-

վոր բզեզին մանուշակը ձոձք է թվում, աշխարհը՝ ծիրանագույն բուրաստան:

Ներքևը՝ ձորում՝ Բասուտա գետի մյուս ափին՝ քարաժայռերի վրա, թառել են մի քանի տներ: Առավոտյան ծուխ է ելնում երդիկներից, ձգվում կապույտ երիզի նման և հալվում ամպերի մեջ: Հոգ կեսօրին գյուղում կանչում է աքլորը, նրա կանչի հետ պառավ մի շինական ձեռնափայտով ավազի վրա նշաններ է գծում, նշանների հետ փորփրում գլխով անցածը:

Եվ գյուղում, և բերդի գլխին ժամանակը սահում է դանդաղ, տարիները նույն ծառի միանման տերևներն են: Դրա համար էլ խառնվում է ծերունու հիշողությունը: Գետն աղմկում է առաջվա հանգով, նույն քարերն են, և նույն արծիվը:

* * *

Արև մի կեսօր Կաքավաբերդի քարափով բարձրանում էին երեք ձիավոր: Ոչ միայն զգեստից, այլև ձի նստելուց երևում էր, որ առաջին երկու ձիավորը քաղաքի մարդիկ են և չեն տեսել ո՛չ Կաքավաբերդը, ո՛չ նրա քարափը:

Երրորդ ձիավորը նրանց ուղեկցում էր, և մինչդեռ առաջինները պինդ բռնել էին ձիերի գլխից, համարյա թե կռացել՝ հավասարակշիռ մնալու, վերջին ձիավորը քթի տակ մռմռում էր մի երգ՝ մելամաղձոտ ու հուսահատ, ինչպես ամայի ձորը, տխուր քարափը և հեռավոր գյուղը:

Առաջին ձիավորը աչքը պարիսպներից չէր հեռացնում: Նրա գլխում բերդի պատմությունն էր, մագաղաթյա մատյաններում գրած խոսքերը իշխանական օրերի մասին, երբ զրահապատ ձիերի սմբակները դոփում էին երկաթյա մուտքի առաջ: Նրա ուսյալ աչքերը տեսնում էին զրահավորներին, մագաղաթյա մատենագրին՝ եղեգնյա գրչով նրանց գովքը հորինելիս, և նա լսում էր հնօրյա ձիերի դոփյունը: Ինչ դժվար էր նրա համար քարափը, որով քարայծի նման մագլցում էին երբեմնի տերերը:

Երբ հասան վրաններին, առաջին ձիավորը շարունակեց ճանապարհը: Նա փնտրում էր հին ճանապարհը և չէր տեսնում վրանների առաջ՝ մոխրի մեջ խաղացող կիսամերկ երեխաներին:

Բակունցը մեր արձակի ամենատաղանդավոր ներկայացուցիչն է: Նրա ստեղծագործությունների վրա անհատական կնիք է դրված: Այնպես նուրբ են հյուսված նրա պատմվածքները, կարծես երազ ես տեսնում, այնպես կախարդորեն հալվում են իրար մեջ անցյալն ու ներկան, որ հուշը դառնում է ներկա ու իրական, ներկան դառնում է երազ, անդրաշխարհային:

Ավետիք Իսահակյան

Քնարական էր ոչ միայն իր գրքերում, այլև կյանքում: Մոլորություններ չուներ, եթե չհաշվենք ծխախոտը... Ամենամեծ «անկարգությունը», որ նա կարող էր թույլ տալ, այն էր, որ փողոցում կկռանար, կվերցներ մի հողակոշտ և ազահաբար կհամբուրեր.

— Ոչ մի հող այսպես չի բուրում, չէ՞...

Ես հաճախ ուշ գիշերներին անցնում էի այն տան մոտով, ուր ապրում և ստեղծագործում էր մեծ, անկրկնելի, եղերական Ակսել Բակունցը: Նա հիմա առասպել է ու երգ: Փողոցից այլևս չես տեսնի նրան իր համեստ, փոքրիկ սենյակում՝ նստած իր գրասեղանի մոտ, գրելիս կամ կարդալիս... Ես վերջին անգամ նրան տեսա, երբ նա երեսունյոթ տարեկան էր, և այդպես էլ մնաց իմ հուշերում...

Գուրգեն Մահարի

Գլխարկով երկրորդ ձիավորը Կաքավաբերդի գլխին հնություններ չէր որոնում: Նրա ամբողջ հարստությունը ծոցի հաստ տետրն էր և սրածայր մատիտը: Հերիք էր՝ աչքն ընկներ մի դեմքի, տեսներ գեղեցիկ մի անկյուն, մամռապատ մի քար, որ թղթի վրա մատիտով նկարեր այն, ինչ տեսել էին նրա աչքերը:

Առաջին ձիավորը հնագետ էր, երկրորդը՝ նկարիչ:

Երբ ձիավորները հասան վրաններին, շները հարձակվեցին նրանց վրա: Մոխրի մեջ խաղացող երեխաները տեսան, թե ինչպես շները հաչելով վազեցին ձիերի վրա: Երրորդ ձիավորն իզուր էր մտրակով փորձում շներին հեռացնել: Շները հաչելով մինչև բերդի պարիսպները ուղեկից եղան ձիավորներին, հետո իրար հետ խաղալով վերադարձան:

Կաքավաբերդի քարերն ասես կենդանացել ու խոսում էին հնագետի հետ: Նա մոտենում էր այս ու այն քարին, կռանում, նայում, չափում, գրում, ոտքով փորում հողի փլվածքը, բաց անում հողի տակ թաղված տաշած քարի ծայրը: Նա բարձրացավ պարսպի վրա, գլուխը դուրս հանեց բուրգի դիտարանից և բարձր կանչեց, երբ բուրգի անկյունում՝ քարի վրա, տեսավ փորագիր խոսքեր:

Երրորդ ձիավորը, որ պարսպի մոտ նստած ծխում էր, հնագետի կանչից վեր թռավ: Նրան թվաց, թե օձը խայթեց այդ մարդուն:

Գլխարկով մարդը նկարեց պարիսպների փլվածքը, սրածայր բուրգը և պատերի հետքերը: Բերդի մուտքը նկարելիս մատիտը մի պահ ձեռքին մնաց, որովհետև նրա ոտնաձայնից մի անգղ կոնչյունով թռավ բնից, պտույտներ արեց բերդի գլխին:

Ձիերը, անգղների կոնչոցից վախեցած, խլշեցին ականջները, իրար մոտեցան: Եվ երբ հնագետը բուրգի ծայրից կանչեց, թե ինքը գտել է Բակուր իշխանի դամբանը, նկարիչը չհասկացավ նրա խոսքը: Աչքերն անգղների պտույտի հետ էին, նրանց թևերի հզոր շարժումի, կեռ ու արնագույն կտուցների հետ: Ինչ ահեղ թափ կար նրանց պտույտում: Մի պահ մատիտը ձեռքին մնաց և չնկատեց, թե ինչպես գլխարկը սահեց և ընկավ քարի վրա:

Բնության սիրահար էր նա, և սիրտը՝ գեղջկական կյանքի կարոտով լի...

.... Երբեմն նստում էր դիմացս և խոսեցնում մեր սարերից, տավարածների կյանքից: Լսում էր թաքուն համակրանքով, և ես զգում էի դա:

— Ա՛խ, ուրիշ բան չեմ ուզում. ձիերից իջնեինք Իշխանասարի անմահական աղբյուրներից մեկի մոտ, ծաղիկների վրա փռեինք մեր վերարկուները և խմեինք քչքչացող վճիտ ջուրը: Արցունքներ երևացին կապույտ աչքերում:
Ես ցնցված էի, վա՜հ, այսքա՜ն էլ կարոտ...

Վախթանգ Անանյան

Անմահ Բակունցը միայն մերը չէ, դարերինն է: Ակսելը մեր լեզուն կոկեց, վճիտ ջրով ցողեց ու իր՝ ակսելյանը թողեց....

Բակունցի պատմվածքներում հազիվ թե կարելի է գտնել որևէ էջ, ուր աղամանդների պես չշողշողան նրա համեմատությունները ու փոխաբերությունները, որ իր սև ցելերի սերմնացանի օրինակով այդպես առատորեն շաղ է տվել իր գրավիչ երկերում:

Հարություն Մկրտչյան

Վրաններից մի մարդ, մանգաղը գոտու մեջ խրած, գլուխը թաշկինակով փաթաթած, մահակին հենվելով, բարձրացավ բերդի քարափով և մոտեցավ ձիերի մոտ նստած պահակին: Մարդը տեսավ հնագետին մի քար տեղահան անելիս: Եվ երբ պահակին հարցրեց, թե ովքեր են եկվորները, ինչ են փնտրում բերդի ավերակներում, պահակը հանկարծակիի եկավ և պատասխանեց, որ գրքերում գրած է, թե Կաքավաբերդի գլխին թաղված են ոսկե գանձեր:

Հնձվորը դարձավ դեպի ձորը: Ու գնում էր՝ ինքն իրեն խոսելով: Ինչ կլիներ, եթե ինքը գտներ գանձը: Քանի՞ անգամ է նա նստել հենց այն քարի վրա, որ տեղահան արեց հնագետը: Եթե իմանար, ապա գանձերը կլինեին իր գրպանում: Քանի՞ կով կառներ...

Միտք էր անում հնձվորը, երբ նկատեց, որ կորեկի արտի կողքին է: Նա թիկնոցը շպրտեց, թիկնոցի հետ էլ՝ ավելորդ մտքերը, մանգաղով զարկեց մի կապ կորեկ ու կտրեց:

Բերդի քարերի մոտ բուսել էր ալպիական մանուշակ՝ ծաղիկը ծիրանի գույն: Հնագետը չէր տեսնում ո՛չ մանուշակ, ո՛չ խոտ: Նա կրնկակոխ էր անում խոտ ու ծաղիկ: Աշխարհը նրա համար ընդարձակ թանգարան էր, ուր չկար ոչինչ կենդանի: Նա պոկոտում էր քարերին փաթաթված բաղեղը, փայտի ծայրով արմատախիլ անում քարի ձեղքում բուսած մանուշակը, ձեռքով քարը շոյում և սրբում գրերի հողը:

Գլխարկով մարդը երբ նկարեց այն ամենը, ինչ հարկավոր էր հնագետին, տետրի նոր էջի վրա նկարեց և պարսպի մի մասը, ատամնաձև քարերի արանքում՝ քարե արծվի բույնը, պարսպի ոտների տակ՝ ալպիական մանուշակներ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. **Դասընկերներով վերլուծե՛ք «Ալպիական մանուշակը» պատմվածքը և քննարկե՛ք ձեր ուսուցչի հետ:**
2. **Համացանցում գտի՛ր լրացուցիչ տեղեկություններ Գորիս քաղաքի մասին և պատմի՛ր դասընկերներիդ:**
3. **Կարդա՛ նաև Ակսել Բակունցի «Խոնարհ աղջիկը» պատմվածքը:**

Բակունցը խիստ քնքուշ, զգայուն գրող է: Քնարական այն նուրբ զգացմունքը, որ Բակունցի մեջ դրսևորվում է մարդկանց հանդեպ տածած այնքան բնական ու ինքնաբուխ սիրով, առանձնակի սրություն է տալիս նրա գեղարվեստական զննումներին:

«Միրհավ» պատմվածքը ես առանց երկմտելու կդասեի Մոպասանի նմանօրինակ նորավեպերի շարքը: Ինչի՞ց է հյուսված այս նորավեպը. ծիրանի ծառերի միջից սողոսկող արևի լույսից, խաղողի հյութի բույրից, որ գալիս է այգու խորքում ծածկված հնձանից, որտեղ աշխատում է երիտասարդը: Զարմանալի ողջախոհությամբ է վերարտադրված այն տղամարդու տվայտանքը, որը, արդեն իր կյանքի մայրամուտին, սպանված միրհավի մեջ զգում է ջերմություն այն աղջկա, որը մի ժամանակ՝ երիտասարդության օրերին, անձնատուր է եղել իրեն ու ընդմիշտ մնացել իր հիշողության մեջ:

Կոռնելի Զելինսկի

Պետք է ունենալ Ակսելի վրձինը՝ կենդանի գույներով նկարելու համար այն երազկոտ գանգեզուրցուն, որն իջել էր հայրենի լեռներից, որպեսզի տասը տարվա ընթացքում բարձրանա մեր գրականության Արարատը:

Մկրտիչ Արմեն

Բակունցը ամենևին էլ տխուր գրող չէ: Նրա էջերը լեցուն են պայծառ լավատեսությամբ:

.... Ամենուրեք նա տեսնում է զարմանալիորեն բազմազան, մարդուն բերկրանք պատճառող բնության գեղեցկությունը:

Բակունցը քնարական գրող է: Նրա նկարագրությունները աղբյուրի նման խոխոջում են ոչ բարձր ձայնով, բայց և բյուրեղյա մաքրությամբ ու տիրաբար:

Վալերի Կիրպոտին

ԿՌԻՎ ՄՍՐԱ ՄԵԼԻՔԻ ՀԵՏ

Մսրա Մելիքը Մհերի համբավը լսել էր ու կատաղել: Մհերն անտեղյակ էր, որ Սասունը հարկատու էր Մելիքին, ու նրան հարկ չէր ուղարկում:

— Գնացե՛ք Սասուն, ասե՛ք Մհերին, որ ես ու ինքը պիտի կռվենք, — հրաման տվեց Մսրա Մելիքը:

Մսրա Մելիքի մարդիկ եկան Սասուն, ասացին.

— Մհե՛ր, Մսրա Մելիքը քեզնից կռիվ է ուզում:

— Կռի՞վ է ուզում: Թող գա, տեսնենք՝ մենք նրան ինչ ենք պարտք:

Ջենով Օհանն այստեղ ասաց.

— Մհե՛ր, հեծի՛ր, գնա՛ Մսրը, Մսրա Մելիքի հետ խաթրո՛վ խոսիր, խնդրի՛ր, աղաչա՛նք արա, որ մեր հարկը մի քիչ պակասեցնի: Մեր հարկը շատ է, այդքանը տալու կարողություն չունենք:

— Հայ–հա՛յ, Օհա՛ն, ես չգիտեի, դուք էլ չէիք ասում, թե մենք Մսրա Մելիքին հարկ պիտի տանք:

Մհերը հագավ, կապեց, հեծավ Քուռկիկ Ջալալին, քշեց մինչև Մսրա սահման:

Մսրա Մելիքը նստած էր դաշտում՝ իր վրանի առաջ: Հեռվից տեսավ, որ գալիս է մի ձիավոր. մի ահագին ամրոց, ամրոցի վրա նստած, գալիս է:

Եկավ, մոտեցավ, Մսրա Մելիքին բարև տվեց:

Մսրա Մելիքը ահից բարևն առնել չկարողացավ: Մտքում ասաց. «Աշխարհում այսպես մա՞րդ էլ կա»: Մսրա Մելիքը, վախը սրտում պահած, հարցրեց.

— Կտրի՛ճ, ո՞րտեղացի ես:

— Սասունցի եմ, Սանասարի տղան:

— Աա՛, — ասաց Մսրա Մելիքը, — դո՞ւք եք, որ նստում եք իմ հողի մեջ: Մհերը դո՞ւ ես:

Մհերը բարկացավ ու մտքում ասաց. «Այս անասունը չի ասում «Սասնա հող», ասում է «իմ հող»: Բայց հանգիստ պատասխանեց.

— Մհերը ես եմ:

— Ինչո՞ւ իմ հարկը չեք տալիս, նստել եք իմ հողի մեջ, իմ հարկը չեք տալիս:

— Մսրա՛ Մելիք, մենք չենք նստել քո հողի մեջ, մենք նստել ենք մեր հողի մեջ՝ մեր Սասնա տանը:

— Մհե՛ր, զորքո՞վ կռվենք, թե՞ ես ու դու:

— Զորքն ի՞նչ մեղք ունի: Կռվենք ես ու դու:

Առավոտյան Մհերն ու Մսրա Մելիքը առան

իրար: Առաջ գուրզերով զարկեցին: Ամեն մեկի մկունդը կշռում էր երեք հարյուր փութ: Արևելքում նրանց կռվի ձայնը լսող մարդիկ ասում էին. «Այս ի՞նչ ամպեր են գոռգոռում»: Արևմուտքի լսողներն ասում էին. «Երկրաշարժ է, սարեր են փուլ գալիս»:

Մհերն ու Մսրա Մելիքը տեսան, որ գուրզերով իրար հաղթել չեն կարողանում, կպան գոտեկռիվ: Հողը հերկվում էր նրանց ոտքերի տակ, ասես յոթ գութան մեկտեղ դաշտը վարում էին:

Մսրա Մելիքը տեսավ՝ Մհերը չի հաղթվում, իր ուժն էլ թուլանում է, ասաց.

— Հայ–Հա՛յ, Սասնա՛ Մհեր, իմ խելքով՝ աշխարհի մեջ ինձնից ուժեղ կտրիճ չկար: Բայց ես ու դու իրար հաղթել չկարողացանք: Արի պայման կապենք: Էլ Սասունն ինձ հարկատու չէ: Սասունը՝ քեզ, Մսրը՝ ինձ: Մի պայման էլ կապենք. ես կռվեմ՝ դու ինձ օգնության գաս, դու կռվես՝ ես քեզ օգնության գամ: Ես մեռնեմ՝ իմ թագուհին ու տղերքը հանձնեմ քեզ, դու մեռնես՝ քո թագուհին ու տղերքը հանձնես ինձ: Որ մարդիկ չասեն, թե մնացին որբ:

— Հոժար եմ, — ասաց Մհերը:

Այս պայմանները կապեցին, ամեն մեկն իր մատը կտրեց, արյուններն իրար խառնեցին, եղբայրացան: Մսրա Մելիքը Մհերին կանչեց իր պալատ, յոթ օր, յոթ գիշեր նրան թագավորական խնջույք տվեց:

Մհերը վերադարձավ Սասուն: Ջենով Օհանը կանգնած էր բերդի դռան մոտ: Իրար բարև տվին, իրար երես համբուրեցին, Ջենով Օհանը հարցրեց.

— Մհե՛ր, մեր հարկը պակասեցրի՞ր:

—Ի՛նչ հարկ, ի՛նչ բան, — ծիծաղեց Մհերը: — Մսրա Մելիքը լավ մարդ էր, մեր հարկը ինձ բաշխեց: Մենք նրա հետ եղբայրության ուխտ արինք:

Մհերը դարձավ Սասնա տան թագավոր: Շատ բարեկարգեց ու զորացրեց երկիրը: Քառասուն տարի Սասունն այնպես պահեց, որ ոչ մի դև ու թշնամի չէր հանդգնում ծուռ նայել մեր աշխարհին: Հավքը չէր համարձակվում անցնել Սասնա երկնքով, օձը չէր փորձում սողալ Սասնա հողերով:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ էին գոտեմարտում Մհերն ու Մսրա Մելիքը:
2. Նկարագրի՛ր Սասնա թագավոր Մհերին այնպես, ինչպես պատկերացնում ես:

ԴԱՍ 6

ՍՏԵՓԱՆ ԶՈՐՅԱՆ

Հայկական դպրոցները փակվելու հետևանքով անգործ հայ ուսուցիչները երեխաներ էին ընդունում և պատրաստում ամեն տեսակ առարկաներից, չնայած մեր ավանում բացվել էր արդեն ռուսական դպրոց: Այստեղ կար երկու նպատակ. նախ՝ ուսուցիչներին պահել մինչև հայկական դպրոցների բացումը և մյուս կողմից՝ երեխաներին չուղարկել ռուսական դպրոց՝ որպես բողոք:

Ստեփան Զորյան

Իսկական ազգանունը՝ Առաքելյան: Ծնվել է 1889–ի սեպտեմբերի 15–ին Վանաձորում (նախկինում՝ Կիրովական): Նախագիտելիքներ է ստացել Զաքար վարժապետի «գաղտնի դպրոցում», ապա ընդունվել է ծննդավայրի նորաբաց ռուսական ուսումնարանը: 1906–ին մեկնել է Թիֆլիս, աշխատել «Սուրհանդակ», «Մշակ» թերթերում: 1919–ին տեղափոխվել է Երևան: Եղել է Հայաստանի գրողների միության վարչության քարտուղար (1950–54 թթ.): Վախճանվել է 1967–ի հոկտեմբերի 14–ին Երևանում: Թաղված է Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնում:

Գրել է պատմվածքներ («Ցանկապատ», «Պատերազմը», «Ծովանը», «Գելի ձուտը», «Կատակ» և այլն), վիպակներ («Գրաղարանի աղջիկը», «Սարաշենի տղաները» և այլն), վեպեր («Ամիրյանի ընտանիքը», «Մի կյանքի պատմություն», «Հայոց բերդը», «Վարազդատ» և այլն), զրույցներ («Եղևնին», «Սուտը» և այլն), մանրապատումներ («Գդալը», «Գեղեցկուհիները» և այլն), հուշեր («Հուշերի գիրք»), ակնարկներ:

Գրել է նաև պատմվածքներ պատանիների ու մանուկների համար («Խուժան Արշոն», «Մի գիշեր անտառում», «Սև Սեթոն», «Շանապարհորդ Ջեկոն» և այլն), հեքիաթներ («Հազարան բլբուլ», «Ոսկին», «Հրաշալի սրինգը», «Մահակը» և այլն):

Ամենից նշանավորը նրա «Պապ թագավոր» պատմավեպն է:

Զորյանի ստեղծագործությունների հիման վրա նկարահանվել են «Ջրհորի մոտ», «Հեղկոմի նախագահը», «Խնձորի այգին» ֆիլմերը:

ԶՐՈՒՅՑ ԵՐԳԻ ՄԱՍԻՆ

Մի օր Ռոմանոսը պատմեց:

Ուսանող էի Պետերբուրգի երաժշտանոցի վերջին լսարանում, ամառային արձակուրդներին գնացի Ֆինլանդիա՝ հազար ու մեկ լճերի երկիրը տեսնելու, նրա կիրթ ժողովրդին մոտիկից ճանաչելու: Հյուրանոցներից մեկում վարձեցի մի համար և սկսեցի պարապել. փորձում էի նոր եղանակներ ձայնագրել ու հետո էլ երգում էի կամ դաշնամուր նվագում:

Ու այսպես պարապում էի մի քանի օր՝ չմտածելով՝ իմ այս աղմկոտ պարապմունքը հաճելի՞ կլինի հարևաններիս, թե՞ տհաճ:

Բայց ահա դուռս ծեծում են մի օր:

Բացում եմ: Դիմացս կանգնած է կոկ հագնված, հիսունի մոտ մի եվրոպացի:

— Կարելի՞ է, — ասում է:

— Խնդրեմ, — հրավիրում եմ նրան ներս: — Ինչո՞վ կարող եմ ծառայել:

Հարցիս պատասխանելու փոխարեն հարցնում է.

— Ասե՛ք, խնդրեմ, դո՞ւք եք երգում այստեղ:

— Այո՛:

— Թո՛ւյլ տվեք հարցնել ձեր ազգությունը:

— Ես հայ եմ:

— Հա՛յ, — զարմանում է այցելուս և նայում ինձ ոտքից գլուխ: — Դուք երգի՞չ եք:

— Ո՛չ, երգահան:

— Երգահա՞ն, — երկարեց մտքերի մեջ: — Բայց և այնպես կարո՞ղ եմ խնդրել ձեզ, որ մի երգ երգեք ինձ համար: Ես ձեր սենյակի հարևանն եմ. ամեն օր լսում եմ ձեր երգերը, և դրանք հաճելի են ինձ:

Չլինելով երգիչ և չունենալով մշակված ձայն՝ ես այնուամենայնիվ չուզեցի մերժել անակնկալ հյուրիս և, երբ նա նստեց իմ հրավերով, սկսեցի.

Կռունկ, ուստի՞ կուգա՛ս...

Այցելուս, որ սկզբում լսում էր՝ նայվածքն ինձ հառած, գլուխը կախեց և ձեռը տարավ ճակատին:

Լսում էր անշարժ, խորասույզ: Գոնե ինձ այդպես էր թվում: Այդ դիրքում մնաց մինչև երգիս ավարտը: Երբ ավարտեցի, նոր միայն գլուխը բարձրացրեց:

— Հնորհակալություն, — ասաց մի տեսակ բեկ-

Ստեփան Զորյանի տուն-թանգարանը Վանաձորում

Ոմանք ազգային ձևը համարում են միայն լեզուն: Ինձ թվում է, որ արվեստի ազգային ձևը շատ ավելի լայն հասկացողություն է, քան լեզուն. ազգային ձևի մեջ մտնում է ազգային պատմելաձևը, ազգային բնությունը, աշխարհազգացումը, հոգեբանությունը և շատ պատկերներ ու դարձվածքներ: Որքան երկը հագեցած է լինում այս առանձնահատկություններով, այնքան նա հարազատ է դառնում ժողովրդին և այնքան հետաքրքիր ու նոր՝ օտարների համար: Եթե ազգային ձևը լիներ միայն լեզուն, մենք չէինք զգա թարգմանության մեջ այս կամ այն հեղինակի ազգային առանձնահատկությունները, որոնք փայլ ու երանգ են տալիս նրանց երկերին:

Ստեփան Զորյան

Լեզուն իրոք մի զանձ է, որին չի կարող փոխարինել աշխարհի ոչ մի հարստություն: Նա ուրախության պահին բացում է մեր սիրտը, իսկ վատ տրամադրության ժամին նա է սփոփում մեզ .... ուստի իր մայրենի լեզուն վատ իմացողը կես մարդ է, չիմացողը՝ թշվառ, ծառից ընկած մի տերև, որ տարվում է ամեն մի պատահական քամուց:

Ստեփան Զորյան

ված, ես կասեի՝ տխուր ձայնով: — Ներեցեք, ես կուզեի լսել ևս մի երգ, եթե միայն կարելի է:

Ես դարձյալ չմերժեցի: Օտար մարդ է, ցանկանում է ծանոթանալ մեր երգերին... Ինչպե՞ս մերժես: Ու սկսեցի «Արազն եկավ»: Բայց դեռ մի տուն չերգած՝ այցելուս տեղից վեր կացավ ու գնաց դեպի լուսամուտը և թիկունքն ինձ արած՝ նայեց դուրս:

«Ի՜նչ անքաղաքավարություն», — մտածեցի ես, բայց շարունակեցի երգել՝ նայվածքս նրա կողմը: Երգեցի ևս մի տուն և հանկարծ ի՜նչ եմ նկատում՝ հյուրս թաշկինակով սրբում է աչքերը... Ընդհատեցի երգս:

— Ներողություն, ի՞նչ պատահեց ձեզ:

— Ձեր երգը, — այլայլված ասում է այցելուս, — ձե՛ր երգը... Երեք օր է, գիտեք, ձեր երգերը հուզում են ինձ, և ես չէի հասկանում պատճառը: Այսօր միայն իմացա, որ դուք հայ եք...

— Իմ երգե՞րը, — զարմանում եմ: — Իմ երգերն այնքա՛ն օտար պիտի լինեն ձեզ:

— Օտա՞ր... Ո՛չ, ձեր երգերը հարազատ են ինձ. այո՛, մոտ ու հարազատ...

— Ինչպե՞ս: Դուք եղե՞լ եք Հայաստանում:

— Ո՛չ, սիրելի՛ս: Իմ նախնիները եղել են Անիի բնակիչներ և Լեհաստան են գաղթել 13–րդ դարում: Ձեր ձայնի և երգի հնչյունները, ո՛չ, այդ հնչյունների արձագանքը ես միշտ լսել եմ մեր տանը և իմ հոգում... Ինձ թվում է՝ ես այդ երգերը լսել եմ վաղո՛ւց...

Այս ասելով՝ կրկին խնդրեց, որ երգեմ ևս մի երգ:

Եվ ես երգեցի...

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. **Հայ գրականության համար ինչո՞վ է նշանավոր Ստեփան Զորյանը:**
2. **Համացանցում գտի՛ր լրացուցիչ տեղեկություններ Ստեփան Զորյանի ու նրա երկերի մասին:**
3. **Դասընկերներով հայթայթե՛ք նշանավոր ասույթներ՝ քաղված Ստեփան Զորյանի երկերից:**
4. **Կարդա՛ Ստեփան Զորյանի «Հազարան բլբուլ» հեքիաթը և համեմատի՛ր քո կարդացած այլ հեքիաթների հետ:**
5. **Կարդա՛ նաև Ս. Զորյանի «Պապ թագավոր» վեպը:**

ՄՀԵՐԸ ԳՆՈՒՄ Է ՄՍԸՐ

Ժամանակ անցավ. մեռավ Մսրա Մելիքը: Նա ժառանգ չուներ:

Մսրա Մելիքի թագուհին՝ Իսմիլ խաթունը՝ ջահել ու գեղեցիկ մի կին, մտածեց. «Ինձ հարկավոր է զորեղ մի մարդ, որ իմ երկրին տիրություն անի, մեր այս հաստակող իշխաններին ճզմի: Մի թուղթ չուղարկե՞նք Սասնա Մհերին, որ ինձ հյուր գա, ինձ հետ անկողին մտնի, ես ունենամ Սասնա ցեղից մի կտրիճ տղա: Մսրա Մելիքն էր ասում. «Իսմի՛լ, եթե Սասնա Մհերի և իր ձիու սերմը չվերցնենք, Մհերի ցեղը մեր ցեղին մեծ վնաս կտա»:

Իսմիլ խաթունը մի նամակ գրեց, հանեց իր գոտիկ–լաչակը, կանչեց երկու կտրիճ, ասաց.

— Տարե՛ք Սասուն, տվե՛ք Մհերին:

Մհերը Իսմիլ խաթունի գոտիկ–լաչակը վերցրեց ու նամակը կարդաց. «Մհե՛ր, Սասունը քո ձեռքին է, Մսրա երկի՛րն էլ առ քո ձեռքը: Դու Մսրա Մելիքի հետ ուխտ ես արել, որ նրա կնիկ–տղեքը պահես: Եթե չգաս, կնիկ ես ինձնից առավել»:

— Հե՛յ, կտրիճնե՛ր, — ասաց Մհերը, — նստե՛ք, հա՛ց կերեք, ապա բարևս տարե՛ք Մսրը՝ Իսմիլ խաթունին, ասե՛ք՝ ուխտս ուխտ է մնացել, քառասուն օր հետո կգամ իր մոտ, կտեսնենք՝ ուզածն ինչ է:

Մհերը Մսրա կտրիճներին ճանապարհ դրեց, ապա գնաց, Արմաղանին պատմեց նամակի մասին.

— Մհե՛ր, մի՛ գնա, — ասաց Արմաղանը: — Իսմիլ խաթունը խաբում է քեզ: Նա քո գեղեցկությանը չի կարոտ, քո ուժն ու քաջությունն է ուզում: Գիտի քո զորությունը, կանչել է, որ քեզնից տղա ունենա, Մսրա ճրագը վառ պահի, Սասնա ճրագը մարի: Մի՛ գնա, Մսրա խաթունի համար ինձ մի՛ թող:

— Ես Մսրա Մելիքի հետ ուխտ եմ արել. ճար չկա, պիտի գնամ:

— Մհե՛ր, կանչի՛ր Սասնա տան իշխաններին, թող նրանք ասեն՝ գնա՞ս, թե՞ չգնաս:

Մհերը կանչեց իշխաններ, վարդապետներ, ազգ ու բարեկամ, պատմեց եղելությունը.

Ջենով Օհանն ասաց.

— Մհե՛ր, Մսրա խաթունը խորամանկ է, մեր Սասնա թշնամին: Խաբում է քեզ: Մի՛ գնա: Դու ժառանգ չունես, կա՛ց քո տանը, միգուցե աստված քեզ

մի լաճ պարգևի՝ քեզ փոխարինող Սասնա ապավեն:

Իշխաններն ու հոգևոր հայրերը ասին.

— Թագավո՛րն ապրած կենա, մենք իշխանություն չունենք ասելու՝ մի՛ գնա: Դու զորեղ, իմաստուն մարդ ես: Մեր փափագն է՝ ոչ միայն Մսրը, ուրիշ հողեր էլ առնես մեր ձեռքի տակ: Ուրիշ թագավորներ կռվով են երկիր առնում, Մսրը սիրով են քեզ տալիս: Ինչո՞ւ չվերցնես: Գնա՛:

— Մհե՛ր, — ասաց Արմաղանը, — Իսմիլ խաթունը կռապաշտ է, դու՝ խաչապաշտ: Մեղք մի՛ գործիր:

— Գլուխը մեռնի այն մարդու, որ իրեն ուղարկված կնոջ գոտիկը չի վերցնի, — բարկացավ Մհերը: — Ես կտրիճի խոսք եմ տվել, պիտի գնամ:

— Մհե՛ր, ես քո վրա ուժ չունեմ: Կին եմ՝ բերանս կապած: Գնա՛: Քեզ չեմ անիծի: Բայց ուխտ եմ անում. եթե գնաս, իմ հայրն ու իմ եղբայրն ես. քառասուն տարի դու իմ բարձին չես մոտենա:

Երեսունիններն օրը լրացավ, մնաց մեկ օր:

Մհերը պատրաստություն տեսավ Մսրը գնալու:

Արմաղանը սև շոր քաշեց իր ամուսնու սնարին, իր սևը ներս արեց, սիպտակը դուրս արեց, Մհերին գնաս բարով ասաց:

Մհերը հեծավ Քուռկիկ Ջալալին: Ձենով Օհանը վազեց, կախ ընկավ ձիու վզից, լաց եղավ, աղաչեց.

— Մհե՛ր, մի՛ գնա, Սասնա տան ճրագը մի՛ մարիր: Այն անառակ Մսրա խաթունը խաբում է քեզ:

Մհերի ճարը կտրեց, գուրզը թափահարեց Օհանի վրա: Գուրզի քամուց Օհանն ընկավ, ուշաթափվեց: Մհերը չիմացավ՝ ինչ աներ. ձիուց իջավ, Օհանի սիրտը մաժեց.

— Օհա՛ն, իմ մե՛ծ եղբայր, վե՛ր կաց, մի՛ սրտմտիր: Ես իմ աստծու առաջ ուխտ եմ արել. եթե չգնամ, ուխտազանց կլինեմ, կմեռնեմ:

Օհանը ելավ կանգնեց, ասաց.

— Ա՛խ, Մհե՛ր, Մհե՛ր, գնա՛: Ուր էլ գնաս, ճամփաներդ քո առջև կանաչեն, թշնամիներդ հեռու մնան, բարեկամներդ՝ մոտիկ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ էր Իսմիլը իր մոտ կանչում Մհերին:
2. Նկարագրի՛ր Իսմիլ խաթունին այնպես, ինչպես պատկերացնում ես:

ԴԱՍ 7 ՍՏԵՓԱՆ ԶՈՐՅԱՆ

ՍՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ
(հատված)

Բյուզանդիայի Մորիկ կայսրը, որ ծագումով հայ էր, իր տիրապետությանը ենթակա Արևմտյան Հայաստանը թուլացնելու նպատակով պարբերաբար զորահավաք էր անցկացնում և հայ զինվորներին ուղարկում հեռավոր վայրեր՝ կռվելու Բյուզանդիայի թշնամիների դեմ: Հայ նշանավոր իշխան Սմբատ Բագրատունին այլ հայ իշխանների հետ փորձում է չենթարկվել Մորիկին: Բայց նրանց դավադրաբար ձերբակալում են և տանում Բյուզանդիայի մայրաքաղաք: Կայսրը Սմբատին ամենախիստ պատիժն է սահմանում՝ կայսերական կրկեսում մերկ ու անզեն նետել վայրի գազանների առաջ:

Եվ ահա մի օր արյունոտ տեսարանների ծարավ, անգութ ամբոխը հավաքվել էր կրկեսում: Այստեղ էին պաշտոնյաներ և Մորիկ կայսրն իր կայսրուհու հետ:

Երբ կայսրը գլխով հավանության նշան արեց, հնչեցին փողերը, կրկեսի հրապարակի վրա մի դուռ բացվեց, և այնտեղից դուրս եկավ մի կիսամերկ, բարձրահասակ ու ջլապինդ տղամարդ: Առաջ եկավ նա դանդաղ ու համրընթաց, ջղուտ, խոշոր ձեռքերը կրծքին ծալած: Մի տասը–քսան քայլ առաջանալով՝ կանգ առավ ծանրախոհ արժանապատվությամբ և արհամարհոտ հայացքով նայեց շուրջը: Դա Սմբատ Բագրատունին էր: Նա երկար չսպասեց... Բացվեց հրապարակի դռներից մեկը, և այնտեղից կարծես ակամա դուրս եկավ մի սևամազ արջ ու հետին ոտքերը ծուռ դնելով՝ առաջացավ՝ օդը հոտոտելով:

Ստեփան Զորյանի կիսանդրին Վանաձորում

Ստեփան Զորյանը, արդարև, ժողովրդի կյանքում տեղի ունեցած կերպարանափոխությունների ու նրա պատմական ճակատագրի տարեգիրն է: Դրանով էլ նրա ստեղծագործությունն արժանացել է համաժողովրդական ճանաչման:

Սուրեն Աղաբաբյան

Ստեփան Զորյանին նվիրված նամականիշ

Սպասումից անհամբեր ամբոխը ծափահարեց գազանին ուրախ ու ցնծալի՝ ասես հաջողություն մաղթելով նրան: Եվ արջը, կարծես այդ ծափերից խրախուսված, գնաց դեպի Բագրատունին հանգիստ քայլերով, բայց ահավոր մի համարձակությամբ:

Եվ այն պահին, երբ արջը, իր որսն ուսումնասիրելով, թափ առավ հարձակվելու, Սմբատ պատրիկը, թողնելով իր արհամարհոտ դիրքը, վազեց դեպի արջը՝ ասես նրանից խուսափելու, նրա կողքով անցնելու նպատակով... Սակայն հասնելով գազանին՝ նա բարձր գոռաց նրա ականջի տակ ու բռունցքը մուրճի պես իջեցրեց նրա ճակատին:

Կատարվեց տարօրինակ մի բան. գազանը նախ մարդու գոռոցից, ապա նրա հարվածից շշմած, ետ–ետ գնաց և ընկավ հետին ոտքերի վրա: Ամբոխին թվաց, թե դա պատահմունք էր կամ արջի կողմից մի ճարպիկ հնար... Սակայն արջն այլևս չելավ տեղից. նրա մարմինը շուտով փռվեց գետնին: Ամբոխը մի «ահ» արավ զարմացած ու լռեց: Սպասեց, թե արջը կելնի՞ տեղից... Բայց շուտով կրկեսի աշխատողները եկան և արջի լեշը քարշ տալով տարան:

Մինչ Բագրատունի իշխանը ծանր շնչում էր ու մտածում, թե էլ ինչ գազան են թողնելու իր վրա, հանկարծ մի այլ դռնից դուրս վազեց մի կատաղած ցուլ, որը նախ կանգ առավ, գլուխը բարձրացրեց և դիտեց կրկեսի հարկերը, պոչը թափահարելով խփեց կողերին, ապա գլուխը իջեցնելով՝ նայեց դիմացը կանգնած զոհին ու սուրաց՝ նրան հարվածելու և տրորելու, ինչպես արել էր շատերին:

Սմբատ պատրիկը չփախավ ցուլի առջևից, ոչ իսկ փորձ արեց մի կողմ քաշվելու: Նա կանգնել էր՝ ձեռքերն առաջ պարզած, ոտքից մինչև վիզը լարված. և երբ ցուլը վրա վազեց նրան հարվածելու, Սմբատը անակնկալ բռնեց նրա եղջյուրները իր ջլապինդ ձեռքերով և ... աշխատեց ոլորել ցուլի վիզը:

Սկսվեց մի լարված պայքար: Մարդ ու ցուլ հևում, տնքում ու մռնչում էին միասին: Ցուլը ջանում էր եղջյուրներն ազատել, որ հարվածի կամ տապալի մարդուն, իսկ մարդը, մկանները լարած, ուզում էր ոլորել նրա վիզը՝ եղջյուրներից բռնած: Իրար ընկճելու մո-

լուցքով դառնում էին նույն տեղում՝ գետինը ոտքերով ակոսելով ու քանդելով: Հանկարծ կրկեսը թնդաց ցուլի ահավոր գոռոցից... Ցուլը ետ–ետ գնաց ու շրջվելով փախավ՝ գլուխն իջեցրած: Սմբատ պատրիկը նրա զույգ եղջյուրները հանել էր իրենց միջուկների վրայից, և ցավից սարսափած ցուլը փախչում էր արյունլվա գլխով: Սմբատը, ձեռքի եղջյուրները մի կողմ նետելով, վազեց ցուլի հետևից և ակնթարթորեն մի ձեռքով բռնեց նրա պոչը, մյուսով՝ ոտքի կճղակներից մեկը... Եվ ինչպես ցուլի եղջյուրները, այնպես էլ նրա հետևի մի ոտքի կճղակը մնաց Սմբատի ձեռքին: Ցուլն այս անգամ փախավ՝ վիրավոր ոտքը գետնից վեր պահած, միայն երեք ոտքով:

Ամբոխը նորից մի «ահ» արավ՝ զարմացած մարդու ուժի և հնարքի վրա, բայց համակրանք չհայտնեց՝ կայսեր ներկայությունից վախեցած: Ամենքը գիտեին, որ Մորիկը զայրանում է ուրախության ու հավանության արտահայտություններից այն դեպքերում, երբ մարդն ընկճում կամ հաղթում է գազանին:

Զարմացած հանդիսականները սպասում էին, թե կայսրն ահա հրաման կտա, որ այդ անօրինակ քաջության համար ներեն դատապարտյալին:

Բայց... Մորիկի կողմից ոչ մի նշան: Նրա երկար դեմքը, որ մորուսի պատճառով ավելի երկար էր թվում, անգամ զարմանք չարտահայտեց. վրեժխնդրության մռայլը դեռ նստած էր նրա երեսին, և Բագրատունու հաղթությունն ավելի մռայլեց նրան:

Ու ոչ միայն ներում չեղավ, այլև հայ զորավարի վրա բաց թողեցին ամեհի մի առյուծ, որը դռնից դուրս ելավ այնպես, ինչպես բոցերի խուրձը կժայթքի հնոցից: Արյան ու մահի տեսարաններ սիրող ամբոխի բերանից թռան հիացումի ու վախի ճիչեր, իսկ կայսեր և նրա պճնազարդ պալատականների դեմքով հեգնանքի նման մի բան անցավ:

Իսկ Սմբատ պատրիկը, մահն աչքի առաջ, պաղարյուն կանգնել էր կրկեսի հրապարակում ու ակնդետ հետևում էր առյուծի շարժումներին: Երբ առյուծը մարդուն զննելուց հետո թափ առավ հարձակվելու, Սմբատը կանգնած տեղից նետվեց մի կողմ՝ առյուծի աջ կողմը. բայց այն վայրկյանին, երբ առյուծը, նպա-

Ստեփան Զորյանի արվեստը պարզ է ու բնական, ինչպես ինքը՝ բնությունը: Հիրավի, նա պարզ հոգիների երգիչ է: Նա արտակարգ ձիրք ունի հասարակ մարդկանց հոգու գեղեցկությունները ճանաչելու և ճշմարտացիորեն արտացոլելու:

Աշոտ Գրաշի

Ստեփան Զորյանի դիմանկարը
նկարիչ՝ Մարտիրոս Սարյան

Ստեփան Զորյանի դիմանկարը
նկարիչ՝ Դմիտրի Նալբանդյան

Մեր տնեցիները, մեր բարեկամները հաճախ էին խոսում մեր ժողովրդի թե՛ հեռու անցյալից և թե՛ նրա ներկա ծանր վիճակից: Խոսում էին, որ մեր ժողովուրդը եղել է անկախ, ինքնուրույն և հիմա իրավազուրկ ճնշվում է օտարներից: Խոսում էին կործանված մայրաքաղաք Անիի մասին, նրա մեծ շենքերի ու հարուստ ավերակների մասին ու տխրում...

Տատս երբ նկատում էր, որ զրուցողները տխրում են հուսահատ, միշտ միևնույն խոսքերով ոգևորում էր նրանց.

— Էսպես չի մնա, ձե՛զ մատաղ: Մենք էլ մեր թագավորը ունենք: Դեռ երեխա է: Կաթողիկոսը պահում է, որ մեծանա, մեզ ազատի...

Ստեփան Զորյան

տակից վրիպած թռիչքից հետո կանգնեց թաթերի վրա, Սմբատը իսկույն նետվեց դեպի գազանը, մի ակնթարթում ձախ ձեռքով բռնեց առյուծի ականջն ու թռավ նրա մեջքին... Ապա աջով սկսեց սեղմել նրա խռչափողը... և առյուծն այլևս չկարողացավ գործի դնել ո՛չ իր ատամները, ո՛չ ճանկերը: Նա, գլուխը բարձր բռնած, վազում էր առաջ՝ կարծես մեջքն ու կոկորդը ազատելու համար: Սակայն կրկեսի լայն հրապարակում դեռ մի շրջան չարած՝ շնչահեղձ եղավ և ընկավ գետնին: Նրա հետ ընկավ և Սմբատը, որովհետև այնպես էր կպել գազանին, որ չէր կարող իսկույն ցատկել մի կողմ: Ամբոխը կարծեց, թե դա առյուծի կողմից մի հնար էր՝ իր բեռից ազատվելու: Բայց Սմբատն ընկած տեղից հանգիստ վեր կացավ, երկու ձեռքով բռնեց առյուծի գլուխը, բարձրացրեց նրան ամբողջ հասակով մեկ այնպես, որ նրա պոչը կախ ընկավ թուլացած, ապա սեղմեց նրա կոկորդը այնպես, որ գազանի լեզուն էլ կախ ընկավ ատամների արանքից: Ապա նա առյուծին զզվանքով գցեց գետնին:

Այս անգամ արդեն ամբոխը չկարողացավ զսպել իր հիացմունքը. ծափերն ու աղաղակները թնդացրին կրկեսը: Բոլորը ծափահարում էին և գոռում.

— Ներե՛լ... Ներե՛լ...

Այդ համառ աղաղակները լսելուց, թե խղճահարությունից, կամ գուցե դատապարտյալի խիզախությունից ազդված՝ շքեղահանդերձ կայսրուհին թեքվեց, բռնեց կայսեր ձեռքը և նույնպես ներում խնդրեց:

Համառ ու դաժան Մորիկը, ինքն էլ երևի զարմացած Սմբատ զորավարի ուժի և հնարամտության վրա, լսեց կայսրուհու և պալատականների խնդրանքը, գուցեն ամբոխի պահանջը և ներումի նշան տվեց:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. **Դասընկերներով հայթայթե՛ք ասույթներ Ստեփան Զորյանի մասին:**
2. **Կարդա՛ Ստեփան Զորյանի «Խնձորի այգին» վիպակը և համեմատի՛ր քո կարդացած այլ վիպակների հետ:**
3. **Կարդա՛ նաև Ստեփան Զորյանի «Հայոց բերդը» վեպը:**

ԻՍՄԻԼ ԽԱԹՈՒՆ

Մահերը լուսաբացին հեծավ ձին, քշեց Մսրա քաղաք: Ճանապարհին Արմաղանի ու Ջենով Օհանի խոսքերը միտքն ընկան, սիրտը երկտակվեց:

Երեկոյան տեղ հասավ: Մսրա խաթունը ճանապարհին մինչև մեկ ժամվա երթ գորգ էր փռել, աչքերը ներկել էր, հյուսքերը ոլորել, նստել պատուհանին: Մահերը եկավ, կանգնեց պատուհանի տակ.

— Իսմի՛լ խաթուն, ուզածդ ի՞նչ է:

— Ա՛յ Մահեր, հյուրը այդպե՞ս կխոսի: Ջիուցդ իջի՛ր, արի վե՛ր, նոր քեզ ամեն բան կպատմեմ:

— Չէ՛, հիմա պիտի պատմես: Ուխտ եմ արել՝ ձիուց չեմ իջնի, մինչև չիմանամ՝ քո ուզածն ինչ է:

—Տնաշե՛ն, ձեր երկիրը հո չի՞ քանդվի, դու կրակ տանելու հո չե՞ս եկել: Իջի՛ր ձիուց, արի վերև՛, հանգստացի՛ր, հա՛ց կեր, նոր կգնաս քո Սասունը:

— Չէ՛, այդ խոսքերդ տո՛ւր քամուն:

Իսմիլ խաթունը տեսավ՝ Մահերն ուզում է հետ գնա, իր ծառաների վրա գոռաց.

— Մենք չունե՞նք յոթ տարվա գինի, բերե՛ք:

Ծառաները մի մեծ կժով յոթ տարվա գինի բերեցին, Մահերը ձիու վրա խմեց, գլուխը պտույտ եկավ: Այդ ժամանակ Իսմիլ խաթունը հրաման տվեց.

— Բռնե՛ք Մահերի ձին:

Ծառաները սանձը բռնեցին, Մահերը ձիուց իջավ:

Իսմիլ խաթունն էլ պատուհանից իջավ, Մահերին տարավ իր պալատը, «բարի գալուստ» ասաց:

— Մահե՛ր, քեզ կանչել եմ, որ իմ երկիրը խաղաղեցնես: Յոթ իշխան իմ դեմ ապստամբել են:

— Լա՛վ, լուսանա՝ այդ իշխաններին կանչե՛ք:

Իսմիլ խաթունն ուրախացավ, ժպտաց.

— Մահե՛ր, ես քեզ իմ գոտիկ–լաչակն եմ ուղարկել: Կանչել եմ, որ գաս «ինձ մոտ»:

— Այդ մեկը չեղած բան է, — ասաց Մահերը: — Ինքդ անօրեն ես, ես՝ քրիստոնյա:

— Մահե՛ր, ես քեզ վաղուց եմ սիրել, այն օրվանից, երբ դու Մսրա Մելիքի հետ կռվեցիր: Ես քեզ եմ սպասում այսքան տարի: Դու պիտի լինես ինձ ամուսին, իմ թագավորությունը ձեռքդ առնես, կանգնես իմ թշնամիների դեմ:

Իսմիլ խաթունը քաղցր խոսքով, փաղաքշանքով ու յոթ տարվա գինով արբեցրեց Մահերին, տարավ



«իր մոտ»: Իսմիլ խաթունը հասավ իր նպատակին: Հետո իր մշակներին կանչեց, ասաց.

— Քուռկիկ Ջալալին քաշե՛ք մեր մատակների վրա: Շո՛ւտ արեք:

Մսրա խաթունը Մհերից մնաց երկուսով: Մսրա մատակները Քուռկիկ Ջալալուց քուռակ բռնեցին:

Լուսաբացին Մսրա յոթ ապստամբ իշխանները եկան Մհերի մոտ, հնազանդության երդում տվին:

Մհերը պետք է հետ դառնար Սասուն, բայց Իսմիլը չթողեց, որ նրա գինովությունն անցներ:

Ինն ամիս որ լրացավ, Իսմիլ խաթունը բերեց մի տղա: Անունը դրեցին Մսրա Մելիք:

Յոթ տարի սիրուց ու գինուց արբեցած Մհերը մոռացել էր Արմաղանին, Սասունը, ազգ ու բարեկամ: Մի օր Մհերը գալիս էր տուն, լսեց, որ Իսմիլը իր տղային ծնկների վրա թռցնում էր ու երգում.

Մսրա օջախը վառ պահես,
Հայոց օջախը մար պահես:

Մհերը դառնացավ, սրտի մեջ ասաց. «Հայ–հա՛յ, եկա այս երկիրը, Մսրա ճրագը վառեցի, Սասնա ճրագը հանգցրի»: Մտավ Իսմիլ խաթունի սենյակը.

— Իսմի՛լ, այդ ի՞նչ խրատ ես տալիս դրան: Ձվից դեռ դուրս չի եկել, և դու իրեն չարության դա՞ս ես տալիս: Որ մեծանա, հայի ճրագը հանգցնի՞:

— Լավ եմ անում: Ուրախ եմ տղայիս համար: Կմեծանա, ամբողջ աշխարհը կգավթի:

— Է՛, դու ինձնից մի տղա ունեցար, որ Սասնա ճրագը հանգցնե՞ս, որ իմ ազգը փչացնես, քոնը զորացնե՞ս: Կդառնամ, կգնամ Սասուն:

— Մհե՛ր, ես ուզում էի, որ ինձ քեզնից մի տղա ծնվեր, որ Մսրն ունենար մի զորեղ ժառանգ, որ Մսրա ճրագը վառ մնար: Ես իմ նպատակին հասա: Հիմա կուզես՝ գնա՛:

Այս խոսքերի վրա Մհերի գինովությունն անցավ, մտքում ասաց. «Ա՛խ, իմ ոտքը կոտրվե՛ր, Մսրը չգայի: Յոթ տարի օտարի արտը կանաչ պահեցի, իմ արտը չորացավ: Վա՛յ, դու այս ի՞նչ արիր, Մհե՛ր»:

Սուսուփուս դուրս եկավ Մսրա քաղաքից ու գլխիկոր դարձավ դեպի Սասուն:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ Մհերը յոթ տարի մնաց Մսրում:
2. Նկարագրի՛ր հարբած Մհերին պատկերացրածիդ պես:

ԴԱՍ 8 ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆ

Իսկական անունը՝ Կոստանդին Եղիազարյան: Ծնվել է 1885–ի փետրվարի 2–ին Համախի քաղաքում (այժմ՝ Ադրբեջանում): Սովորել է Բաքվի ռուսական գիմնազիայում, Փարիզի Սեն–Ժերմեն քոլեջում, Բրյուսելի համալսարանում: 1910–1913 թթ. Վենետիկի Մխիթարյան միաբանությունում սովորել է գրաբար ու գրական արևմտահայերեն: Մինչ այդ իր երկերը գրել և հրատարակել է իտալերեն, ֆրանսերեն: 1914–ին Պոլսում հիմնել է «Մեհյան» ամսագիրը: Հայոց մեծ եղեռնից մազապուրծ՝ մեկնել է Բուլղարիա, ապա՝ Իտալիա: 1961–ին ներգաղթել է Հայաստան: 1962–1969–ին աշխատել է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում: Վախճանվել է 1969–ի դեկտեմբերի 11–ին Երևանում:

Գրել է բանաստեղծություններ («Նամակ առ պարուհին», «Ընկուզենու տերևը» և այլն), պոեմներ («Երեք երգ՝ ասելու համար վիշտը երկրի և վիշտը երկնքի», «Ցատրագոմի հարսը», «Արա աստված», «Վահագն» և այլն), վեպեր («Բանկոոպը և մամութի ոսկորները», «Նավը լեռան վրա»), հուշագրություններ («Անցորդը և իր ձամփան», «Հռոմեական հուշագրություններ» և այլն), ուղեգրություններ («Սպանիա», «Դեպի Արարատ», «Միացյալ Նահանգներ» և այլն), խոհագրություններ («Արևմուտք», «Քաղաքներ», «Երկրներ և աստվածներ» և այլն), հոդվածներ («Հային Հիսուսը», «Հեթանոսությո՞ւն» և այլն), գրականագիտական ու արվեստաբանական երկեր:

«Երեք երգ» պոեմի հիման վրա իտալացի երգահան Օտորինո Ռեսպիգին ստեղծել է «Գարուն» օրատորիան: Օ. Ռեսպիգին և Տ. Մանսուրյանը Չարյանի մի շարք երկերի հիման վրա գրել են երգեր:

Օտարի պարտադրած գաղափարները հայերեն գրելը դեռ հայ գրականություն չէ:

Կոստան Զարյան

Լեզուն արյուն է. արյունը չի կարելի փոխել: Լեզուն ոգի է. ոգին չի կարելի աղավաղել:

Կոստան Զարյան

ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՉՈՒՄԸ
(հատված «Անցորդը և իր ճամփան» երկից)

Ովքեր ուզում են օտարանալ, բարի ճանապարհ, թող օտարանան: Արդեն հայությունը քանակ չէ, այլ որակ է:

Կոստան Զարյան



Հայոց երկիրը լեցուն է քարացած ուղտերի կարավաններով: Տեղ-տեղ բուքը շարժում է նրանց դունչը: Ձյունը նրանց ոլոր կոնակների վրա հսկա բեռներ է դիզում, մրրիկը փորում է նրանց ամայի աչքերը, և արհավիրքի օրերին, երբ փոթորիկը բարկացած ման է գալիս, նրանք դանդաղորեն տատանում են իրենց գլուխները, շարժում հսկա հոնքերը և ծռված բերաններով որոճում դարերի կատարից պոկած չոր և կարծր կյանքի խոտը:

Կոստան Զարյան

Մենք՝ հայերս, կանգնած երկու հսկա աշխարհների՝ մշակութային Արևելքի և քաղաքակրթական Արևմուտքի միջև, ի՞նչ կերպով պիտի կարողանանք իրագործել մեր պատմական ճակատագիրը:

Պիտի կառչե՞նք մեռնող եվրոպական քաղաքակրթությանը, թե՞ արևելյան մտքի նոր ճառագայթումի և ստեղծագործական նոր թափի հետ պիտի լինենք ներուժ մշակութային կենտրոն: Պիտի կրկնե՞նք մեր նախնիների սխալը, թե՞ գիտակցորեն, հերոսաբար պիտի կարողանանք, հակառակ մեզ շրջապատող անողոք պայմաններին, դրսևորել մեր ազգային եսը, ընդունել պատմությունից մեզ վիճակված խորհրդավոր, հակատրամաբանական, ճակատագրական դերը:

Մեծ մշակույթները առաջ են եկել միշտ էլ հակառակ նյութական, տնտեսական և քաղաքական պայմաններին: Մշակույթը հոգեկան արկածախնդրություն է. վսեմ մի խենթություն, որով տիեզերքը գտնում է իր իմաստը: Մշակույթը պահանջում է մեծ ձիգ, հավատք և զոհաբերություն՝ առաքինություններ, որով հայ ժողովուրդը լիովին օժտված է: Այլապես անկարելի է հասկանալ նրա ամբողջ պատմությունը, նրա դարավոր նահատակությունը, նրա թափած արյան համաշխարհային իմաստը:

Եթե հայերս կուրորեն ենթարկվենք ներկա քաղաքական պայմաններին, մեզ վիճակված է ռուսական ապագա հսկա տնտեսական կազմակերպության մեջ չնչին արտադրողի դիմազուրկ և աղքատիկ մի վիճակ:

Բավական է թեթև հայացք նետել մեր քարտեզի վրա՝ ըմբռնելու համար, որ մեր երկիրը մեծ արդյունաբերական ապագա չունի: Հայոց աշխարհը, ինչպես Հիմալայի ստորոտը և Հռոմեական բլուրները, գերազանցապես կրոնական է: Դրանք խորհրդավոր կետեր են, ուր երկրագունդը մի վայրկյան կանգ է առնում և երկար շնչում:

Մեր հոգեկան սնունդը Արարատից է գալիս՝ չոր ու ցամաք, տնտեսապես անպետք մի լեռից: Եվ իզուր չէ,

որ հայ ժողովուրդը պատմության մեջ չտեսնված չարչարանք է կրել, միլիոնավոր զոհեր է տվել, ծով արյուն է թափել այդ լեռը չկորցնելու համար:

Եթե մենք ուրանանք մեր անցյալը, դավաճանենք մեզ և ընդունենք քաղաքակրթական շուկայում մեզ վիճակված փոքրիկ խանութպանի դերը, մենք կստորագրենք մեր մահը: Հայաստանը կլինի, ինչպես այսօր, Մոսկվայի առջև դողացող մշտնջենական մուրացիկ, որը պետք ունի դրամագլխի, որպեսզի աշխատի, պետք ունի շուկայի, որպեսզի ծախսի, պետք ունի դրական գիտության, որպեսզի մտածի:

Ես մերժում եմ ստամոքսային այդ Հայաստանը:

Մեր երկիրը այն բախտավոր վայրերից է, որոնք չեն կերակրում, այլ կերակրվում են: Այդպես էր Աթենքը, այդպես էր մասամբ Հռոմը, և այդպես է Արևելքի մեծ մասը: Ուստի հայ լինելը պահանջում է մեծ ճիգ, հոգեկան կենտրոնացում, զոհաբերության ոգի, խոր հավատք և առաքելական մոլեռանդություն:

Արևմուտքը խենթացած գազանի նման քերում է երկրագնդի մակերեսը նոր գանձեր գտնելու համար և անգիտակցաբար փորում է իր գերեզմանը: 18–րդ դարից նա ժառանգել է նյութապաշտ իմացականության դյուրին զենքը, որով կարողանում է հաղթել բնության տարերային ուժերին: Նա ուրանում է հոգեկան արժեքների ավանդական շաղկապումը, մարդը իրի է վերածում, ազգությունը՝ տնտեսական ազդակի, խորհուրդը՝ նախապաշարումի: Ու իր ծոցից դուրս եկած լավագույն խորհողները վկայում են նրա մոտալուտ մահը:

Նոր մշակութային շրջանը սկսվում է Արևելքում: Չմոռանանք, որ քրիստոնեությունը առաջ եկավ Հրեաստանի ամենահետամնաց և աղքատիկ գավառի մեջ Հռոմեական կայսրության հզորագույն դարում:

Հայոց աշխարհը՝ արյունի և մահի ողբերգական այդ երկիրը, արդեն հղի է բոլոր կարելիություններով: Արարատի աստվածաշնչյան ոգին պատրաստ է ճառագայթելու նրա թաքնված ստեղծագործական թափը, հսկա սերմի նման պայթելու վրա է, ու մոտենում է դարը, երբ վերջապես հայ ժողովուրդը պիտի գտնի ինքն իրեն, կատարի իր դերը, ասի իր խոսքը:

Եթե այդ վեհատեսիլ ծերունազարդ մարդն իր ամբարած իմացությամբ և մտքի անկախ թռիչքով հարուցում է պատկառանք ու երկյուղածություն, ապա մեզ համար սրբություն ու հեռավոր առասպել դարձած մեծերի հետ ունեցած շփումների անձիգ մտաբերումները այնքան շատ են ու ազդու, որ հարուցում են մի զգացում, որ հեռու չէ երկյուղից:

Լևոն Հախվերդյան

Հայը իր հայրենիքից դուրս դաղարում է հայ լինելուց, որովհետև նա իր ազգային դիմագիծը պահում է այնքան ժամանակ, ինչքան ժամանակ որ հիշում է իր գյուղը, իր տան մոտից անցնող վտակը, բակի ընկուզենին: Ինչքան ժամանակ, որ իրեն զգում է ժամանակավոր գաղթական, վտարանդի...

Կոստան Զարյան

Մեզ վիճակված է ապրել բարձրավանդակի վրա: Մեր դաշտերը և մեր լճերը մազլցում են դեպի լեռը: Վա՜յ մեզ, եթե վար իջնենք. կընկնենք արդի քաղաքակրթության ծխնելույզի տակ, մեքենայի մաս կդառնանք կամ խանութպան:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Հայ գրականության համար ինչո՞վ է նշանավոր Կոստան Զարյանը:
2. Համացանցում գտի՛ր լրացուցիչ տեղեկություններ Կոստան Զարյանի ու նրա երկերի մասին:
3. Դասընկերներով հայթայթե՛ք ասույթներ՝ քաղված Կոստան Զարյանի երկերից:
4. Կարդա՛ Կոստան Զարյանի «Ցատրագոմի հարսը» պոեմը և համեմատի՛ր քո կարդացած այլ պոեմների հետ:
5. Կարդա՛ նաև Կ. Զարյանի «Նավը լեռան վրա» վեպը:

ԱԼԱՆԱ ԾՈՒԵՐ

ԾՆՎՈՒՄ Է ԴԱՎԻԹԸ

Ուրախ լուր տարան Արմաղանին.

— Աչքդ լո՛ւյս, Թագուհի՛, Մհերը եկավ:

Արմաղանը հրամայեց, որ դարպասները հողեն, դռները փակեն, ինքն էլ սևեր հագավ, նստեց:

Մհերը եկավ, տեսավ, շատ վշտացավ.

— Սա ի՞նչ է, տանս դռները փակված են իմ դեմ, չեն թողնում, որ մտնեմ իմ տուն: Պատճառն ի՞նչ է:

Արմաղանը պատուհանից գլուխը դուրս հանեց.

— Այն է պատճառը, որ դու իմ մարդը չես, Մհե՛ր: Քանի որ դու ինձ անպատիվ թողեցիր, գնացիր Մսրա խաթունի մոտ, էլ ինձ մոտ մի՛ գա:

Մհերը զղջումի աղերսանքով կանչեց.

— Արմաղա՛ն, դուռը բա՛ց արա:

— Ո՛չ, Մհե՛ր: Ես երդում եմ կերել: Քառասուն տարի դու չես գա ինձ մոտ: Դու գնացիր, Մսրա օջախը շենացրիր, Սասնա օջախը քանդեցիր: Դու քո մեղքը պիտի քավես քառասուն տարի:

— Քառասուն տարի հետո ուշ կլինի: Իսմիլ խաթունի տղան կմեծանա, կավերի մեր Սասունը:

Մհերը ինչքան համոզեց, Արմաղանը մնաց ան-

դրդվելի: Ձենով Օհանը բերեց վարդապետներ, իշխաններ, որ արձակում տան Արմաղանի երդումին:

— Օրհնվա՛ծ, քո երդումը դու զա՛նց արա, վնաս չունի: Հողածին էր, մարդ էր ու խաբվեց: Հաշվենք, թե Մհերը գնացել, յար է բռնել, զղջացել է ու դարձել քեզ մոտ: Քանի՞ տարով ես երդում կերել:

— Քառասուն տարով:

Մի ալևոր վարդապետ ասաց.

— Օրենքը վարդապետների ձեռքին է: Մենք երդումիդ արձակում կտանք. թող տիրոջ կամքով քառասուն տարին լինի քառասուն ամի՛ս, քառասուն ամիսը՝ քառասուն շաբա՛թ, քառասուն շաբաթը՝ քառասուն օ՛ր, քառասուն օրն էլ՝ քառասուն ժա՛մ:

Մեջները մի ծուռ տերտեր էլ կար, ասաց.

— Քառասուն ժամն էլ կանենք հիմա:

Ալևոր վարդապետը պահպանիչ ասաց.

— Թող աստված երկուսիդ էլ թողություն տա: Այսօրվանից եղե՛ք մարդ ու կին: Սիրեցե՛ք իրար, աճե՛ք ու բազմացե՛ք, կտրիճ կռվան սերունդո՛վ լցրեք Սասնա տունը: Ամե՛ն:

— Արմաղա՛ն, — ասաց Մհերը, — սուրբ հայրերը ճշմարիտ են ասում: Միգուցե աստված մեզ մի զավակ տա, Սասնա տան ճրագը չհանգչի:

— Ե՛կ իմ առագաստը. աստված մեզ մի տղա կպարգևի, բայց երդմնազանց կլինենք, երկուսս էլ կմեռնենք, տղան կմնա անտեր, խսիրի վրա:

— Թող աստված մեզ տա մի արու ժառանգ, որ դեմ կանգնի Մսրա Մելիքին, թող Սասնա տան ճրագը վառ մնա, մենք էլ հանգիստ կմեռնենք:

Արմաղանը Մհերից մնաց երեխով:

Ուրախացավ Մհերը: Արմաղանի պատվին Ծովասարում մի գեղեցիկ անտառ տնկեց, պալատ կառուցեց, անտառը լցրեց անասուններով, շուրջը պարիսպ քաշեց: Ծովասարի գլխին շինեց մի հոյակապ վանք, անունը դրեց Մարութա բարձր Աստվածածին:

Ինն ամիս, ինն օր, ինը ժամը երբ լրացավ, Սասնա թագուհին բերեց մի արու զավակ: Անունը դրեցին Դավիթ: Նրա հայրն ու մայրը երդմնազանց էին, իրար հետևից մեռան: Դավիթը մնաց որբ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ Մհերն ու Արմաղանը երդմնազանց եղան:
2. Նկարագրի՛ր Ծովասարը պատկերացրածիդ պես:

ԴԱՍ 9

ՎԱՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՑ

Վահան Թոթովենցը մեր ազգային վերածննդի բոցաշունչ հռետորն էր:

Վահրամ Փափազյան

Ծնվել է 1889–ի սեպտեմբերի 1–ին Արևմտյան Հայաստանի Խարբերդ գավառում՝ Եփրատի առափնյա Մեզրե քաղաքում: Սովորել է տեղի նշանավոր Ազգային կեդրոնական վարժարանում, ապա ԱՄՆ Վիսքոնսինի համալսարանում: 1915–ին ամերիկահայ կամավորականների հետ մեկնել է կովկասյան ռազմաճակատ և մասնակցել ազատագրական պայքարին: 1920–ի մայիսին մեկնել է Պոլիս, ապա՝ Եվրոպա: 1922–ին հաստատվել է Խորհրդային Հայաստանում: Բազմաթիվ այլ մտավորականներին բախտակից Թոթովենցը ստալինյան բռնությունների զոհերից է: Նա գնդակահարվել է 1938–ի հուլիսի 18–ին:

Գրել է բանաստեղծություններ («Ձքեզ ըմպեմ, ով աղջիկ», «Մարտահրավեր» և այլն), պոեմներ («Ողբ անմահության», «Արևելք» և այլն), պատմվածքներ («Աղավնիներ», «Գավառական ողբերգություն», «Մի կյանք և մի սեր», «Ներման աղոթքը» և այլն), վիպակներ («Հովնաթան որդի Երեմիայի», «Հրկիզված թղթեր», «Մոխրակույտ», «Ծիրանի ծառ» և այլն), վեպեր («Փոթորիկին մեջ», «Դոկտոր Բուրբոնյան», «Տոնոն» և այլն), թատերգություններ («Պողպատի ճաշ», «Նոր Բյուզանդիոն», «Սասմա ծռեր», «Հրդեհ» և այլն), գրական դիմանկարներ, ակնարկներ, հոդվածներ, թերթոններ:

Գլուխգործոցը «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» ինքնակենսագրական վեպն է (1933):

«Բաց կապույտ ծաղիկներ» պատմվածքի հիման վրա 1980–ին նկարահանվել է «Կտոր մը երկինք» ֆիլմը, իսկ «Աղավնիներ» ստեղծագործության հիման վրա 1984–ին՝ «Ճերմակ անուրջներ» ֆիլմը:

ԿՅԱՆՔԸ ՀԻՆ ՀՌՈՎՄԵԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՎՐԱ
(հատվածներ)

***

Մթնշաղի մանուշակագույն մշուշում սուրում էին բյուրավոր ծիծեռնակներ, երբեմն անցնում էին իմ գլխի վրայով՝ շատ մոտիկից, սուր ճիչ արձակելով: Երբ ես հետևում էի նրանցից մեկնումեկի թռիչքին և պատկերացնում էի նրա թռիչքի գիծը իբրև թել, իմ առաջ դիզվում էր խճճված թելի մի կույտ:

Իմ մանկությունն անցել է մեր ագարակում՝ մարմարյա ավազանի եզրին: Գիշերը կապույտ երկնքից այնքան աստղեր էին թափվում ավազանի ջրերի պայծառ, աստղասարսուռ խորության մեջ: Ցերեկն արեգակը լողում էր նրա մեջ, կարծես զովանում էր նրա ջրերում: Գիշերը ավազանի սպիտակ հատակը կապտանում էր, ջուրը՝ մուգանում: Անսահման լռություն: Ուռիները կռանում էին ավազանի վրա, ագարակի բոլոր ծառերը շշնջում էին, հանկարծ մի ասուպ ձեղքում էր ավազանը և կորչում:

Մրգեր, մրգեր, մրգեր, որ գույն էին ձչում, խոտը՝ հրավառ կանաչ, կանաչի մեջ՝ կարմիր կակաչներ: Սարալանջ, որ ներկվում էր արևային արյունով, սարալանջի հետևը՝ կապույտ լեռներ, այդ լեռների գրկում՝ բարձր, ջինջ, փիրուզյա մի լիճ:

Խաղողի հատիկները կախվում էին, ինչպես մանկական պայծառ, ջինջ աչքեր: Կարմիր, սև, դեղին և սպիտակ խաղողի ողկույզները ծծում էին արևից լույս, գույն և քաղցրություն, կարծես հենց արևն էր խտացած, կաթիլ–կաթիլ մղված և կլորացած:

Մայրս ժպտում է մեր կապույտ լեռներից բարձրացող արևի միջից, տեսնում եմ նրա ծամերը՝ արևի շողերին խառնված, և լսում եմ նրա շողերի ձայնը. «Տո՛ւր թախիծդ ինձ, մանո՛ւկ իմ, ցնծա՛ զարնան մեջ, զարո՛ւն իմ ցնծագին, վազի՛ր դալար դաշտերում, իմ եղնի՛կ թեթևասույր, ժպտա՛ ինձնից ծծած կաթի մաքրությամբ, ջերմագին է աշխարհը, իմ զավա՛կ, իմ ծա՛ռ երկնասլաց, իմ խնդությո՛ւն, իմ սե՛ր»:

Ո՜վ հանճար Հայկյան, դու խավարին մեջ լուսակարկաչ լեզվի արարիչն ես, դու հավիտենական երգիչն ես ազատության, դու հաստիչն ես այն լուսեղեն իդեալին, որ կռիվ է հայտարարած մութին դեմ:

Վահան Թոթովենց

Նա շատ ու շատ հայրենասեր մարդ էր՝ հայ ժողովրդին, հայ մշակույթը սիրող ու պաշտող:

Ավետիք Իսահակյան

Արևի միջից լսում եմ նրա ձայնը: Արևը ինքը մայր է՝ խարտյաշ աչքերով և ոսկյա մազերով: Թափվում է կանաչների վրա նրա ոսկեհնչյուն երգը:

Եվ բացվում է մի մեծ առավոտ, որի թևերը ոսկեզօծում են իմ հոգու մռայլ ափերը:

***

Մեսրոպյան տառերն ինձ սովորեցրեց մի ասորի վարժապետ՝ պարոն Աշուրը: Կարճահասակ էր նա, բայց լայնաթիկունք, ոսկրոտ, լայն և բարձր ճակատով, ճաղատ գանգով, ցցված այտոսկրերով, ժայռային մուգ կապույտ և խոշոր աչքերով, անզուսպ ածած բեղերով, որոնք գնալով լայնանում էին և ապա մեղմորեն բարականում ու կախվում անխնա կերպով բացված բերանի երկու կողմերից, ինչպես փոքրիկ պոչեր՝ ծածկելով վերևի մեծ ատամները: Հին, բաբելոնական արձաններից պարոն Աշուրը տարբերվում էր միայն մի բանով՝ ակնոցով, մի բան, որ խախտում էր նրա հնօրյա վսեմ կերպարանքը:

Պարոն Աշուրը նաև բանաստեղծ էր. գրում էր ոտանավորներ կիսագրաբար և հին վարպետների ոճով՝ «Նինջ մանկան», «Հրեշտակք», «Դստերք երկնի» և այլն: Այս բոլորը նա գրում էր մի որևէ դեպքի առթիվ և նվիրում էր որոշ մարդկանց:

Պարոն Աշուրն էր, որ ինձ հեգելով կարդալ տվեց առաջին նախադասությունը՝ «Խա՛չ, օգնեա՛ ինձ»: Կային երեխաներ, որ դժվարությամբ էին «կանչում» խաչին օգնության: Պարոն Աշուրը այդ դժվարությունը հեռացնելու համար ուներ մի շատ պարզ միջոց՝ փայտի հարվածը: Պետք է խղճմտորեն հիշատակել այստեղ, որ փայտի հարվածներն իջնում էին բացառապես մարմնի փափուկ տեղերին: Բոլոր ծնողներն էլ գոհ էին այս եղանակից:

Տառերը սովորելուց և հեգելով կարդալուց հետո մենք հեռացանք պարոն Աշուրի մոտից և գնացինք դպրոց: Տարեվերջին նա կարդաց մի ճառ՝ գրած մեծ թերթի վրա, որից մենք ոչինչ չհասկացանք, որովհետև գրաբար էր ամբողջովին, միայն այնքանը հասկացանք, որ մեզ խրատներ էր տալիս:

Բայց պարոն Աշուրը մեզ չմոռացավ: Նա երբեմն հանդիպում էր մեզ փողոցում, կանգնեցնում ու հրա-

Տեսարաններ «Կտոր մը երկինք» ֆիլմից
բեմադրող դերասան՝ Հենրիկ Մալյան

մայում. «Հայերեն գիրքդ կարդա»: Ուզում էր ստուգել մեր առաջադիմությունը: Երբ լավ էինք կարդում, պարոն Աշուրը անսահման գոհ ժպիտով մռթմռթում էր. «Հիմքը լավ եմ դրել, Աստվա՜ծ վկա»:

Մի օր պարոն Աշուրը հայտնվեց մեր տանը՝ գոհունակ ժպիտով և ժայռագույն աչքերն ավելի խոշորացած: Նրա հայտնվելուց մի քանի շաբաթ առաջ գրել էի մի ոտանավոր և առանց ոչ ոքի մի բան ասելու՝ ուղարկել էի Զմյուռնիա՝ «Արևելյան մամուլ» շաբաթաթերթին: Այդ ոտանավորը տպվեց՝ առաջին տպագրված «երկը» իմ կյանքում: Պարոն Աշուրը եկել էր մեր տուն այդ ոտանավորը կարդալուց հետո, եկել էր գոհունակ ժպիտով և ժայռային աչքերն ավելի խոշորացած: Մի քանի գովասանական խոսքեր ասելուց հետո նա հայտարարեց. «Հիմքը լավ եմ դրել, Աստվա՜ծ վկա»:

Որքան ժամանակը սահի, ավելի խոր կերպով կը սիրեմ Վահան Թոթովենցի կյանքը, ձշմարտությունը, առասպելն ու ողբերգությունը:

Վիլյամ Սարոյան

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Հայ գրականության համար ինչո՞վ է նշանավոր Վահան Թոթովենցը:
2. Համացանցում գտի՛ր լրացուցիչ տեղեկություններ Վահան Թոթովենցի ու նրա երկերի մասին:
3. Դասընկերներով հայթայթե՛ք ասույթներ՝ քաղված Վահան Թոթովենցի երկերից:
4. Կարդա՛ Վ. Թոթովենցի «Բաց կապույտ ծաղիկներ» պատմվածքը և համեմատի՛ր այլ պատմվածքների հետ:
5. Կարդա՛ նաև Վահան Թոթովենցի «Կյանքը հին հռովմեական ձանապարհի վրա» վեպն ամբողջությամբ:

ՍԱՍՆԱ ԾՌԵՐ

ԴԱՎԹԻՆ ՏԱՆՈՒՄ ԵՆ ՄՍԸՐ

Ջենով Օհանը որբ Դավթին որդեգրեց: Բայց ո՞նց պահեր: Սասնա քաղաքի բոլոր ծծմայրերին հերթով տուն կանչեց, որ Դավթին կերակրեն: Դավիթը ոչ մեկի ծիծը չվերցրեց: Օհանի կինը՝ Սառյան, ասաց.

— Ուղարկի՛ր Մսըր՝ Իսմիլ խաթունի մոտ: Յոթ տարի Մհերի կինն է եղել, Մհերի տղային ծիծ կտա:

Մհերը երկու զորեղ կտրիճներ ուներ՝ անունները Զարբահար Քամի և Բաթմանա Բուղա: Ձենով Օհանը կանչեց այդ կտրիճներին, նրանց գիրկը տվեց մանուկ Դավթի բարուրը, հետն էլ մի թուղթ:

Քամին ու Բուղան բարուրը թղթի հետ մեկտեղ հասցրին Մսրը, հանձնեցին Իսմիլ խաթունին: Սա թուղթն առավ, կարդաց: Ձենով Օհանը գրել էր.

«Իսմի՛լ խաթուն, մեր եղբո՛ր կին, Մհերը որ հետ եկավ Սասուն, մի տղա ունեցավ, անունը դրինք Դավիթ: Մհերն ու իր կինը մեռան, տղան մնացել է որբ: Չի մոտենում Սասնա ծծմայրերին: Թե հարգում ես Մհերի հիշատակը, վերցրո՛ւ մեր մանուկ Դավթին, մինչև մի քիչ կմեծանա, ես պահեմ»:

Իսմիլը մտածեց. «Մհերն ինձ լավություն է արել, ես նրա որդուն պետք է պահեմ: Լավ է, որ չի մոտենում Սասնա ծծմայրերին: Իմ ծիծը կուտի, կդառնա իմ տղան, Մելիքիս հետ եղբայրություն կանի, մեկտեղ կիշխեն Մսրա, Սասնա և աշխարհի վրա»:

Միառժամանակ Դավիթն Իսմիլ խաթունի ծիծը կերավ, հետո էլ չէր ուտում: Իսմիլ խաթունը կանչեց Մսրա Մելիքին, մեծ վեզիրին, ասաց.

— Այս տղան երեք օր է՝ իմ ծծին չի մոտենում: Սոված է մնացել, ի՞նչ անենք:

— Իսմի՛լ խաթուն, — ասաց Վեզիրը, — Սասնա տանը չկա՞ մեղր ու կարագ, չկա՞ն ուրիշ անուշ ուտելիքներ: Բերել տանք, Սասնա յուղն ու մեղրը Սասնա տղան կուտի, կմեծանա:

Քամին ու Բուղան գնացին Սասուն: Մի բեռ մեղր, մի բեռ կարագ, վերցրին բերին Մսրը:

Իսմիլ խաթունը Դավթին պահեց Սասնա մեղրը ու կարագով: Թե որ ուրիշ տղաներ տարով էին մեծանում, Դավիթն օրով էր մեծանում:

Մհերը գերեզմանում էր, Դավիթը՝ օրորոցում:

Մսրա Մելիքը զորքով եկավ, Սասունն ավերեց, առավ հարկ ու ավար, շատ գերիներ տարավ Մսրա երկիր: Սասունը դարձրեց իրեն հպատակ, Ցռան Վերգոյին կարգեց Սասնա կառավարիչ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ նորածին Դավթին տարան Մսրը:
2. Նկարագրի՛ր նորածին Դավթին պատկերացրածիդ պես:

ԴԱՍ 10

ՆԱԻՐԻ ԶԱՐՅԱՆ

Իսկական անուն-ազգանունը՝ Հայաստան Եղիազարյան: Ծնվել է 1900-ի դեկտեմբերի 31-ին Արևմտյան Հայաստանի Վանի նահանգի Խառակոնիս գյուղում: Կրթությունը սկսել է տեղի դպրոցում: 1915-ի Մեծ եղեռնից մազապուրծ՝ հազարավոր հայրենակիցների հետ միասին գաղթել է Արևելյան Հայաստան, ապաստան գտել Երևանի և Դիլիջանի որբանոցներում: 1918-ին աշխարհազորի կազմում կռվել է թուրքերի դեմ: Ավարտելով Երևանի թեմական դպրոցը՝ կրթությունը շարունակել է Երևանի պետական համալսարանի պատմագրական բաժանմունքում: Ավարտել է նաև Լենինգրադի արվեստագիտության պետական ակադեմիայի գրական բաժնի ասպիրանտուրան:

1944-1946 թթ. եղել է Հայաստանի գրողների միության վարչության նախագահը: Վախճանվել է 1969-ի հուլիսի 11-ին Երևանում:

Գրել է բանաստեղծություններ («Դու քաղցր ես, հո՛ղ իմ հայրենի», «Արզաքանդի խնձորները», «Երկու հանձարեղ գլուխ», «Ինչո՞ւ» և այլն), պոեմներ («Ռուշանի քարափը», «Ցորենի դեզ», «Ձայն հայրենական», «Արշակ և Հապուհ» և այլն), թատերգություններ («Այրող դիմակ», «Աղբյուրի մոտ», «Փորձաղաշտ», «Արտավազդ և Կլեոպատրա» և այլն), «Հացավան» վեպը, ինքնակենսագրական վիպակներ («Պարոն Պետրոսն ու իր նախարարները», «Երկրորդ կյանք»): Արձակ վերամշակել է «Սասնա ծռեր» ժողովրդական վիպերգությունը՝ «Սասնա Դավիթ» խորագրով:

Նրա գլուխգործոցն է «Արա Գեղեցիկ» դիցապատմական ողբերգությունը:

Սեղանիս վրա նրա գիրքն է դրված, և երբ ուզեմ, կբացեմ գիրքը, ու Նաիրին նորից ինձ հետ կլինի, մեր հայոց աշխարհի ժողովրդի հետ: Արվեստագետի, գրողի կյանքը այսպես պետք է չափել:

Մարտիրոս Սարյան

Ես իմ գլուխը հպարտ և հիացմունքով խոնարհում եմ իմ ժողովրդի առաջ և ինձ կհամարեմ անչափ երջանիկ, եթե կարողանամ մի աննշան աղյուս դնել նրա հոյակապ մշակույթի շենքին, արժեքավոր մի տող ավելացնել նրա մարդասեր, ազատաբաղձ գրականությանը

Նաիրի Զարյան

*Արի՛, եղբայր, փառաբանենք մեր
քաղցրաբառ հայոց լեզուն,
Մեր սրտի ջուր, մեր ձեռքի թուր,
մեր հոգու լար հայոց լեզուն:*

*Հոսել է նա մեր դարերից, մեր
սարերից ու մեր սրտից,
Արաքսի պես միշտ կենդանի,
միշտ անսպառ հայոց լեզուն:*

*Նա առաջին կանչն է եղել դյուցազնական մեր նախահոր,
Օրորոցից մեզ փայփայել է մայրաբար հայոց լեզուն:*

*Քերթողահայր Խորենացուց մինչև Քուչակն ու ձեր ծառան
Տվել է մեզ երազ ու երգ և ճանապարհ հայոց լեզուն:*

Նաիրի Զարյան

ՀԱՅԵՐԵՆ
(Մի հայուհու)

Ինչո՞ւ չես խոսում հայերեն...
Ես երգ եմ հյուսում քեզ համար,
Հոնքերդ հպարտ ու կամար՝
Իջնում ես հայոց լեռներեն.
Ինչո՞ւ չես խոսում հայերեն:

Ես երգ եմ հյուսում քեզ համար,
Դու չես հասկանում իմ լեզուն:
Ես խորթ եմ, օտար քո հոգուն,
Բայց քո տեսիլով խանդավառ՝
Ես երգ եմ հյուսում քեզ համար:

Հոնքերդ՝ հպարտ ու կամար,
Հանց վեհ տաճարները հայոց,
Հայացքդ մաղում է ամառ:
Հայկից են աչքերը քո բոց,
Հոնքերդ՝ հպարտ ու կամար:

Իջնում ես հայոց լեռներեն,
Ինչպես թեթևոտ մեր պախրան,
Նազանքդ այնպես նաիրյան,
Հմայքդ այնպես հայերեն՝
Իջնում ես հայոց լեռներեն:

Ինչո՞ւ չես խոսում հայերեն:
Նորքից ես թռել դու, իմ լո՛ր,
Ձանգուն է երգել քեզ օրոր,
Մասիսն է հսկել վեհորեն,
Ինչո՞ւ չես խոսում հայերեն:

ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ

Այս գիշեր տեսա մի անուշ երազ.
Ես հայրենի տունն էի նորոգում.
Մանկության երկինքն էր բացվել վրաս,
Եվ արշալույսներ կային իմ հոգում:

Այնտեղ էր մայրս՝ հայացքը պայծառ,
Մայրենի լեզվով խոսում էր առուն,
Խշշում էր բակում հինավուրց մի ծառ...
Այնպես ծանոթ էր և այնպես գարուն...

Երդիկից կաթած շողն արեգական
Թվում էր հոգուս ոսկյա բանալի:
Արևն էր նայում աչքով հայրական,
Եվ քաղցր էր աշխարհն ու հասկանալի...

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Հայ գրականության համար ինչո՞վ է նշանավոր Նաիրի Զարյանը:
2. Համացանցում գտի՛ր լրացուցիչ տեղեկություններ Նաիրի Զարյանի ու նրա երկերի մասին:
3. Դասընկերներով հայթայթե՛ք նշանավոր ասույթներ՝ քաղված Նաիրի Զարյանի երկերից:
4. Կարդա՛ Նաիրի Զարյանի «Արա Գեղեցիկ» ողբերգությունը և համեմատի՛ր այլ ողբերգությունների հետ:
5. Կարդա՛ նաև Ն. Զարյանի «Ձայն հայրենական» պոեմը:

ԼԱՅՆ ԾԻԵՐ

ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ ԵՎ ԱՐԵՎԻ ՇՈՂԸ

Երբ Մսրա Մելիքը Սասնա ավարն ու գերին բերեց, Դավիթն օրորոցից արդեն իջել էր, դուրս էր գնում, խաղում էր Մսրա երեխաների հետ:

Մի օր մտավ պալատի պարտեզը, տեսավ՝ նազիր–վեզիրների տղաներն այնտեղ են. դալար ճյուղերի վրա նստած՝ իջնում են ու բարձրանում: Բռնեց բարձր մի բարդի ծառ, ճկեց մինչև գետին: Երեխաները ծառը հեծան, շատ ուրախացան, ճվճվում, ծիծաղում էին: Դավիթն այդ բարդին երկար ճկած պահեց, ձեռքը հոգնեց, ու երեխաներին ասաց.

— Հերիք է, ցա՛ծ իջեք, ձեռքս հոգնեց:

Երեխաները ոչ մի կերպ չլսեցին նրան ու ցած չիջան: Դավիթը զայրացավ ու բարդու կատարը բաց թողեց: Ծառը նետի պես արագ բարձրացավ, երեխաներին շպրտեց այս ու այն կողմ. որի թևը կոտրվեց,

Սկզբունքային, կրքոտ, իր ժողովրդի ու մարդկության ցավերով ու հոգսերով այրվող և ուրիշներին միշտ օգնելու և քաջալերելու պատրաստ մարդ էր Նաիրի Զարյանը:

Գևորգ Էմին



որի՝ ոտքը, որն էլ քարին կպավ ու մեռավ:

Է՛, նազիր–վեզիրների որդիներ էին: Նրանց հայրերը եկան Մսրա Մելիքի պալատը, բողոքեցին:

Մսրա Մելիքը շատ կատաղեց, մանուկ Դավթին փակեց մի մութ սենյակի մեջ, որ արևի լույս չտեսներ, վրան մի վարժապետ կարգեց, ասաց.

— Այս Սասնա ծռին գրել–կարդալ, խելք ու հնազանդությո՛ւն սովորեցրու: — Դավթին հաց–կերակուր տանողներին էլ պատվիրեց. — Դրան երբ հաց կտանեք, մսից ոսկո՛րը հանեք, չրից՝ կորիզը:

Մի օր Դավթին հաց–կերակուր տանողը շատ էր նեղացել Դավթի վարժապետից, մտքում ասաց. «Ես Դավթին միսը ոսկորով կտանեմ, Դավիթը կուտի, կհիվանդանա, թագավորը քո վիզը կկտրի»:

Դավիթը հացի հետ միսը գցեց բերանը, ոսկորն ընկավ ատամի տակ: Հանեց ու տեսավ՝ մի սիպտակ բան էր, նորից գցեց բերանը: Ատամները ցավեցին, ու չկարողացավ այդ սիպտակ բանը ծամել: Դավիթը զայրացավ, բերանից ոսկորը հանեց, խփեց պատին: Պատը ծակվեց, ու ներս ընկավ արևի շողը:

— Ո՞վ մտավ սենյակ, — զարմացավ Դավիթը:

Սկսեց արևի շողի հետ կռվել, ձեռքը մեկնում էր, որ բռնի, փորով ընկնում էր վրան, որ ճզմի, վեր էր թռչում ու նորից գետնին զարկվում, բայց արևի շողը դուրս չէր գնում: Եկավ վարժապետը:

— Դավի՞թ, աչքերդ փակի՛ր:

Թաշկինակով խցեց պատի ճեղքը, շողն անհետացավ: Դավիթն աչքերը բացեց, տեսավ՝ շողը չկա:

— Վա՛յ, այսօր առավոտից չարչարվում եմ, չկարողացա դրան դուրս հանել: Դու ինձնից ուժե՞ղ ես:

— Դավի՛թ, դա մարդ հո չէ՞ր, արևի շողն էր:

— Արևի շո՞ղը... Դրսում արևո՞ կա:

— Արև էլ կա, աստղեր էլ, գիշեր էլ, ցերեկ էլ:

— Բա ինչո՞ւ եք ինձ նստեցրել մութ սենյակում:

Վարժապետը ներկայացավ Մսրա Մելիքին:

— Թագավո՛րն ապրած կենա, Դավիթն ուզում է դուրս գալ, արևի լույս տեսնել:

— Գնա՛, դրան դո՛ւրս բեր, արևի տակ մա՛ն ածա:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ էին Դավթին բանտարկած պահում:
2. Նկարագրի՛ր արևի շողի հետ կռիվ տվող Դավթին այնպես, ինչպես պատկերացնում ես:

ԴԱՍ 11 ՆԱԻՐԻ ԶԱՐՅԱՆ

ԱՐԱ ԳԵՂԵՑԻԿ
(հատված չորրորդ արարից)

ԱՐԱ
Այսպե՞ս... Եվ փարատվեց մշուշը դյութական...
Եվ նենգությունը մեր դիմաց կանգնած է մերկ:
Ուրեմն Համիրամն ազատ բարեկամից
Գերադասում էր ստրուկի՞ն կամակատար...
Սիրո շռայլ խոստումներով նա կախարդել էր ինձ
Եվ երազներս խորտակեց անարգաբար:
Վերադարձե՛ք Նինվե և ասացե՛ք Համիրամին,
Թե բռնության շնչից սիրո ծաղիկը թառամեց,
Եվ նրա տեղ աճեց ատելության կաղնին:
Եվ ասացե՛ք՝ Արան սիրում է Նուարդին,
Պատրաստ է պահպանել նրա պատիվն անեղծ:
Եթե անապատի հեղեղն է Համիրամ,
Նուարդ Հայոց Երասխն է մաքրաջուր,
Եթե մոլեգնության հրդեհն է Համիրամ,
Նուարդ արևն է հեզության ու բազնի հուր:
Եվ ասացե՛ք՝ Արան չունի սովորություն
Գոռոզ ոճին պատասխանել ոճով խոնարհության:
Ահա ձեզ ոճս, պատասխանս բարձրագույն,
Եվ արդ վերադարձե՛ք Ասորեստան:

ՆԻՐԱՐ
Ավմ՞ղ, հարբել ես դու պատանությամբ և մոռացել,
Թե ով է Համիրամ և յուր բանակն սպառնագին:

ԱՐԱ
Գնա՛ Ասորեստան և հիշեցրո՛ւ, թե ով էր Բել,
Չմոռանաս նաև աղեղնավոր Հայկի՞ն...

Նաիրի Զարյանի դիմանկարը, 1940 թ.
Նկարիչ՝ Մարտիրոս Սարյան

Կմոլորվեր մեր քարավանն ամպրոպաշունչ գիշերներին,
Կկորչեինք, եթե ձամփին չրոցկլտար հայոց լեզուն:
Նաիրի Զարյան

Նաիրի Զարյանի կիսանդրին Երևանի թիվ 130 դպրոցի առջև
քանդակագործ՝ Ն. Նիկողոսյան

(հատված հինգերորդ արարից)

ՆՈՒԱՐԴ
Արան չէր կամենում պատերազմել ձեզ հետ,
Ձեր դաշինքին հավատարիմ էր նա հավետ:
Ինչո՞ւ ուրեմն դուք սպանեցիք նրան:

ՀԱՄԻՐԱՄ
Տիկի՛ն, վաղուց եմ ես ընտելացել
Տալու լոկ հարց, այլ ոչ թե պատասխան:

ՆՈՒԱՐԴ
Ես անիծում եմ քեզ և ցեղդ ամենայն,
Դուք սեր տարաք մեզնից, բերիք ատելություն,
Մենք ձեզ հավատարիմ եղանք, իսկ դուք՝ դրուժան.
Ուստի թող կործանվի Ասորեստան,
Ձեր տեղը թող մոխիր մնա և լոկ անուն՝
Իբրև պագշոտության խորհրդանիշ:
Իսկ ժողովուրդը Արայի՝ նրա հոգով զինված,
Իր սեփական մոխրից հազար անգամ վերածնված,
Կապրի, կանցնի փոթորիկները դարեդար:

Մտնում է Վարուժանը՝ Հայկի աղեղը ձեռքին:

ՎԱՐՈՒԺԱՆ
Ների՛ր ինձ, թագուհի՛, որ ես հևում եմ քո դիմաց,
Վազել եմ բուռն տագնապով և անդադար:
Ահա հայկյան ազատավանդ աղեղը: Ա՛ռ:
Արքան ռազմի դաշտում այսպես ասաց.
«Եթե մեռնեմ, պահի՛ր աղեղս, տո՛ւր իմ Նուարդին,
Մինչև կաճի իմ սիրեցյալ Անուշավան որդին
Եվ կստանձնի հայկյան աղեղը լայնալիճ»:

ՁԱՅՆԵՐ
Թող փառապանծ մնա հայկյան աղեղը լայնալիճ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. **Հայթայթե՛ք ասույթներ Նաիրի Զարյանի մասին:**
2. **Կարդա՛ Նաիրի Զարյանի «Ասք Անդրանիկ զորավարի» պոեմը և համեմատի՛ր այլ պոեմների հետ:**
3. **Կարդա՛ նաև Նաիրի Զարյանի «Ասք էության» պոեմը:**

ԴԱՎԻԹԸ ԲՌՆՈՒՄ Է ՄՍՐԱ ՄԵԼԻՔԻ ՆԻԶԱԿԸ

Վարժապետը Դավթին տարավ քաղաքի մեջ, որ ման ածեր: Դավիթը հարցնում էր ամեն բան.

— Սա ի՞նչ է: Դա ի՞նչ է: Նա ի՞նչ է:

— Սա տավար է, դա էշ է, նա էլ՝ գոմեշ:

Այդպես ման գալով քաղքից դուրս եկան: Անհաշիվ մարդ էր հավաքվել դաշտի մեջ:

— Վարժապե՛տ, արի գնանք այնտեղ:

— Մեռնե՛մ քեզ, Դավի՛թ, այնտեղ բան չկա, գնանք ուրիշ կողմ:

— Զէ՛, տա՛ր ինձ այնտեղ, — համառեց Դավիթը:

Վարժապետը սանիկին կամացուկ մի ապտակ տվեց: Դավիթը բռնեց վարժապետի ականջը, մազ մնաց՝ պոկեր: Վարժապետը վախեցավ: Դավթին տարավ հրապարակի ծայրը: Այնտեղ Մսրա Մելիքը իր մարդկանց հետ նիզակ էր խաղում: Նետելու հերթը Մսրա Մելիքինն էր: Դավիթը երբ տեսավ՝ երկնքով մի բան է գալիս, ձեռքը մեկնեց, բռնեց: Նիզակ էր, ետ նետեց ու Մելիքի գլխով տասը կանգուն էլ անց կացրեց այն կողմ:

— Հայ–հա՛յ, — ասաց Մսրա Մելիքը, — այդ ո՞վ էր՝ իմ նիզակն իմ գլխի վրայով անց կացրեց: Կա՛կան, Ասլան, գնացե՛ք, տեսե՛ք՝ ով էր:

— Թագավո՛րն ապրած կենա, Դավիթն էր:

— Բերե՛ք՝ վիզը կտրեմ, — բղավեց Մելիքը:

Վեզիր–նազիր ընկան Մսրա Մելիքի ոտքը.

— Թագավո՛րն ապրած կենա, երեխա է: Նա ի՞նչ է, որ դու նրա վիզը կտրես:

Վեզիրը կանչեց վարժապետին.

— Քո տո՛ւնը չքանդվի, տեղ չկա՞ր, որ դու Դավթին այս կողմը բերիր:

— Բա ես իմ կամքո՞վ բերի: Ուժով բերել տվեց:

Վարժապետը, շատ աղաչելով, Դավթին տարավ տուն: Տանը Դավիթն Իսմիլ խաթունին ասաց.

— Մարե՛, Մելիքը ամեն առավոտ ո՞ւր է գնում:

— Գնում է ման գալու, հոլ են խաղում:

— Բա ինչո՞ւ ինձ էլ չի տանում իր հետ, ես էլ հոլ խաղամ, սիրտս բացվի:

— Դու պստիկ ես, ձիերը քեզ կճխլեն:

— Ես կկանգնեմ ձիերից հեռու:

— Մելի՛ք, — ասաց Իսմիլը, — առավոտյան Դավթին տա՛ր քեզ հետ, թող հոլ խաղա, սովորի:



— Ախար այդ ազգը ծուռ է, հաստակող: Վախենում եմ՝ այս տղան փորձանք բերի գլխիս:

— Բան չի լինի: Տար դի՛ր մի բարձր տեղ, թող իր համար նայի: Չի գա ձիերի մոտ, մի՛ վախենա:

— Որ չտանեմ, շատ մարդ կասի՝ որբ էր, Մելիքն անտեր թողեց: Լավ, Դավթին կտանեմ ինձ հետ:

Առավոտյան Մելիքը Դավթին տարավ դաշտ:

Կական ու Ասլան կտրիճները թագավորի հրամանով ծուռ Դավթին տարան սարի գլուխ, ձեռքերն ու ոտքերը կապեցին, դրեցին այնտեղ, իրենք էլ նստեցին կողքին պահապան:

Դավիթը մինչև կեսօր նայեց, նայեց, բան չտեսավ, սիրտը նեղվեց ու կտրիճներին ասաց.

— Իմ ձեռքն ու ոտքն արձակե՛ք:

— Չի լինի, թագավորի հրամանն է, որ քեզ կապած պահենք, չգնաս ընկնես ձիերի տակ:

Դավիթը զայրացավ, իր կապերը կամացուկ ճգեց կտրտեց: Կտրիճները կախվեցին Դավթից, պահել չկարողացան: Դավիթը երկուսին էլ քիթ–բերանի վրա քաշեց մինչև տուն, գնաց մի պուճախ, գլուխը դրեց գետնին, պառկեց:

— Ինչո՞ւ տուն եկար, — հարցրեց Իսմիլը:

— Մելիքը իմ ձեռուոտը կապեց ու դրեց մի բարձր սարի գլխին, ինքը խաղում էր, ես բան չտեսա:

Երեկոյան Իսմիլ խաթունը Մսրա Մելիքին ասաց.

— Ինչո՞ւ Դավթին չտարար հոլի դաշտը:

— Մարե՛, նա ինձ չի լսում: Հոլը դրան դիպչի, սպանի, մարդիկ պիտի ասեն՝ Մսրա Մելիքը որբին սպանեց, որ իր հացը չուտեր:

Նստեցին հաց ուտելու, Դավիթը չմոտեցավ:

— Մելի՛ք, — ասաց Իսմիլ խաթունը, — եղբորդ մի՛ նեղացրու: Վաղը կտանես, կդնես մոտիկ մի տեղ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ Մելիքը չէր ուզում Դավթին դաշտ տանել:
2. Նկարագրի՛ր նիզակախաղը այնպես, ինչպես պատկերացնում ես:

ԴԱՍ 12 ԳՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐԻ

Իսկական ազգանունը՝ Աճեմյան: Ծնվել է 1903-ի օգոստոսի 1-ին Արևմտյան Հայաստանի Վան քաղաքում: Նախնական կրթությունն ստացել է տեղի Նորաշեն և Երեմյան դպրոցներում: 1915-ի կոտորածների ժամանակ գաղթել է Արևելյան Հայաստան՝ Ճանապարհին կորցնելով հարազատներին: Մեծացել է Երևանի ու Դիլիջանի որբանոցներում, սովորել ԵՊՀ-ի պատմագրական բաժանմունքում: Մի քանի տարի անց գտել է իր կորած մորը և մյուս հարազատներին:

Որբանոցներից մեկում ծանոթացել է Եղիշե Չարենցի հետ, և սկսվել է նրա ստեղծագործական կյանքը: Նրա գրական գործունեությունն ընդհատվել է 1936-ին, երբ քաղաքական անհիմն մեղադրանքով աքսորվել է Սիբիր: 1953-ին արդարացվել և վերադարձել է Երևան: Վախճանվել է 1969-ի հունիսի 17-ին Լիտվայի Պալանգա առողջարանական քաղաքում: Աճյունն ամփոփվել է Երևանում:

Գրել է բանաստեղծություններ («Այգեստաններ», «Երեք բարդի», «Աղավնիներ», «Բալլադ Չալոյի և առաջին սիրո մասին», «Օրոր, օրոր...» և այլն), պոեմներ («Գյուղերի երգը», «Կեսգիշերից մինչև առավոտ», «Էն տարին» և այլն), պատմվածքներ («Սև մարդը», «Հայկական բրիգադ», «Անտառային հեքիաթ» և այլն), վիպակ-հուշագրություններ («Մանկություն», «Պատանեկություն», «Երիտասարդության սեմին» և այլն), վեպեր («Ինքնակենսագրություն», «Գուրգեն խանի տոհմը»), թատերգություններ և այլն:

Նրա գլուխգործոցներն են «Այրվող այգեստաններ» վեպը և «Ծաղկած փշալարեր» վիպակ-հուշագրությունը:

...եթե այս բոպեին ներս մտներ ահեղ և ամենակարող տերը, նստեր իմ դիմաց, մի ծխախոտ վառեր և ասեր՝ «Տալիս եմ քեզ երկրորդ կյանք, գծիր քո երկրորդ կյանքի ուղին օրորոցից մինչև գերեզման, ինչպես որ ցանկանաս, և կկատարվի քո կամքը... ինչպե՞ս կուզեիր ապրել», ես նրան կպատասխանեի առանց վարանելու. «Ճիշտ այնպես, ինչպես ապրեցի»:

Գուրգեն Մահարի



Բանաստեղծության աստվածը, երբ ջախջախվում էին մեր երազները, այն հեռավոր տարիներին Մահարուն շշնջացել էր մի մեծ գաղտնիք՝ պետք է գրականությամբ ետ խլել այն, ինչ պահել չենք կարենում ռազմիկների գնդերով: Երբեմն «պարտիզանական կռիվներով», երբեմն կեղծ նահանջներով և վերջապես փայլուն մի ճակատամարտով նա անհայտությունից խլեց ու իր հայրենիքին վերադարձրեց իր Վանը, և մեծ գրող ու այդպիսով մեծ հայրենասեր Գուրգեն Մահարու այդ Վանն արդեն անկորնչելի է: Դա ոչ միայն այլևս անկողոպտելի մասն է հայ գրականության, այլ նաև հայ ապագա իրականության: Դա թռիչքային հրապարակ է դեպի իրական Վան: Դա Արևմտյան Հայաստանի մեծ խավարից Մահարու լույսով բացազատված այն հովիտն է, որ դեպի իրեն կգրավի խարխափող սերունդներ ու սերունդներ:

Հրանտ Մաթևոսյան

ՀԱՅԵՐԵՆ

.... Եվ հաստատաքայլ, աստիճանե աստիճան
Ու պսակե ի պսակ և լուսե ի լույս,
Իբր զավակը մտածումիդ,
Ես ի քեզ գամ՝ իմ այս երգս երգելու...

Սիամանթո

Հայ լեզու, քեզ կսիրեմ մրգաստանի մը նման...

Վահան Թեքեյան

Դու մեզ տվիր բանալին անմահության ու փառքի,
Նարեկացի մեզ տվիր՝ մինչև Չարենց ու Սևակ.
Դու մեզ տվիր մրգերի անմահական մի այգի,
Այուն եղար մեր գոյության, եղար պատվար ու հենակ:

Ու պատմությունը մեր մեծ, պայծառալույս կամ մռայլ,
Մեր ինքնությունը տոկուն քո մեծ ուժով է հառնել,
Նրանք պատվար են եղել, եղել զրահ ու խրամ,
Երեսունվեց հաղթ այուներ, երեսունվեց դյուցազներ:

Արդ, քեզ բյուր փառք ի բարձունս, հրամանատար մտքերի,
Տասնվեցդարյան մշուշից արդ կանգնել ես հայրորեն
Քո վիթխարի հասակով՝ աքանչելի, անթերի,
Ու նայում ես գալիքին անվախ, ժպտուն, հայերեն...

ԳԱԶԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ես կգնամ, դու կմնաս, ես ուզում եմ՝ դու լավ լինես,
Ես՝ հասարակ, իսկ դու՝ անհաս. ես ուզում եմ՝ դու լավ լինես:

Ո՞վ ինչ տարավ, որ ես տանեմ. մերկ եկել եմ, մերկ էլ կերթամ՝
Հետև թողած ծուխ ու երազ. ես ուզում եմ՝ դու լավ լինես,

Որ ձանաչես քո թշնամուն, որ ձանաչես բարեկամիդ,
Ունեցածովդ ուրախանաս. ես ուզում եմ՝ դու լավ լինես,

Լեռներիդ պես հպարտ ու վեհ, հովիտներիդ նման խոնարհ,
Ու չլինես հոսուն ավազ. ես ուզում եմ՝ դու լավ լինես:

Քեզ լավ տեսնեմ, հետո փակեմ աչքս՝ շաղված քո շողերից.
Ինչին ձգտել ես, տիրանաս. ես ուզում եմ՝ դու լավ լինես...

Հիվանդ արդարության կենացը խմենք, ծանր է նրա դրությունը, բայց նա չի մեռնի: Երբ հիվանդ է արդարությունը, մարդիկ խեղճանում են, մանրանում, դառնում երկերեսանի, չար, եսամոլ, ստորաքարշ: Նրանք քծնում են, լիզում իրենց ոտնակոխ անող մույկերը, ասում են խոսքեր, որոնց հետ համաձայն չեն, բայց կատարում են, որովհետև արդարությունը հիվանդ է, չի կարող նրանց կարգի բերել:

Գուրգեն Մահարի

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Հայ գրականության համար ինչո՞վ է նշանավոր Գուրգեն Մահարին:
2. Համացանցում գտի՛ր լրացուցիչ տեղեկություններ Գուրգեն Մահարու ու նրա երկերի մասին:
3. Դասընկերներով հայթայթե՛ք նշանավոր ասույթներ՝ քաղված Գուրգեն Մահարու երկերից:
4. Կարդա՛ Գ. Մահարու «Ծաղկած փշալարեր» վիպակը և համեմատի՛ր քո կարդացած այլ վիպակների հետ:
5. Կարդա՛ նաև Մահարու «Այրվող այգեստաններ» վեպը:

ԱԼԱՆԱ ԾԱԵՐ

ԴԱՎԻԹԸ ԲՌՆՈՒՄ Է ՄՍՐԱ ՄԵԼԻՔԻ ԳՈՒՐԶԸ

Լուսաբացին Մսրա Մելիքը, իշխաններն ու կտրիճները դաշտ գնացին, որ գուրզ խաղան: Դավթին նստեցրին մի արտաչափ հեռու: Մելիքն ասաց.

— Դավի՛թ, այս գուրզը տեսնո՞ւմ ես, շատ վատ բան է, մարդու որ կպավ, կսպանի: Զգաս, չմտնես խաղի մեջ: Այստեղ կանգնի՛ր, քեզ համար նայի՛ր:

— Լա՛վ, եղբա՛յր, քո ասածը կանեմ:

Այնտեղ Մելիքն իր ընկերներով գուրզ էր նետում, այստեղ Դավիթը խաղում էր իր համար: Թավալվում էր հողի մեջ, հողը վերցնում էր, լցնում իր ոտքերին: Գուրզ խաղացին մինչև կեսօր:

Դավիթը հեռվից նայում էր, մինչև գուրզ նետելու հերթը հասավ Մսրա Մելիքին: Բոլորը հավաքվեցին եկան, որ տեսնեն, թե թագավորն ինչպես գուրզ կնետի: Թագավորի գուրզը ամենածանրն էր: Մսրա Մելիքը ձախ ձեռքով գուրզը նետում էր վեր, աջով բռնում էր: Երբ գուրզը նետում էր հեռու, գետինը ճեղքվում էր, ինչպես սայլի անվահետք: Գուրզը դիպչում էր քարին, կրակ էր հանում:

Երբ Դավիթը տեսավ՝ գուրզը նետելու հերթը հասել է Մսրա Մելիքին, գնաց նստեց մի փոսորակի մեջ, իր ծակծկված գլխարկով հող էր չափում:

— Է՛յ, Դավի՛թ, վե՛ր կաց, ես գուրզ պիտի նետեմ, — երեք անգամ բղավեց Մելիքը:

Դավիթը չլսելու տվեց: Մելիքը հրամայեց.

— Գնացե՛ք, թևը բռնե՛ք, փոսից դո՛ւրս գցեք:

Հինգ կտրիճ հասան, Դավթի թևը բռնեցին, որ դուրս գցեն: Ինչքան ուժ գործադրեցին, չկարողացան Դավթին իր տեղից շարժել, ինչպես որ չես կարողանա ծառն արմատով հանել իր հողից: Կտրիճները շվարած կանգ առան: Մսրա Մելիքն ասաց.

— Գուրզերը նետե՛ք, թող դիպչեն դրան, սպանեն:

Կտրիճները նետեցին: Դավիթը մի ձեռքով գուրզը բռնում, նետում էր երկինք: Մելիքը կատաղեց.

— Դե՛ն գնացեք՝ ես իմ գուրզով զարկեմ: Իմ գլխակերն է սա: Լավ է՝ հիմա զարկեմ ու սպանեմ:

Դավիթն այդ խոսքը լսեց, ասաց.

— Մելի՛ք, գուրզը նետի՛ր, թող գա: Զերկմտես:

Մսրա Մելիքը, գուրզը նետեց: Դավիթը գուրզը բռնեց, մի քիչ ծանր ու թեթև արեց, ասաց.

— Ափսո՜ս, թեթև է շատ, — ու գուրզը հակառակ նետեց, յոթ կտրիճի տեղնուտեղը սպանեց: Մսրա Մելիքը փրփրեց ու թուրը քաշեց.

— Թողե՛ք, ես այդ շան որբի վիզը պիտի կտրեմ:

Մեծ վեզիրն ասաց.

— Իմ տե՛րն ապրած կենա, Դավիթը թագավորի տղա է, օրենք չկա, որ նրա վզին թուր բանեցնեն:

Վեզիրը և իշխանները չթողեցին, որ Մսրա Մելիքն այդտեղ Դավթին սպաներ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ Մսրա Մելիքն ուզեց սպանել մանուկ Դավթին:
2. Նկարագրի՛ր գուրզ նետող Մելիքին այնպես, ինչպես պատկերացնում ես:

ԴԱՍ 13 ՎԱԽԹԱՆԳ ԱՆԱՆՅԱՆ

Ծնվել է 1905–ի օգոստոսի 8–ին Դիլիջանի գավառի Պողոսքիլիսա (հետագայում՝ Համախյան) գյուղում (այժմ՝ Դիլիջան քաղաքի թաղամաս): Սկզբնական կրթությունը ստացել է տեղի դպրոցում: 1915–ին ընդունվել է Դիլիջանի ծխական դպրոցը:

1926–ին տեղափոխվել է Երևան, աշխատել «Ավանգարդ», «Մաճկալ», «Սովետական Հայաստան» և այլ թերթերի խմբագրություններում: 1941–1945 թթ. մասնակցել է 2–րդ աշխարհամարտին: Վախճանվել է 1980–ի մարտի 4–ին Երևանում:

Գրել է պատմվածքներ («Անլեզու մայրեր», «Կարմրախայտ», «Խուստուփ սարի արջերը», «Զարմանք» և այլն), վիպակներ («Կրակե օղակի մեջ», «Քարանձավի տղան» և այլն), վեպեր («Հովազաձորի գերիները», «Հին վրանի փոքրիկ բնակիչը», «Ուր են տանում կածանները» և այլն), հուշեր («Հուշագրություններ», «Ինչպիսիք էին քո նախնիք» և այլն), ակնարկներ, հոդվածներ: Գերակշռում են արկածային երկերը մանուկների ու պատանիների համար:

Հայաստանի կենդանիների մասին ընթերցողներին բազմակողմանի ծանոթացում է տալիս գրողի «Հայաստանի կենդանական աշխարհը. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» (հ. 1–5) աշխատությունը:

Գլուխգործոցներն են «Սևանի ափին» վեպը և «Որսորդական պատմվածքներ» շարքը (8 գրքով):

Վ. Անանյանի երկերը թարգմանվել և հրատարակվել են աշխարհի բազմաթիվ լեզուներով:

Նրա երկերի հիման վրա նկարահանվել են «Լեռնային լճի գաղտնիքը» և «Հովազաձորի գերիները» ֆիլմերը:

Տասնմեկ տարեկան էի, երբ զրկվեցի դպրոցից, ուսուցիչներից: Այնուհետև գրքերը դարձան իմ ուսուցիչները, իմ դաստիարակները, լեռնականի իմ անտաշ հոգին հղկողները:

Վախթանգ Անանյան

Վախթանգ Անանյանին նվիրված նամականիշ

Նկարազարդում «Հովազաձորի գերիները» գրքից
Նկարիչ՝ Պ. Դավիդով

Ինչ շողշողուն մրգեր կան Սև ծովի ափին...

Աշնանը հանգստանում էինք Սուխումում՝ Գասպար քեռու տանը, և ամեն օր վայելում հյուրասեր տանտիրոջ տնամերձ այգու պտուղները: Այգին տարածվում էր լեռան ստորոտում, իսկ նրանից վեր կանաչ անտառն էր ուղղահայաց բարձրանում մինչև ամպերը՝ մինչև ծեր Կովկասի ձերմակ գագաթները: Ինչ փարթամ, ինչ պտղաբեր երկիր է. այստեղ ժայռերն անգամ պատած են պտղատու ծառերով:

Ափսոս որ իմ խանձված ու մերկ երկրի համն ու հոտը չունեն այս շքեղ երկրի շքեղ պտուղները:

— Գասպար քեռի, ինչո՞ւ են անհամ ձեր մրգերը...

— Արևը, արևը... Հայաստանի արևը որ այստեղ լիներ, մեր միրգն էլ ձերի նման կլիներ:

Այո՛, արևն է աղբյուրը բոլոր այն բույրերի, որոնցով արբենում ենք: Բայց մի՞թե միայն արևը: Այդ խնդրով էր զբաղված բնասերի իմ միտքը, երբ հաջորդ տարի ավելի բարդ հարցի դեմ առա:

— Այսքան անձրևների, այսքան առատ ջրի մեջ ինչո՞ւ են ցամաք այստեղի մրգերը, — մի անգամ դիմեց ինձ իմ ընկեր Հրաչյա Քոչարը՝ ձեռքի կիսատ խնձորին տարակուսանքով նայելով: — Բնասեր ես, դե բացատրի՛ր...

Այո՛, մեր քարքարոտ հողում տանձենիներ են աճում, որոնց պտուղը կծելուն պես ջուր է ցայտում: Կա՞ ավելի հյութեղ պտուղ, քան մեր Արարատյան երկրի խանձված ու քարքարոտ վայրերի պտուղը:

Դե, եկ պատասխան տուր հարցասեր ընկերոջդ: Այստեղ պակաս է ջուրը, ամեն ինչ խանձվում է հարավի արևի տակ, բայց պտուղները հյութեղ են, իսկ այնտեղ Սև ծովը տարին տասներկու ամիս անձրև է թափում Կովկասի լանջերին, ծառերը ջրվում են լիուլի և տալիս ... անհյութ ու ցամաք տանձ ու խնձոր:

Արտաշատից վերև որս եմ փնտրում մերկ բլրի լանջին. այստեղ դաշտահավեր են լինում: Մի փորող մեքենա հոնդոցով լայնացնում է բլրին զոտի կապած հին առվի հունը, իսկ նրա ետևից վրա են տալիս սա-

թի նման սև սերմնագռավները, որդեր են փնտրում ընդերքից հանված թարմ հողի մեջ:

Ցած իջա, հրացանիս տեսքից թռչունները թռան սարսափահար: Նայում եմ առվի հատակից հանված թարմ տիղմին ու զարմանքով ծառի արմատի կտորտանքներ նկատում նրա մեջ: Մոտերքում ծառ չկա, թուփ չկա: Չէ, ինչպե՞ս չկա, վերևում բլուրը մի կրծքախորշ ունի իր մեջ, և այդ խորշում կույլ է եկել մի գաճաճ տանձենի: Բայց մի՞թե նրա արմատներն այստեղ են հասել. չէ՞ որ տանձենին հեռու է: Ցնտղեցի արմատի կտորտանքը. տանձենի է:

Բարձրացել եմ վեր, նայում եմ տոթից, երաշտից կարճ մնացած, ճյուղերը ծուռումուռ տարածած ծառին, որն իր հասակի համեմատ խոշոր արմատներ ունի և չափազանց մանր, կոշտ ու սուր–սուր տերևներ: Զննում եմ ու մտածում: Հետզհետե քանդվում է ինձ զբաղեցնող հանելուկի կծիկը: Ամեն ինչով այս բույսը հարմարվել է քարքարոտ ու շոգ տեղանքին, հարմարվել է, որ ապրի: Խոր ու լայն տարածված այս արմատները նրա համար են, որ այս պապակ ու աղքատ վայրից ջուր հայթայթեն մայր ծառին:

Մեր Դիլիջանի անտառներում վիթխարի հաճարենիներ կան, որոնք այս թզուկ ծառի արմատների կեսն էլ չունեն: Դե, ինչների՞ն է հարկավոր. այն խոնավ սևահողում առատ է և՛ ջուրը, և՛ սնունդը:

Այս տանձենու տերևները նեղ են և կոշտ շերտով պատած, որ քիչ ջուր գոլորշիացնեն: Ներքևից դժվարությամբ ստացած ջրի չնչին քանակը իր ներսում պահպանելու ձգտումից է: Իսկ պտուղնե՞րը: Հաստ և կոշտ կեղև ունեն դրանք, բայց երբ կծում ես, հյութը դուրս է ցայտում, քաղցր ու համեղ հյութը:

Եվ այդտեղ մի միտք փայլատակեց գլխումս, մի շատ կարևոր միտք: Չէ՞ որ երաշտի ահն է ստիպում այս ծառին ջուր կուտակել իր պտուղների մեջ, այս ծարավ վայրում ծարավ մնալու ահը...

Հիմա հասկացա՞ր, Հրա՛չ Քոչար, թե ինչու ցամաք պիտի լինեն ծովափի տանձն ու խնձորը: Նրանց համար ջուրը, հյութը ավելորդ բեռ է, քանի որ միշտ կարող են ջուր վերցնել այնքան հաճախ տեղացող անձրևներից: Մեր չոր ու պապակ երկրում, երբ ամ-

Վախթանգ Անանյանի կիսանդրին Երևանում

Վախթանգ Անանյանի «Սևանի ափին» վիպակը մի նոր նվաճում է ինչպես հեղինակի, այնպես էլ մեր գրականության համար: .... Նա գրում է հյութեղ, պարզ ու հասկանալի, ժողովրդական բառ ու բանով հարուստ, հետաքրքիր լեզվով: Նրա լեզվամտածողությունը զերազանցապես հայերեն է, զերծ օտարաբանություններից:

Պարույր Սևակ

Վ. Անանյանը մի գրող է, որ երեխաներին տոգորում է ազնվության, բարության, գեղեցիկի հանդեպ մեծ սիրո զգացմունքներով: Իսկ մեծերին վերադարձնում է իրենց մանկության հովիտները՝ մանկության գույները վերստին զգալու, բնության թրթիռներով ապրելու համար:

Հարի Ազեմիս
(գերմանացի գրող)

Վախթանգ Անանյանի երկերից փչում են մեր երկրի և հողի բույրերը: Նա չափել է անդունդների խորքը և զգացել է լեռների սլացքը, թեքվել է բոլոր ծաղիկների և բույսերի վրա: Մշտապես պահպանել է մոր ջերմության և անսահման սրտի զգացողությունը, հյուսել նրա սիրո երգը: Նա հասկանում էր բնության լեզուն և մարդու հոգին, անաղարտ հայացքով նայում մարդկանց և աշխարհին, ժողովրդական մեծ կյանքի ընթացքին:

Հրանտ Թամրազյան

Նկարազարդում «Սևանի ափին» գրքից
Նկարիչ՝ Ս. Կարայան

ռանը վերևից արևը կրակ է թափում, ամեն բույս ու ծառ ահի մեջ է: Ահ՝ իր կյանքի համար, իր սերունդների կյանքի համար: Եվ այդ ահը ստիպում է նրան հյութեր կուտակել պտուղների մեջ և այդ հյութերը պատել կոշտ պատյաններով, որ կիզիչ արևը չկարողանա նրանից խլել այնքան դժվարությամբ ձեռք բերված հյութը...

Դրանից են այդքան համեղ ու հյութեղ մեր արևոտ ու չոր երկրի պտուղները:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Հայ գրականության համար ինչո՞վ է նշանավոր Վախթանգ Անանյանը:
2. Համացանցում գտի՛ր լրացուցիչ տեղեկություններ Վախթանգ Անանյանի ու նրա երկերի մասին:
3. Դասընկերներով հայթայթե՛ք ասույթներ՝ քաղված Վախթանգ Անանյանի երկերից:
4. Կարդա՛ Վ. Անանյանի «Հովազաձորի գերիները» վեպը և համեմատի՛ր քո կարդացած այլ վեպերի հետ:
5. Կարդա՛ նաև Վ. Անանյանի «Սևանի ափին» վեպը:

ՍԵՎԱՆ ԾՈՒԵՐ

ԴԱՎԹԻՆ ՓՈՐՁՈՒՄ ԵՆ ՈՍԿՈՎ ՈՒ ԿՐԱԿՈՎ

Դավիթը փախավ տուն, իրեն նետեց մոր գոգը:

— Մարե՛, Մելիքը գալիս է, որ իմ վիզը կտրի:

Դավիթը սկսեց պատմել: Ներս մտավ Մելիքը.

— Ո՞ւր է այն անօրենը, ես նրա վիզը պիտի կտրեմ: Նա ինձ խայտառակեց աշխարհի առաջ: Գուրզ էի խաղում, նա ձեռքը մեկնեց, բռնեց իմ գուրզը:

— Է՛, ի՞նչ անենք, երեխա է:

— Ի՞նչ երեխա, — Մսրա Մելիքը Դավթի թևը բռնեց, բղավեց. — Ինչո՞ւ իմ գուրզը բռնեցիր:

— Լավ արի: Ես քեզնից պակաս տղա չեմ: Ես էլ քեզ հետ գուրզ պիտի խաղամ:

— Լսեցի՞ր, մարե՛, ես սրան պիտի մորթեմ:

Մայրը նետվեց եղբայրների միջև.

— Մելի՛ք, ծուռ հո չե՞ս: Ի՞նչ է արել երեխան:

— Մարե՛, սա որ այսօր բռնեց իմ գուրզը, վաղն էլ ձեռք կմեկնի իմ տուն ու տեղին:

— Այդպես մի՛ խոսիր, հարազա՛տս: Դավիթը քո եղբայրն է, քո բազկի ուժը, քո մեջքի թուրը: Դուք մեկ հորից եք ծնվել, մեկ մոր կաթ կերել: Հավը որտեղ կուտ կերավ, ձուն այնտեղ կածի: Դավիթն էլ այստեղ է մեծացել, այստեղ կմնա, կդառնա քեզ եղբայր, մեկտեղ կտիրեք Մսրին, Սասունին ու ողջ աշխարհին:

Մսրա Մելիքը մտածեց, ասաց.

— Չէ՛, մարե՛: Ուրիշ մարդիկ որ իմ գուրզի տակ ընկնեն, կմեռնեն: Սա բռնեց իմ գուրզը, չմեռավ ու նետեց ինձ վրա: Չէ՛, ես դրա վիզը պիտի կտրեմ:

— Այդպես չի լինի, կանչի՛ր, թող գան քո մեծավորներն ու իշխանները, տեսնենք՝ ինչ կասեն:

Մելիքը մեծավորներին ու իշխաններին ասաց.

— Այս խելառ անհավատը արդեն ձեռք է գցում իմ գուրզին, սպանում է իմ կտրիճներին: Հապա ի՞նչ կանի վաղը, երբ մեծանա: Աշխարհը կավերի:

— Թագավո՛րն ապրած կենա, — ասաց վեզիրը, — Դավիթը պստիկ է, խելքը չի հասնում:

— Չէ՛, դա իր արածը լավ է հասկանում:

Մեծավորները Մսրա Մելիքի ոտքն ընկան:

— Մի փորձ անենք, — ասաց վեզիրը: — Բերեք դնենք մի սկուտեղ ոսկի, մի սկուտեղ կրակ: Դավթին դնենք ոսկու և կրակի միջև: Թե ոսկին վերցրեց, խելքը հասնում է, վիզը կտրի՛ր, թե կրակը վերցրեց, խելքը չի հասնում, պետք է խնայես:

Դավթին տարան սկուտեղների մոտ: Դավթի աչքերը շաղվեցին, ձեռքը մեկնեց ոսկուն, Աստծու հրամանով հրեշտակը Դավթի ձեռը բռնեց ու տարավ դեպի կրակը, մատը կպավ կրակին, այրվեց: Դավիթն իր կրակաթաթախ մատը տարավ բերանը, լեզուն էլ այրվեց: Դավիթը վժժաց, լաց եղավ: Իսմիլ խաթունը տղային գրկեց, ասաց.

—Դավիթը երեխա է, մեղք է նրան սպանելը:

— Լա՛վ, ձեզ եմ բաշխում, թող ապրի:

Դավթի լեզուն այրվել էր, թլոլ մնաց: Այդ օրվանից նրան կանչեցին «Թլոլ Դավիթ»:



ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ Դավթին փորձության ենթարկեցին:
2. Նկարագրի՛ր լեզուն այրած Դավթին այնպես, ինչպես պատկերացնում ես:

ԴԱՍ 14

ԳԵՂԱՄ ՍԱՐՅԱՆ

Լիովին պարզ ու հասկանալի լեզվով անհեթեթ ոչինչ հնարավոր չէ ասել:

Գեղամ Սարյան

Իսկական ազգանունը՝ Բաղդասարյան: Ծնվել է 1902–ի դեկտեմբերի 25–ին Իրանի Թավրիզ քաղաքում: Արամյան ծխական դպրոցում նախնական կրթություն ստանալուց հետո ուսումը շարունակել է Թավրիզի կենտրոնական թեմական դպրոցում՝ աշակերտելով հռչակավոր Հրաչյա Աճառյանին: 1922–ին ներգաղթել է Հայաստան: Որոշ ժամանակ ուսուցչություն է արել, ապա աշխատել է տարբեր խմբագրություններում: Այնուհետև զբաղվել է բացառապես ստեղծագործական աշխատանքով: Վախճանվել է 1976–ի նոյեմբերի 14–ին Երևանում:

Գրել է բանաստեղծություններ («Հոգնած նայում եմ ես ձամփաներին», «Սևանի ափին», «Գովք Երևանի», «Խոսք ռուս ժողովրդին», «Ուկրաինային» և այլն), պոեմներ («Դեպի կառափնարան», «Սայաթ–Նովա» և այլն), բալլադներ («Բալլադ սիրո և հերոսության մասին», «Լուսանկարը», «Դելֆրոշ և էլ–Նուրի», «Գյուլնարա», «Փառքի տաճարը», «Մարմարակերտ գեղուհին» և այլն), «Օտար մարդը» վիպակը, «Հրաշալի սերունդ» չափածո վեպը, պատմվածքներ («Կոմունի շաղացը» և այլն), թատերգություններ («Զրպարտություն», «Երեք երգ», «Գրիգոր Դերեն» և այլն), ավանդազրույցներ, մանրապատումներ, ակնարկներ, հուշեր, հրապարակախոսական և քննադատական հոդվածներ:

Գրել է նաև մանուկների համար («Փափուկ ձյուն», «Մանուկն ու ձյունը» և այլն):

Նրա խոսքերով գրվել են երգեր, որոնցից առավել հանրահայտ է «Մարտիկի երգը» (երաժշտությունը՝ Աշոտ Սաթյանի):

ՄԱՅՐԵՐԻՆ

Մայրերն են պահել մեր հայոց լեզուն,
Մեր մանուկներին տվել կաթի հետ,
Եվ հայրենիքով դարձրել են լեցուն,
Որ ժողովուրդը ապրի հար–հավետ:

Մայրերն են պահել մեր հայոց երգը,
Երբ մանուկներին օրոր են ասել,
Աչունքն աչքերին, սրտերում վերքը՝
Մեր ազատ կյանքի օրն են երազել:

Նրանք չեն զիջել մեր երգն ու լեզուն
Բիրտ հազկերտներին, սուլթանին, ցարին,
Որոնք մեր վախճանն էին երազում՝
Տիրելու համար հայոց աշխարհին:

Նրանք չեն եղել օտարի գերին
Ու չեն վհատվել և ոչ մի դարում,
Հայ գիրքն ու մանկան սեղմած կրծքերին՝
Հպարտ են ապրել նրանք աշխարհում:

Եվ հայ մայրերն են պահում հիմա էլ
Մեր երգը, լեզուն, մեր վսեմ ոգին
Իրենց դարավոր մայրերին վայել՝
Սրտով նվիրված մեր հայրենիքին:

Ես ձեր ձեռքերն եմ համբուրում, մայրե՛ր,
Սրբություն սրբոց եք դուք իմ հոգում,
Պահպանեցե՛ք միշտ հայերենը մեր,
Որ հար–հավիտյան մնանք աշխարհում:

Դարեր եկան ու գնացին,
Դու՝ անենկուն, իմ Հայաստան.
Մեր Արարատ սարի պես հին
Դու՝ միշտ կանգուն, իմ Հայաստան:

Գեղամ Սարյան

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. **Հայ գրականության համար ինչո՞վ է նշանավոր Գեղամ Սարյանը:**
2. **Համացանցում գտի՛ր լրացուցիչ տեղեկություններ Գեղամ Սարյանի ու նրա երկերի մասին:**
3. **Դասընկերներով հայթայթե՛ք նշանավոր ասույթներ՝ քաղված Գեղամ Սարյանի երկերից:**

Հայրենիքն իմ սրտում՝
Թե չընկնեմ ես մարտում,
Ա՛խ, իմ մայր թանկագին,
Ցուն կգամ ես կրկին,
Կսփոփեմ քո հոգին
Համբույրով սրտագին,
Կսեղմեմ քեզ իմ կրծքին:

Գեղամ Սարյան
«Մարտիկի երգ»–ից

4. Կարդա՛ Գեղամ Սարյանի «Փառքի տաճարը» բալլադը և համեմատի՛ր քո կարդացած այլ բալլադների հետ:
5. Կարդա՛ նաև Գ. Սարյանի «Դեպի կառափնարան» պոեմը:

ԱԼԱՆԱ ԾԻԵՐ

ԴԱՎԻԹԸ ՄՍՐԱ ԹՐԻ ՏԱԿՈՎ ՁԱՆՑԱՎ

Դավիթը միառժամանակ պալատում ապրեց: Բայց բնույթը ծուռ էր, անհանգիստ: Մի օր դուրս եկավ քաղաք, հասավ Մսրա Մելիքի զինանոցը: Դուռը բաց էր, ներս մտավ, տեսավ մի մեծ գուրզ՝ դրված այնտեղ: Մտածեց. «Ի՞նչ սիրուն խաղալիք է»:

Գուրզը ձեռքն առավ, թափահարեց ու գցեց գետին: Ահռելի գմփոց ընկավ Մսրա մեջ: Քաղաքացիք՝ մարդ, կին, տղա, շատ վախեցան, ասին՝ երկրաշարժ եղավ: Մսրա Մելիքը քնից արթնացավ, ասաց.

— Դա իմ գուրզի գմփոցն էր: Տեսնես ո՞վ է իմ գուրզը վերցրել, ի՞նչ փորձանք է եկել քաղաքին:

Վեզիրը կռահեց, որ գուրզը վերցնողը Դավիթն է: Վազեվազ գնաց, հասավ զինանոց: Դավիթն այնտեղ մի գմփոց էլ հանեց: Վեզիրը գոռաց.

— Հե՛յ, Դավի՛թ, շո՛ւտ արա, փախի՛ր, թե չէ Մսրա Մելիքը որ եկավ, վա՛յ քո արևին:

Դավիթը փախավ: Մելիքը եկավ, հարցրեց.

— Վեզի՛ր, այդ ո՞վ էր:

— Մելիքն ապրած կենա, դուռը բաց էր, չիմացա:

— Կա–չկա, Դավիթն էր: Էլ ո՞վ գուրզս կվերցներ:

Մսրա թագավորը՝ կատաղած, փրփրած, եկավ տուն: Դավիթը քնած էր քուրսու մոտ: Մսրա Մելիքն աղեղի լարն արձակեց, ուզում էր այդ լարով Դավթին խեղդել: Մայրը վրա հասավ, ձեռքը բռնեց:

— Մելի՛ք, այդ ի՞նչ ես անում:

— Ես այս լակոտին պիտի խեղդեմ: Գնացել է, գուրզիս հետ խաղացել, գմփոց է գցել քաղաքի մեջ:

— Մելի՛ք, թե որ Դավթին դու սպանես, իմ այս ծծերի կաթը, որ կերել ես, քթիցդ գա:

— Մարե՛, — մռնչաց Մելիքը, — իմացի՛ր՝ օձի ձագ է Դավիթը. ինձ ինչ վնաս որ գա, իրենից կգա: Ձէ՛, հերի՛ք եղավ: Ես այսօր դրան պիտի սպանեմ:

Իսմիլ խաթունը ճարը կտրել էր, ասաց.

— Թե որ պիտի սպանես Դավթին, տա՛ր, յոթ սարի հետև՛ սպանիր, որ ականջս նրա ձայնը չառնի: Քաղցր ծիծ եմ տվել Դավթին, սիրտս չի դիմանա:

Մեծ վեզիրը եկավ, այդ խոսքերը լսեց, ասաց.

— Ինչո՞ւ Դավթին սպանեք, արյունը վերցնեք ձեր վզին: Ուղարկեցե՛ք Սասուն՝ իր հոր երկիրը:

Իսմիլ խաթունը Դավթին քնից հանեց, ասաց.

— Դավի՛թ, կգնա՞ս հորեղբայրներիդ մոտ:

— Ես հորեղբայրնե՞ր ունեմ: Որտե՞ղ են ապրում:

— Իրենց երկրում՝ Սասունում: Կգնա՞ս նրանց մոտ:

— Մարե՛, մինչև այսօր ինչո՞ւ չես ասել: Դե, ինձ ինն օրվա հա՛ց կպատրաստես, կտաս ինը զույգ տրեխ, ինը զույգ էլ գուլպա, առնեմ, գնամ Սասուն:

Իսմիլ խաթունն օրհնեց Մհերի որդուն, ասաց.

— Գնա՛, տղա՛ս, գնա՛ քո հոր երկիրը՝ քո հորեղբայրների մոտ: Աստվա՛ծ քեզ հետ:

Այստեղ Մսրա Մելիքը թուրը բարձրացրեց, ասաց.

— Դավիթը պիտի գա, թրիս տակով անցնի, որ թողնեմ՝ գնա իր Սասունը:

— Հայ–հա՛յ, ես գամ քո թրի տակով անցնե՞մ:

— Ի՞նչ կլինի, Դավի՛թ, որ անցնես, — ասաց Վեզիրը: — Անցի՛ր, քեզ համար գնա Սասո՛ւն:

— Չէ՛, Մսրա Մելիքն ուզում է՝ իր թրի տակով անցնեմ, որ երբ մեծանամ, թուր չքաշեմ նրա դեմ, ինքը ինձ վրա թուր բանեցնի՝ ես նրան չզարկեմ: Ես այդ բանը չեմ անի: Մորս լաչակի տակով կանցնեմ, Մսրա թրի տակով չեմ անցնի:

— Թրի տակով չե՞ս անցնի, — բղավեց Մելիքը:

— Չեմ անցնի: Ինչ որ ձեռքիցդ գալիս է, արա՛:

Մեծ վեզիրը Դավթի թևից բռնեց, որ անց կացնի Մսրա թրի տակով, Դավիթը աներեր կանգնած էր: Վեզիրը նրա մեջքը բռնեց, հրեց: Դավիթը նետվեց մի կողմ, չանցավ թրի տակով, կողքով անցավ, ճկույթը առավ քարին, քարը կրակ տվեց:

Մելիքն այս որ տեսավ, շատ վախեցավ, ասաց.

— Սա որ այսքան պստիկ է, այսպես է անում, մեծացավ՝ աշխարհը կավերի:

Իսմիլն ու մեծ վեզիրը Մելիքի ոտքերն ընկան, խնդրեցին, երդում կերան, որ Դավիթն անխելահաս ծուռ երեխա է, թող գնա իր Սասունը, պրծնենք:



ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ որոշվեց Դավթին ուղարկել Սասուն:
2. Նկարագրի՛ր Մսրա Մելիքի ոտքերն ընկած Իսմիլ խաթունին ու մեծ վեզիրին, ինչպես պատկերացնում ես:

ԴԱՍ 15 ՍԱՐՄԵՆ

Իսկական անունը՝ Արմենակ Սարգսյան: Ծնվել է 1901–ին Արևմտյան Հայաստանի Ռշտունիք գավառի Պախվանց գյուղում:

1915–ին զրկվել է ծնողներից, որոնք Մեծ եղեռնի զոհ են դարձել: Պապի հետ մեծ դժվարություններով գաղթել է Արևելյան Հայաստան, եղել է Գանձակի, Ծաղկաձորի, Լենինականի և Երևանի մանկատներում:

1924–ին ավարտել է Լենինականի մանկավարժական տեխնիկումը և զբաղվել ուսուցչությամբ: 1926–1932 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի պատմագրական բաժանմունքում: Այնուհետև աշխատել է ՀԽՍՀ ժողկոմխորհրդին կից ռադիոկոմիտեում և այլուր:

Վախճանվել է 1984–ի փետրվարի 18–ին:

Գրել է բանաստեղծություններ (ամփոփված են «Դաշտերը ժպտում են», «Սրտի ձայնով», «Գազաթների կարոտը», «Հայրենի տուն», «Կարոտի կրակներ», «Խոսող ծաղիկներ», «Բանաստեղծի աղբյուրը», «Կենաց բաժակ», «Ծաղկավոր ձմեռ», «Երազանք», «Հայոց սիրտ», «Մանուկների աշխարհում» և այլ ժողովածուներում), պոեմներ («Սեփո», «Հերոսական մահ», «Կորած ձեռքեր», «Սպանված սեր», «Հայոսն ու Քարթլոսը», «Մեսրոպ Մաշտոց» և այլն), առակներ:

Նրա խոսքերով գրվել են մի շարք հայտնի երգեր («Խնջույքի երգ», «Հայի աչքեր» և այլն):

ՄԵՍՐՈՊ ՄԱՀՏՈՑ
(հատված պոեմից)

Դարեր են եկել, գնացել անդարձ,
Ազգեր են ծնվել ու մեռել անհետ,
Այրուձիների արշավն հողմընթաց,
Տրորելով մեր հողը ծաղկավետ,
Մեր դաշտի, արտի, սրտի վրայով
Անցել է որպես ավերիչ մորեխ՝
Հետքից թողնելով ավեր, մահ ու սով,
Այրուն սփռելով ամեն, ամեն տեղ:
Կործանվել են մեր կոթողները ճոխ,
Մեր ոստանները դարձել ավերակ,
Մեր երգի, կյանքի ծառը բողբոջող
Եղել է կացնին ու հրին ճարակ,
Մեր ավանները, մեր շեները նոր
Քանդվել են, դարձել հողին հավասար,
Մեր տառապանքից՝ խոր ու ահավոր,
Մեր տեսած վշտից՝ մաշվել քար ու սար:
Բայց մենք կանք նորից, կա երկիրը մեր,
Անուշ հնչում է մեր հայոց լեզուն,
Նորից կերտում ենք շքեղ կոթողներ,
Հայրենաբարբառ երգեր ենք հյուսում.
Ծաղկում–ծփում են մեր արտերը ծով,
Ծուխն է բարձրանում մեր օջախներից,
Ու մեր խնդության երգի զնգոցով
Սար ու ձորերը թնդում են նորից:
Ու մեր հորդաբուխ ուրախության մեջ
Մենք երբեք, երբեք քեզ չենք մոռացել,
Դու մութն ակոսող հրի պես անշեջ
Ժողովրդի հետ ճամփա ես անցել,
Լուսավորել ես մեր դժվար ուղին,
Մեր մաքառումին եղել ես սատար,
Նոր ուժ ես տվել հայրենի հողին
Ու քո ազգի հետ քայլել դարեդար:
Դու քո գրերով զրահել ես մեզ,
Դարձրել հավերժող ու անխոցելի.
Մեր դեմ բացել ես անծիր ասպարեզ
Խոսքի, խոյանքի, խիզախումների:
Եվ արդ կանգնել եմ շիրիմիդ առաջ

Այնպես քնքուշ, այնպես զվարթ
Ժպտում ես դու, մե՛ր Երևան,
Երկինքդ՝ պարզ, արևն՝ առատ,
Քո ջուրն՝ անուշ ու զլզլան:

Ով մի անգամ տեսել է քեզ,
Չի մոռանա հար-հավիտյան,
Դարձել ես դու շքեղ պարտեզ,
Ակունքը մեր երջանկության:

Սարմեն

Մեր սիրտը թնդաց, մեր կյանքը դարձավ խորն ու իմաստուն,
Փովեց, մեծացավ, օվկիանոս կտրեց մեր լիճը փոքրիկ,
Ողբի ու որբի երկիրը դարձավ հերոսների տուն,
Ծնվեց մի ազատ, անպարտ հայրենիք:

Սարմեն

Ես՝ շառավիղը քո երախտապարտ,
Իմ սրտի բոլոր լույսերը վառած,
Աշխարհի առաջ քեզանով հպարտ՝
Պսակ եմ դնում քո շիրմաքարին
Ջերմեռանդությամբ, հոգով ալեկոծ.
Ընդունի՛ր սերս, հիացքս խորին.
Դու, Մեսրո՛պ Մաշտոց, հանճա՛ր մեծազորձ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Հայ գրականության համար ինչո՞վ է նշանավոր Սարմենը:
2. Համացանցում գտի՛ր լրացուցիչ տեղեկություններ Սարմենի ու նրա երկերի մասին:
3. Դասընկերներով հայթայթե՛ք ասույթներ՝ քաղված Սարմենի երկերից:
4. Համացանցում գտի՛ր և սովորի՛ր Սարմենի խոսքերով Ռոբերտ Ամիրխանյանի գրած «Հայի աչքեր» երգը:
5. Կարդա՛ նաև Սարմենի «Մեսրոպ Մաշտոց» պոեմն ամբողջությամբ:

ԼԱՆԼ ԾԻԵՐ

ԲԱԹՄԱՆԱ ԿԱՄՈՒՐՋԸ

Մսըրում էին կտրիճներ Բաթմանա Բուղան ու Զարբահար Քամին: Մսրա Մելիքը նրանց կանչեց.

— Դավթին կտանեք յոթ սարի այն կողմը՝ Բաթմանա կամրջի վրա, կսպանեք ու կնետեք ջուրը, իր հագի շորը կթաթախեք իր արյունի մեջ, կբերեք, որ ես իմ աչքով տեսնեմ: Մի կժով էլ Դավթի արյունը կբերեք, որ խմեմ, սիրտս հովանա:

Դավթին Իսմիլ խաթունին «մնաս բարով» ասաց:

Հինգ–վեց օրվա ճանապարհ անցան: Դավիթը չէր խոսում ծառաների հետ, խոտորվում էր ճամփից մեկ դես, մեկ՝ դեն, ընկնում էր սար ու ձոր, խաղում քարի, թփի հետ, փախցնում էր հավք ու գազան...

Կտրիճները նստում, հաց էին ուտում, Դավթին չէին տալիս: Դավիթը բանջար էր քաղում, արմատ հանում, լոր ու նապաստակ էր բռնում, ուտում:

Այսպես գնացին հասան Բաթմանա կամուրջը:

Կտրիճները կանչեցին Դավթին.

— Դավի՛թ, մինչև այսօր Մսրա հողում էինք, հիմա քո հոր հող–ջուրը հասանք: Արի՛, հա՛ց կեր:

— Իսմիլ խաթունն ինն օրվա հաց էր դրել մեզ հետ: Ինքներդ կերաք, ինձ բան չտվիք: Այսօր, երբ ես իմ հոր հող–ջուրն եմ ընկել, ասում եք. «Դավի՛թ, արի՛, հա՛ց կեր»: Ձեր հացը հիմա չեմ ուզում:

Կտրիճները կամուրջի մոտ կանգ առան ու ասին:

— Մելիքը մեզ ասել է. «Դավթին կամուրջից այնպե՛ս անց կացրեք, որ չվախենա, ջուրը չընկնի»:

— Մսրրից մինչև այստեղ եկանք, մի օր չասիք. «Դավիթը պստիկ է, կվախենա»: Հիմա ի՞նչ եղավ:

— Դավի՛թ, մեկս կանցնի քո առաջ, մեկս՝ հետև, որ կամուրջը անցնելիս դու չվախենաս:

— Լավ, — համաձայնեց Դավիթը, — ապա մտածեց. «Սրանց մտքի մեջ մի վատ բան կա»:

Հասան կամրջի կեսը: Կտրիճները մեկն առջևից, մյուսը հետևից բռնեցին Դավթի թևերը:

— Բռնել եք ինձ, որ ջո՞ւրը գցեք:

— Թագավորի հրամանն է, որ քեզ գցենք ջուրը:

— Մելիքն ի՞նչ է ուզում ինձնից: Ձեռքս չեմ մեկնել ո՛չ նրա երկրին, ո՛չ նրա գանձին, ո՛չ գահին: Նա ի՞նչ է տվել ինձ, որ չի կարողանում առնել:

Դավիթը մի ձեռքով բռնեց մեկի օձիքը, մյուս ձեռքով՝ մյուսի օձիքը, իրար զարկեց, կամրջի երկու կողերից կախեց, ասաց.

— Դուք լավ չգիտեք՝ ինչպես են մարդու ջուրը գցում: Հիմա ես ձեզ կգցեմ, կսովորեք:

Կտրիճները սարսափահար բղավեցին.

— Դավի՛թ, աստծո՛ւ սիրուն, մեզ մի՛ գցիր ջուրը: Այն շուն Մսրա Մելիքը ստիպեց, որ քեզ բերենք այստեղ ու սպանենք: Մենք չէ՞ որ քո հոր՝ Առյուծ Մհերի ծառաներն ենք եղել, նրա սեղանի մոտ ենք մեծացել: Քո հոր հիշատակի համար մեզ խնայի՛ր: Մենք օր կենդանության քեզ կծառայենք:

Դավիթը կտրիճներին կամրջի վրա դրեց, ասաց.

— Դե որ այդպես է, գնանք ինձ հետ Սասուն:

Այստեղ երեքով իրար գլուխ համբուրեցին ու ճանապարհ ընկան դեպի Սասուն:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ կտրիճները չսպանեցին Դավթին:
2. Նկարագրի՛ր Բուղա և Քամի կտրիճներին այնպես, ինչպես պատկերացնում ես:



ԴԱՍ 16 ՀՐԱՉՅԱ ՔՈՉԱՐ

Իսկական ազգանունը՝ Գաբրիելյան: Ծնվել է 1910–ի հունվարի 19–ին Արևմտյան Հայաստանի Բագրևանդ գավառի Ղումլիբուջաղ գյուղում, որը Նպատ լեռան ստորոտին է: 1915–ի գաղթի ճանապարհին մահացել է մայրը, ապա՝ հայրը՝ հայտնի խմբապետ Քոչոն (Քոչար Գաբրիելյանը), որ կռվել է Անդրանիկի ջոկատում: Հրաչյան համագյուղացիների հետ հասել է Արևելյան Հայաստան: Եղել է գառնարած, հանքափոր Ալավերդում: Այնուհետև սովորել է Երևանի պետական համալսարանի բանասիրական բաժանմունքում:

1939–ին Մարտիրոս Սարյանը նրան տեղավորել է իր ղեկավարած Պատմական հուշարձանների պահպանության կոմիտեում: Ոտքով շրջել և ուսումնասիրել է հայկական վանքերի ու մատուռների վիճակը, այդ աշխատանքներն ամփոփել «Գորիսի և Սիսիանի շրջանների ալբոմ–ուղեցույցի» մեջ: 1941–1945 թթ. մասնակցել է երկրորդ աշխարհամարտին:

1946–1951 թթ. եղել է Հայաստանի գրողների միության վարչության քարտուղար, «Սովետական գրականություն» ամսագրի խմբագիր, 1954–ից՝ «Ոգնի» երգիծական հանդեսի խմբագիր: Վախճանվել է 1965–ի մայիսի 2–ին Երևանում:

Գրել է պատմվածքներ («Գեներալի քույրը», «Սպիտակ գիրքը», «Ուսուցիչը» և այլն), վիպակներ («Նահապետը», «Կարոտ», «Եփրատի կամրջին» և այլն), «Մեծ տան զավակները» վեպը, կինոբեմագրեր, ակնարկներ, ուղեգրություններ:

Գլուխգործոցը «Սպիտակ գիրքը» ժողովածուն է:

Նրա երկերի հիման վրա ստեղծվել են «Կարոտ» և «Նահապետը» ֆիլմերը:

ԱՐՏԱՍՈՎՈՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ճարտարապետ Անդրանիկ Թազվորյանը, հիմնարկից դուրս գալով, ուղղվեց դեպի Երևանի երկաթուղային կայարանը: Այդ օրը սպասում էին հատուկ գնացքի, որ պիտի բերեր հայրենադարձ հայերի առաջին կարավանը: Քաղաքը ցնծության մեջ էր:

Ճարտարապետը որոշեց ոտքով գնալ կայարան՝ անձնատուր անցյալի հուշերին, որոնք նրա հոգու մեջ հարություն էին առնում տարագիր հայերի՝ հայրենիք վերադառնալու օրը:

Հազար ինը հարյուր տասնհինգ թվականն էր: Բարբարոս թշնամին քշում էր հայ բազմությունները դեպի մահ: Խոր մի կիրճում հանկարծ կարծես գետնի տակից հայտնվեցին մինչև ատամները զինված ասկյարներ և սկսեցին կրակել իրենց վրա: Առաջին գնդակներից խոցվելով՝ ընկավ նրա հայրը, ընկան նաև մյուսները, և երախան իրեն նետեց հոր դիակի վրա: Այնուհետև ամեն ինչ մթնեց նրա համար...

Ուշքի եկավ գիշերը: Հետո ինչ–որ մարդիկ եկան և իրեն, դիակների միջից հանելով, տարան: Երկար տարիներ նրան բաժին ընկավ որբանոցային տխուր կյանքը: Ու երբ արդեն տասնհինգ տարեկան պատանի էր, միանալով առաջին կարավաններից մեկին՝ եկավ Հայաստան: Այնուհետև՝ աշակերտական և ուսանողական տարիներ, վերջապես՝ մասնագիտություն ունեցող մարդու ինքնուրույն կյանք:

Ճարտարապետը քայլում էր ինքնամոռաց և չզգաց, թե ինչպես հասավ կայարանի հրապարակը: Ովքե՞ր էին եկողները. այնպիսի մարդիկ, ինչպիսին ինքն էր մի ժամանակ: Կարող էր այսօր վերադառնալ իր հայրն էլ, եթե չընկներ թշնամու գնդակից...

Կայարանը տոնական տեսք էր ընդունել: Բազմությունը հեղեղել էր կառամատույցն ու հրապարակը: Նվագում էր փողային նվագախումբը: Կառավարության անդամները ժողովրդի հետ միասին սպասում էին գնացքի ժամանելուն: Վերջապես երևաց գնացքը: Այդպիսի բացականչություններ, այդպիսի ցնծագին ուրախություն, այդպիսի գրկախառնումներ մայրաքաղաքի կայարանը չէր տեսել: Հատերն արտաս-

Հրաչյա Քոչարի հուշատախտակը Երևանում

Երկրի գրեթե բոլոր գյուղերից գաղթականներ էին հավաքվել այստեղ 1918-20 թվականներին՝ հույս ունենալով, թե «երկիր երթալ» կլինի, ու իրենք առաջինն Արազը կանցնեն, իրենց երկակնանի սայլերն առաջինը կձռնչան ձանաչ ճամփաների վրա: Իսկապես, տարազների, բարբառների խառնարան էր այս գյուղը. ամեն թաղը մի աշխարհ էր, որ երկար տարիներ պահում էր իր դեմքն ու իր գույնը:

«Կարոտ» վիպակից

վում էին, ոմանք գտնում էին իրենց հարազատներին, ողջագուրվում, հեկեկում ուրախության արցունքներով: Ամբիոնից ջերմ ձառեր էին արտասանվում:

Եկվորներից մեկը բարձրացավ ամբիոն, և նրա շրթունքներից դուրս թռան բանաստեղծի խոսքերը.

Տո՛ւր ինձ քու ձեռքդ, եղբայր եմք մեք,
Որ մրրկավ էինք զատված...

Երեկոյան, երբ ճարտարապետը վերադարձավ տուն, դռան շեմին նրան ուրախ դիմավորեց կինը.

— Մեզ մոտ է եկել շատ հաճելի մի ծերունի դերձակ՝ իր կնոջ հետ...

Ներս մտան: Ծերունին, տեսնելով ճարտարապետին, մոտեցավ և ձեռքը մեկնեց նրան.

— Հատ շնորհակալ ենք, ձեզի քիչ մը նեղություն տվինք անշուշտ: Աղվոր մանչ մը ունիք, արդեն բարեկամացեր է հետս և ինձի պապիկ կ'ըսե...

— Նա սիրում է ծերունիներին և նախանձում այն երախաներին որոնք պապիկ ու տատիկ ունեն, ինքը չունի: Իսկ դուք երեխաներ ու թոռներ չունե՞ք, — հարցրեց ճարտարապետը:

Ծերունին մռայլվեց և թեթև հառաչեց.

— Ունեի, բայց դժբախտաբար... միայնակ ենք... — և հարևան սենյակից կանչեց կնոջը. — Թագուհի՛, հո՛ս եկուր, ծանոթացի՛ր մեր նոր բարեկամին հետ:

Եկավ կինը ու պարզեց ձեռքը ճարտարապետին:

— Ինչպե՞ս եք, մայրի՛կ, ուրա՞խ եք որ եկել եք:

— Թող ձեզի արևշատություն ըլլա: Ի՞նչպես ուրախ չըլլանք, մեր սուրբ երկիրն ենք եկեր...

Ծերունին շրջվեց դեպի ճարտարապետի որդին.

— Քո՛վս եկուր, մանչո՛ւկս, քեզի գեղեցիկ վերարկու մը պիտի կարեմ, օ՛, ինչպես ծանր ես և անունս ես գողցեր՝ Վարդանիկ, իմ անունս ալ Վարդան է: — Եվ դառնալով ճարտարապետի կնոջը՝ ավելացրեց, — Տիկի՛ն Թագվորյան, ձեր մանչը ինձի տղաս կը հիշեցնե, զոր ես կորսնցուցի երեսուն տարի առաջ. ան ալ խելացի աչքեր և շեկ մազեր ուներ...

— Այդպես է մեր ժողովրդի ճակատագիրը, — տխուր ասաց ճարտարապետը, — ես էլ որբ եմ եղել, թշնամիները հորս սպանեցին իմ աչքի առաջ...

— Որտեղացի՞ եք դուք, — հարցրեց ծերունին:

— Կիլիկիայից. հիշում եմ՝ մեր գյուղի անունը Բերդակ էր: Հորս անունը Վարդան էր, ազգանունը չեմ հիշում, այն ժամանակ վեց տարեկան էի, Թագվորյան՝ իմ բարերարի ազգանունն է, որը փրկել է ինձ սովից և որբանոց հանձնել:

— Իսկ ձեր անունն ի՞նչ է, — հարցրեց ծերունին:

— Անունս Անդրանիկ է:

Ծերունի դերձակը ամուր ծածկեց դեմքը և երկար մնաց այդ վիճակում: Հփոթվեցին բոլորը: Ծերունին իջեցրեց ձեռքերը, նրա դեմքն այրվում էր, հոնքերը վերև էին քաշվել, աչքերի բիբերը՝ լայնացել:

— Խնդրեմ, ըսե՛ք, ճի՞շտ է, որ ձեր գյուղը Բերդակ կը կոչվեր, իսկ ձեր անունը Անդրանիկ է...

— Այո՛, ճիշտ է, — պատասխանեց ճարտարապետը՝ շփոթմունքից կարկամած:

Դերձակը ծեր արծվի պես հարձակվեց ճարտարապետի վրա.

— Ջավա՛կս, իմ կորսված զավա՛կս...

Հետևյալ օրը բերևեբերան էր անցնում ծերունու կյանքի պատմությունը: Խոսում էին այն մասին, թե ինչպես նա էլ որդու նման ողջ է մնացած եղել դիակների մեջ և ծանր վիրավոր վիճակում կարողացել է փախչել ու փրկվել ստույգ մահից...

Հուտով ծերունի Վարդանը աշխատանքի է տեղավորվում կարի արհեստանոցում: Ամեն օր, երբ նա վերադառնում է տուն, նրան դիմավորում է փոքրիկ Վարդանիկը և ուրախ ու զիլ ձայնով կանչում.

— Պապի՛կը եկավ, պապի՛կը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Հայ գրականության համար ինչո՞վ է նշանավոր Հրաչյա Քոչարը:
2. Համացանցում գտի՛ր լրացուցիչ տեղեկություններ Հրաչյա Քոչարի ու նրա երկերի մասին:
3. Դասընկերներով հայթայթե՛ք նշանավոր ասույթներ՝ քաղված Հրաչյա Քոչարի երկերից:
4. Կարդա՛ Հ. Քոչարի «Գեներալի քույրը» պատմվածքը և համեմատի՛ր քո կարդացած այլ պատմվածքների հետ:
5. Կարդա՛ նաև Հրաչյա Քոչարի «Կարոտ» վիպակը:

Գրիչն այդ մարդու ձեռքին սրի ուժ ու թափ էր ունեցել: Եվ այդ փայլուն սուրը ձեռքն առած՝ նա թրատել էր բոլոր նրանց, ովքեր իրեն դուր չէին եկել իրենց խոսքով ու գործով, թրատել էր առանց երկմտելու, հսկայի ուժով և երդվյալ զորավարի համառությամբ: Չէր խնայել ո՛չ իր ապրող ժամանակակիցներին, ո՛չ էլ իրենից դարեր առաջ մեռած մարդկանց: Այնպես էր վիճում, կռվում նրանց հետ, որ կարծես կանգնած էին իր առջև ու դիմադրելով անձնատուր չէին լինում: Կռվում էր հազար հինգ հարյուր տարի առաջ նահատակված զորավարի հետ՝ մեղադրելով նրան, որ բանակը անստույգ ճանապարհով է տարել և պատճառ դարձել ծանր պարտության ու ժողովրդական տառապանքների, հազար տարի առաջ մեռած հոգևոր առաջնորդի հետ, որ իր գործունեությամբ թուլացրել է պետական կյանքի ուժը՝ եկեղեցու շահերը գերադասելով: Թունավոր խոսքերով խոցում էր իր ժամանակակից վիպասանին, որ, Արևմտյան Հայաստանում առևանգված քույրերի լացն ու ողբը չլսելով, Կովկասում փարթամ կյանքով ապրող տիկինների սիրային տանջանքներն է նկարագրում: Պարսավում, անգոսնում էր այն հասարակական գործիչներին, որ, հոգով խլացած ու մտքով բթացած, օտարածին զաղափարներ էին կրկնում՝ չճանաչելով իրենց ժողովրդի կարիքներն ու անտարբեր մնալով նրա նկրտումների հանդեպ, կամ նրանց, որ, եվրոպական քաղաքների սրճարաններում նստած, արցունքներ էին թափում «ազգի համար», երբ ուրիշները թշնամու գնդակներից արյունաքամ էին լինում Տավրոսի լեռներում:

«Սպիտակ գիրքը» պատմվածքից

ԴԱՎԹԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՍԱՍՈՒՆ

Դավիթն իր կտրիճների հետ հասավ Սասնա սահմանը: Հորթարածները, գառնարածները, նախրորդները, հովիվները, իրենց անասունը թողած, նայում էին Դավթին: Իմացան, որ Ազնանց գերդաստանի տղա է: Դավիթը նրանց բարև տվեց, ասաց, որ գնում է Սասուն՝ իր հայրենիք: Հովիվներն իրար բոթեցին:

— Առյուծ Մհերի տղան վայ թե սա է, որ կա:

Մի ջահել նախրորդ վազեց գնաց քաղաք՝ ավետիս տանելու Զենով Օհանին:

Զենով Օհանն այդ գիշեր երազ էր տեսել. Սասնա տան պարիսպը կանգնած էր: Սասնա բերդի ջահը վառվում էր, պարտեզը կանաչել էր, սոխակը երգում էր: Քնից արթնացավ, կնոջը ձայն տվեց.

— Վե՛ր կաց, ա՛յ Սառյա, լույս է արդեն, երազ եմ տեսել. կա–չկա, մեր մանուկ Դավիթը եկել է:

Սառյան պառկած տեղից ասաց.

— Ա՛յ ալևոր, չես թողնում, որ հանգիստ քնենք:

— Ա՛խ, — գայրացավ Զենով Օհանը, — օտարի զարմ ես, սիրտդ չի ցավում Սասնա տան համար:

Զենով Օհանը վեր կացավ, շորերը հագավ: Այդ պահին ավետաբեր նախրորդը ներս վազեց, ասաց.

— Բարի լո՛ւյս, ազնա՛նց Օհան, ավետիս ունես: Մի ազնավուր մանուկ է գալիս: Դավիթն է գալիս:

Զենով Օհանի սիրտը ցնծաց: Իմաց արեց Քեռի Թորոսին ու Սասնա բոլոր մեծամեծերին: Սասունցիները եկան բերդի հրապարակ: Քեռի Թորոսն ասաց.

— Հե՛յ, սասունցինե՛ր, աստված մեզ նոր տղա պարգևեց, մեր Սասնա տան ճրագը եկավ:

Սասունցիները իշխանների հետ խմբով գնացին Դավթին ընդառաջ: Հասան Սասնա սահմանը, տեսան՝ երեք անծանոթ մարդ նախրորդների հետ զրույց են անում: Զենով Օհանը ցույց տվեց երկու կտրիճի միջև կանգնած ազնավուր տղային.

— Քեռի՛ Թորոս, երևի դա է մեր ծուռ Դավիթը: — Մոտեցավ, հարցրեց. — Տղա՛, դու ո՞րտեղացի ես:

— Ես Սասնա քաղաքից եմ:

— Սասնա քաղաքի մեջ ես քեզ չեմ տեսել: Դու Սասնա մեջ մարդ ունե՞ս:

— Իմ մայրը՝ Իսմիլ խաթունը, ասում է՝ ես այնտեղ ունեմ երկու հորեղբայր՝ Վերգո ու Օհան:

Զենով Օհանը Դավթին ամուր գրկեց, երկու այտը համբուրեց, ասաց.

— Դավի՛թ, մեռնե՛մ քեզ: Զենով Օհանը ես եմ:

Դավթի տրեխները կտրտված էին, գուլպաները՝ մաշված: Սասնա բնակիչները ձեռք էին տալիս Դավթին, ողջունում էին, «բարի գալուստ» ասում, իսկ Դավիթը գլխի չէր ընկնում, որ բոլորը Սասնա երկրից են, իրեն պատիվ են տալիս: Մտածկոտ քայլում էր: Ամաչում էր ասել, որ անոթի է:

Զենով Օհանը կանգ առավ, ասաց.

— Հե՛յ, սասունցինե՛ր, բոլորիս աչքը լո՛ւյս, մեր Սասնա տան ճրագն է եկել, մեր միամորիկ Դավիթը:

Զենով Օհանը, Քեռի Թորոսն ու Սասնա ժողովուրդը Մհերի որդուն բերին քաղաք, իջեցրին այն սենյակը, որտեղ մի ժամանակ նստում էր Մհերը: Նստեցին, գինի խմեցին, եղնիկի միս կերան, ուրախություն ու խնջույք արին, Դավթի երեսը համբուրեցին ու մեկ–մեկ «մնաս բարով» ասին, գնացին:

Մնացին մենակ Դավիթն ու Զենով Օհանը:

— Է՛, հորեղբա՛յր, ո՞նց ես, ո՞նց եք ապրում:

— Որդի՛, փա՛ռք աստծու, իր ողորմությամբ ու քո հոր գերեզմանով ապրուստ ենք անում:

Սասնա քաղաքի մեջ կար մի կաղ տերտեր: Զենով Օհանը Դավթին տարավ նրա մոտ, ասաց.

— Տերտե՛ր, մեր Դավթին սաղմո՛ս կարդացրու:

Անցավ մի ժամանակ, մի օր Դավիթն ասաց.

— Հորեղբա՛յր Օհան, այսպես պարապ–սարապ սաղմոս կարդալով ապրել չի լինի: Դու քաղաքի մեջ պատիվ կունենաս, ինձ մի գո՛րծ գտիր:

Զենով Օհանը գնաց քաղաքի հրապարակ, այնտեղ կանգնած քաղաքի մեծերին առաջարկեց.

— Դավթին մի գործի տանք՝ աշխատի, ապրի:

Քաղաքի մեծերն իրար հետ խորհուրդ արեցին.

— Դավիթը փոքր է, թող լինի Սասնա գառնարած:

Զենով Օհանը եկավ տուն:

— Դավի՛թ, գառնարածություն կանե՞ս:

— Ինչո՞ւ չեմ անի: Շատ լավ ես արել, հորեղբա՛յր, որ տվել ես ինձ գառնարածության:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ Զենով Օհանը Դավթին ուղարկեց տերտերի մոտ:
2. Նկարագրի՛ր կաղ տերտերին, ինչպես պատկերացնում ես:

ԴԱՍ 17 ՀՐԱՉՅԱ ՔՈՉԱՐ

ՋՈՒԹԱԿԱՀԱՐԻ ՊԱՏՄԱԾԸ
(կրճատումներով)

Լենինգրադի երաժշտանոցում սովորելու տարիներին ապրում էի մի հայ ընտանիքում: Ծագումով էին հայ այդ ընտանիքի անդամները, ոչ՝ լեզվով ու կենցաղով, ոչ՝ բարքերով կամ ազգային պատմության ու մշակույթի իմացությամբ: Ծագումով և մի քիչ էլ՝ ազգանունով: Տիգրանյանցներ էին եղել, հիմա դարձել էին Տիկրանովներ:

Տատը՝ Ասյա Արտեմովնան, մոտ ութսուն տարեկան, բարձրահասակ, չկորացած, վեհաշուք տեսքով կին էր: Նրա հայրը զինվորական էր եղել, պաշտոնի բերումով Կովկասից Սանկտ–Պետերբուրգ էր տեղափոխվել ընտանիքով, երբ այս տատիկը երեք տարեկան, սև գանգուր մազերով աղջիկ էր եղել: Այդ ժամանակ տանը դեռ հայերեն էին խոսում, քանի դեռ ապրում էր Ասյա տատիկի տատը, որ Պետերբուրգ տեղափոխվելուց երկու տարի անց վախճանվեց:

Հիմա Ասյա տատիկն ապրում էր իր աղջկա՝ Նադեժդայի, և քսանամյա թոռան՝ Վերայի հետ:

Ասյա տատիկը, որի անունը Աստղիկ էր եղել, շատ բարի կին էր: Պատահում էր, որ մենակ մնալով՝ կանչում էր ինձ հյուրասենյակ, թեյ էր առաջարկում ու հարց ու փորձ անում Հայաստանի մասին: Երեք տարեկան հասակից երբեք չէր եղել մեր կողմերում, բայց շատ տեղեկություններ ուներ, որ քաղում էր գրքերից ու մամուլից: Հարցնում էր՝ եղե՞լ եմ Ղարաբաղում, տեսե՞լ եմ Հուշի քաղաքը, ասում են՝ ավերակ է Անի քաղաքի պես, ասում են՝ գեղեցիկ է Ղարաբաղը...

— Տեսել եմ Եվրոպայի համարյա բոլոր մայրաքա-

ղաքները, բայց հայրերիս երկիրը չեմ տեսել... Մեղավոր եմ, բայց մեղքս քավել այլևս չեմ կարող:

Ծանր ցավ ու դառը զղջում կար նրա խոսքերի մեջ:

— Իսկ ինչպե՞ս է, որ հայերեն ոչ մի խոսք չգիտեք, — հարցրի մի անգամ նրան, — ֆրանսերեն գիտեք, անգլերեն, իսկ հայոց գրերն անգամ չեք ճանաչում...

— Եվ իտալերեն, — ավելացրեց նա՝ դառը ժպիտն աչքերում: — Մանկության օրերին տատիկիս հետ ազատ խոսում էի հայերեն: Հիմա ոչինչ չեմ հիշում, ոչ մի բառ: Յոթանասունհինգ տարի է անցել: Հայրս հասել էր գեներալի աստիճանի, ապրում էինք կայսրերի այս մայրաքաղաքում տոհմիկ ազնվականների պես: Ֆրանսերենի ու իտալերենի ուսուցիչներ ունեի տանը, իսկ հայերենի հնչյունները մարեցին հիշողությանս մեջ տատիս վախճանվելուց հետո:

Եկավ ձմեռը: Խիստ ցրտեր եղան, և Ասյա տատը հիվանդացավ թոքերի բորբոքումով: Նաղեժդան, Վերան և ես գլուխներս կորցրինք: Անընդհատ ոտքի վրա էի. վազում էի մեկ բժշկի ետևից, մեկ դեղատներ: Կամ դասի չէի գնում, կամ դասերից անմիջապես հետո վազում էի տուն:

Մի օր էլ՝ դասի նստած ժամանակ, ինձ թվաց, թե Ասյա տատն ինձ է կանչում: Հստակ լսեցի նրա դողդոջուն ձայնը. «Տիգրա՛ն, Տիգրա՛ն»...

Մարմինս փշաքաղվեց: Նույն այդ րոպեին, հավատո՞ւմ եք, նույն այդ րոպեին լսարանի դուռը բացվեց, և շեմին երևաց Վերայի այրվող, թուխ դեմքը: Առանց դասախոսից թույլտվություն խնդրելու դուրս թռա: Ամբողջ մարմնով դողում էի:

— Տատիկը բարձր ջերմություն ունի... գիտակցությունը կորցրել է... Մեզ չի ճանաչում... Անընդհատ զառանցում է... քո անունն է տալիս, Տիգրա՛ն...

Գլխապատառ վազեցինք, ներս ընկանք տատիկի ննջասենյակը: Նաղեժդան, մոր մահճակալի կողքին նստած, գլուխը կորցրած, անվերջ կրկնում էր.

— Չեմ հասկանում, մայրի՛կ, ի՞նչ ես ասում:

Տատը չճանաչեց ինձ ու Վերային: Հայացքն անորոշ մի կետի հառած՝ խոսում էր ինքն իր հետ: Կռացա մահճակալին, ականջ դրի ու զարմանքից շշմեցի, մարմինս փշաքաղվեց: Նա բառեր էր արտասանում

Աշխատանք և Հայ ժողովուրդ. ահա իմ դավանանքը: Ուխտել եմ հավատարիմ մնալ այդ երկու հսկաներին մինչև ի մահ, հավիտյան: Նրանք իմ ուժն են և ինձ առաջնորդողները, որ երբեք չեն լքում ինձ: Թե՛ ոգեշնչումների և թե՛ հուսահատության պահերին նրանք հայտնվում են իմ գլխավերևում ու կանչում են ինձ զգաստանալու և գործելու:

«Սպիտակ գիրքը» պատմվածքից

հայրենի Ղարաբաղի բարբառով. «Մնաք բարո՛վ, ա՛մ խոխեք, ես գնալական ամ, մնաք բարով»...

Ծանր էր շնչում, դեմքը ջերմից վառվում էր: Լռում էր մի պահ ու դարձյալ կրկնում նույնը

Ականջներիս չէի հավատում: Ավելի էի կռանում հիվանդի վրա: Չէ, լսողության ոչ մի խաբկանք չկար: Այսպես տատը հայերեն էր խոսում: Յոթանասունհինգ տարի առաջ մարած, ժամանակի ու տարածության անհունի մեջ կորած հնչյունները կենդանացել ու արձագանքում էին հիմա նրա հոգու խորին գաղտնարաններում և դուրս գալով՝ դողում, թրթռում էին նրա ծերունական շրթունքների վրա:

— Ի՞նչ է ասում, — հարցնում էր Նադեժդան:

— Մի՛ խանգարեք, թողե՛ք, որ խոսի, ես լսեմ:

Այսպես տատն աստիճանաբար հանդարտվում էր: Աչքերը փակեց, երկար լուռ մնաց, ապա կրկին դողդողացին շրթունքները.

— Ծարա՛վ ամ, աղջի՛, ծարա՛վ ամ, քե՛ մատաղ...

Վազեցի, ծորակից կես բաժակ ջուր բերեցի, մոտեցրի շուրթերին: Մի կում խմեց, մշուշոտ հայացքը մի քիչ լուսավորվեց, շշնջաց.

— Զորանա՛ս, քե՛ մատաղ, զորանա՛ս...

Ու ժպտաց, ճանաչեց ինձ. «Տիգրա՛ն»... Ճանաչեց Նադեժդային ու Վերային: Եվ մի անգամ էլ հազիվ լսելի շշնջաց. «Զորանաս, քե՛ մատաղ»...

Երևույթն իսկապես որ հրաշքի էր նման: Աչքերս լցվել էին արտասուքով:

— Նա հայերեն է խոսում, հասկանո՞ւմ եք, խոսում է հայերեն, — պետք եղածից ավելի բարձր ձայնով ասացի ես աղջկան, թոռնիկին ու հարևաններին, որոնք եկել ու լուռ կանգնել էին իմ թիկունքում:

Այսպես տատի շուրթերը կրկնում էին նույն բառերը.

— Զորանաս, քե՛ մատաղ, զորանա՛ս, զորանա՛ս...

Հուզմունքից թարգմանել չէի կարողանում, ո՛չ «քե մատաղ» արտահայտության և ո՛չ էլ «զորանաս» բառի հոմանիշներ չէի գտնում ռուսաց հզոր ու հարուստ լեզվի մեջ, չնայած ռուսերեն լավ գիտեմ, մեծացել ու կրթվել եմ Ռուսաստանում:

Այսպես տատը դեռ մրմնջում էր հայերեն այդ բառերը. հետո աչքերը փակեց: Ավելի թեթև էր շնչում:

Երեկոյան ինձ մոտ եկան Նաղեժդան ու Վերան:

— Տատիկը լավ է, Տիգրան, — ասաց Վերան: Բայց այդ ի՞նչ հրաշք էր, ի՞նչ անհավատալի բան էր...

Դրանից հետո այդ «հրաշքն» այլևս չկրկնվեց: Իսկ երկու շաբաթ հետո, երբ Ասյա տատն արդեն ապաքինվում էր, երբ պատմեցինք, չէր հավատում, որ բարձր ջերմության մեջ ինքը հայերեն է խոսել:

— Ինչ՞ եք հնարում, — ասում էր նա, — ես ոչ մի բան ու ոչ մի բառ չեմ հիշում...

Ես հստակ, հատ–հատ արտասանելով, կրկնեցի նրա ասած բառերը. «Մնաք բարով, ա՛խ խոխեք, ես գնալական ամ... Ջորանա՛ս, քե՛ մատաղ...»:

Ութսունամյա Ասյա տատը, զարմանքից բիբերը լայնացած, նայում էր ինձ՝ լսողությունը լարած: Ես ավելի դանդաղ կրկնեցի այն բոլոր բառերը, որ լսել էի նրա շուրթերից: Ավելի ու ավելի էին լայնանում տատի բիբերը: Հետո հուզված, դողդոջուն ձայնով նա շշնջաց ռուսերեն՝ կոպերը փակած, որ ոչ միայն լսի, այլև տեսնի այն հնչյունները, որ թվում էր, թե վաղուց լռել–հանգել էին նրա մեջ.

— Կարծես հիշում եմ... Թվում է՝ այն բառերն են դրանք, որ ասաց տատս մեռնելու պահին...

Հիշում էր, բայց կրկնել չկարողացավ:

Քսանհինգ տարի է անցել այդ օրերից, բայց ես երբեք չեմ մոռանում այդ դեպքն ու այդ բարի կնոջը, հիշում եմ նրան, մանավանդ երբ խոսում են մայրենի լեզվի մասին: Այդպիսի րոպեներին կարծես լսում եմ նաև նրա դողդոջուն ձայնը. «Ջորանաս, քե՛ մատաղ, զորանա՛ս, զորանա՛ս»...

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. **Դասընկերներով հայթայթե՛ք ասույթներ Հրաչյա Քոչարի մասին:**
2. **Կարդա՛ Հրաչյա Քոչարի «Նահապետը» վիպակը և համեմատի՛ր քո կարդացած այլ վիպակների հետ:**
3. **Կարդա՛ նաև Հրաչյա Քոչարի «Սպիտակ գիրքը» ժողովածուն ամբողջությամբ:**

Ինչքան էլ սուրբ լինեն նահատակների անունները ու նրանց արյունը, մենք պիտի կոչ անենք նոր սերունդներին՝ խուսափելու նրանց օրինակից: Բավական է: Նահատակներն արդեն շատ են: Մեզ պետք են ապրող, մարտնչող ու հաղթանակող զինվորներ և ոչ թե նահատակություն, այլ հաղթանակ ուխտած զորավարներ...

«Սպիտակ գիրքը» պատմվածքից

ԴԱՎԹԻ ՀՈՎՎԱԿԱՆ ԱՐԿԱԾՆԵՐԸ

Ձենով Օհանը Դավթի համար շինել տվեց մի զույգ պողպատե կոշիկ, մի պողպատե ցուպ, ասաց.

— Տղա՛ս, վաղը քաղաքի գառները կտանես մեր Սասնա սարերը, կարածեցնես, կեսօրին դադար կտաս աղբյուրի մոտ, կսպասես, մինչև քեզ հաց բերեմ:

Սասունցիներն իրենց ուլն ու գառը բերին: Երբ տեսան Դավթի ցուպը, շատ վախեցան, ասին.

— Օհա՛ն եղբայր, վա՛յ թե Դավիթը պողպատե ցուպով խփի, մեր գառները սպանի:

— Ես հո ծուռ չե՞մ, — նեղացավ Դավիթը:

Գառներն առաջն արեց, բարձրացավ Սասնա սարը, արածեցրեց: Կեսօրին գառները քշեց մի քարայրի մեջ, ինքը մի մեծ քարի ստվերում քնեց: Երբ քնից ելավ, տեսավ՝ քարայրը դատարկ է: Գառներն ու ուլերը անհետ կորել են: Դավիթը գոռաց.

— Հայ–հա՛յ, սարե՛ր, Սասնա՛ սարեր, ո՞ւր են իմ գառները, ո՞ւր են իմ ուլերը:

Դավթի գոռալուց ահռելի մի դմբդմբոց ընկավ սար ու ձոր: Աղվեսները, նապաստակները, կզաքիսները քարի ու թփի հետևից դուրս թռան, փախան:

— Վա՞յ, իմ ուլերը ո՞ւր են փախչում:

Ասաց ու վազեց հետևներից, որին քարի տակից, որին թփի հետևից բռնեց, բերեց: Դու մի ասի, Դավթի գառները արածելով էլի եկել հավաքվել են քարայրի առաջ: Դավիթը բոլորին քշեց քարայր:

Ձենով Օհանը Դավթին հաց բերեց ու տեսավ՝ պողպատի կոշիկները կտրտվել են, ցուպը մաշվել է.

—Դավի՛թ, օրական մի զույգ կոշիկ ու մի ցուպ որ շինել տամ, քո վարձը չի հանի:

— Է՛, հորեղբա՛յր, այնքան եմ վազվզել, որ կոշիկ չի մնացել ոտքիս: Վաղը ես էլ գառ չեմ արածեցնի:

— Ի՞նչ է, գառնարածությունն անուշ բան չէ՞:

— Անուշ բան է, հորեղբա՛յր: Այս կարմիր գառներն ու սև ուլերը շատ հանգիստ են, շատ խելոք: Բայց այն խատուտիկները, երկարապոչերը, ցիցականջները հոգիս կերան. ամբողջ օրը փախչում են:

— Դրանք ուլեր չեն, գազաններ են, թող գնան:

Բայց երեկոյան Դավիթը բոլորին քշեց քաղաք: Տերերը եկան, իրենց գառները ջոկեցին, տարան, հետն էլ, ով ինչքան կարողացավ, կուզ, նապաստակ, աղվես տարավ: Նապաստակները մորթեցին կերան,

աղվեսներն ու կուզերն էլ քուրք արին, հագան:

Զենով Օհանը Սասնա մեծերին կանչեց, ասաց.

— Սա չեղավ, Դավիթն ուլ ու նապաստակ չի ջոկում, ամբողջ օրն ընկնում է գազանների հետևից, օրական մի զույգ պողպատե կոշիկ է մաշում:

— Բերե՛ք Դավթին անենք նախրորդ:

Լուսաբացին քաղաքացիները տավարը բերին: Դավիթը նախիրը տարավ Սասնա դաշտ, թողեց արոտում, ինքը մեկնվեց մի քարի ստվերում, քնեց: Արթնացավ, տեսավ՝ նախիրը չկա:

— Հայ–հա՛յ, Սասնա՛ սարեր, իմ նախիրն ո՞ւր է:

Դավթի գոռոցից ամպի դղրդյուն ընկավ սար ու ձոր: Այս անգամ էլ իրենց որջերից լույս աշխարհ թռան անհաշիվ գայլ, արջ, վագր ու առյուծ:

Դավիթը բոլորին հավաքեց բերեց: Նախիրն էլ սարում արոտից կշտացել, իջել էր դաշտը ու մակաղել գետափին: Դաշտը լցվել էր գազաններով: Դրանք Դավթի ահից իրար չէին դիպչում:

Կեսօրին հորեղբայրը Դավթին հաց բերեց, տեսավ՝ դաշտը լիքն է գազաններով, հեռվից ձայն տվեց.

— Դավի՛թ, ի՞նչ ես արել: Արի՛, քո հացն ա՛ռ:

Դավիթը իր հացն առավ, եկավ նախրի մոտ:

Զենով Օհանը ափալ–թափալ հասավ Սասուն.

— Հե՛յ, սասունցինե՛ր, քաղաքի դարպասները փակե՛ք. Դավիթն ինչքան գայլ, արջ, վագր, առյուծ կա, խառնել է նախրին, երեկոյան կբերի քաղաք:

Երեկոյան Դավիթը նախիրը քշեց, բերեց: Տեսավ՝ ոչ ոք չի գալիս, որ տավարը տանի տուն: Գլխարկը դրեց գլխի տակ ու քնեց: Լուսաբացին տեսավ՝ բոլոր գազանները փախել են սար, մնացել են միայն կովերն ու գոմեշները: Քաղաքացիները վախվխելով եկան, իրենց կովն ու գոմեշը տարան տուն:

Սասնա մեծերը եկան Զենով Օհանի մոտ, ասին.

— Օհա՛ն եղբայր, այս մեկն էլ չեղավ: Դավիթն իրոք որ ծուռ է, արջ ու կով չի տարբերում իրարից:

Դավիթը նեղացավ ու Զենով Օհանի տուն չգնաց:

Առավոտյան Քեռի Թորոսը եկավ քաղաք: Խռոված Դավթին գտավ, տարավ իր տուն:



ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ սասունցիները հրաժարվեցին Դավթի նախրապանությունից:
2. Նկարագրի՛ր Դավթի հավաքած «նախիրը»:

ԴԱՍ 18

ԽԱՉԻԿ ԴԱՇՏԵՆՑ

Ո՛վ մարդ, հայոց տունն է քո դեմ, զգո՛ւշ անցիր դու իմ բակից,
Ամեն քարը որմ է՝ պոկված մի հին բերդի աշտարակից:

Խաչիկ Դաշտենց

Իսկական ազգանունը՝ Տոնոյան: Ծնվել է 1910–ի մայիսի 25–ին Արևմտյան Հայաստանում՝ Բիթլիսի նահանգի Խութ–Բռնաշեն գավառի Դաշտադեմ գյուղում: Մեծ եղեռնից մազապուրծ՝ հանգրվանել է Գյումրիի ամերիկյան որբանոցում, որտեղ էլ ստացել է միջնակարգ կրթություն: Եղել է մանկավարժ Հոռոմ գյուղում: 1932–ին ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական բաժանմունքը, 1940–ին՝ Մոսկվայի օտար լեզուների հաստատության անգլերենի բաժինը: Մի քանի տարի ապրել ու աշխատել է Իրինդ գյուղում: Ապա Երևանում զբաղվել է լրագրությամբ: 1965–ին ստացել է բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան: 1965–1974 թթ. աշխատել է ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտում: Դասախոսել է Երևանի բուհերում: Վախճանվել է 1974–ի մարտի 9–ին Երևանում:

Գրել է բանաստեղծություններ (ամփոփված են «Երգերի գիրք», «Գարնանային երգեր», «Բոց» և այլ ժողովածուներում), պոեմներ («Ֆայտոն Ալեքը», «Ծուռ խութեցին» և այլն), «Տիգրան Մեծ» թատերգությունը, վեպեր («Խողեղան», «Ռանչպարների կանչը»), գիտական աշխատանքներ («Բայրոնը և հայերը», «Ըղձյալ այգաբացի երգիչը»): Կազմել է հայկական դպրոցների համար անգլերենի դասագիրք, անգլերենից թարգմանել է Վիլյամ Հեքսպիր, Վիլյամ Սարոյան և ուրիշների:

Գլուխգործոցն է «Ռանչպարների կանչը» վիպասքը՝ նվիրված հայ ֆիդայական շարժմանը:

ՀԱՅԵՐԵՆ

Մեր շուրջը՝ լեզուներ նոր ու հին,
Մեր շուրջը խոսում են այլորեն,
Եկ խոսենք, եղբայր իմ, հայերեն:

Կուլ չերթանք այս ահեղ լափումին,
Թույլ չտանք՝ մեր լեզուն ավերեն,
Եկ խոսենք, միշտ խոսենք հայերեն:

Մենք ունենք աշխարհում Մասիս սար,
Այդ սարը գալիս է դարերեն,
Նա անվերջ խոսում է հայերեն:

Ջավակիդ հայկազյան դպրոց տար,
Եկ գրենք Մեսրոպյան տառերով,
Եկ խոսենք մեր անուշ բարբառով:

Մեր հանդեպ՝ ապագա լուսեղեն,
Թող հնչի մեր լեզուն վեհորեն,
Թող այրվի մեր հոգին այդ հրեն:

Մեզ ցրեց մի բազուկ անօրեն,
Թե կուզես՝ սերունդներ մեզ ներեն,
Մենք Հայ ենք, եկ խոսենք հայերեն:

Այս օտար աշխարհի ցրտերում
Եկ սիրենք մեր լեզուն ջերմորեն,
Եկ վառենք ու վառվենք հայերեն:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Հայ գրականության համար ինչո՞վ է նշանավոր Խաչիկ Դաշտենցը:
2. Համացանցում գտի՛ր լրացուցիչ տեղեկություններ Խաչիկ Դաշտենցի ու նրա երկերի մասին:
3. Հայթայթի՛ր ասույթներ Խաչիկ Դաշտենցի երկերից:
4. Կարդա՛ Խաչիկ Դաշտենցի «Ֆայտոն Ալեքը» պոեմը և համեմատի՛ր քո կարդացած այլ պոեմների հետ:
5. Կարդա՛ նաև Խաչիկ Դաշտենցի «Խոդեդան» վեպը:

Խաչիկ Դաշտենցի դիմանկարը, 1956 թ.
Նկարիչ՝ Մարտիրոս Սարյան

Խաչիկ Դաշտենցի դիմանկարը
երգիծանկարիչ՝ Ալեքսանդր Սարուխան

ՀԱՐԻՍԱՆ ԵՎ ԱՎԱԶԱԿ ԴԵՎԵՐԸ

Ժամանակ անցավ: Գարուն էր: Դավիթն ասաց.

— Քեռի՛ Թորոս, վարուցանքի, հոտաղ–մշակի օրեր են: Ինձ էլի մի տե՛ղ տար, տո՛ւր նախրորդ:

Քեռի Թորոսը գիտեր՝ Դավիթը խոսքը որ մի անգամ ասաց, կանի: Դավթին խրատեց.

— Որդի՛ս, տավարը լուսաբացին կտանես մեր Սասնա սարերի հետև, այնտեղ արոտ կա, սպիտակ մի քար կա, աղբյուր կա: Տավարը կարածեցնես մինչև կեսօր, կբերես այդ աղբյուրի վրա, ջուր կտաս: Զընկնես այն շատ փախչողների հետևից, հա՛:

Դավիթը նախիրն արածեցրեց այնքան լավ, որ մինչև ամառ անասունները գիրացան, կովերն առատ կաթ էին տալիս, եզները ժիր լուծ էին քաշում:

Եկավ Աստվածածնի կիրակին: Դավիթն իր նախիրը տարավ սար: Յոթ գյուղի նախրորդներ հավաքված էին այնտեղ: Սասունցիները՝ մեծ ու փոքր, իշխան ու ռամիկ, խմբով գնում էին դեպի սար:

— Սրանք ո՞ւր են գնում, — հարցրեց Դավիթը:

— Ուխտ են գնում, — ասին նախրորդները: — Երաշտ կա այս տարի: Կգնան սուրբ Աստվածածին, մատաղ կանեն, հարիսա կեփեն, դափ կխփեն, զուռնա կփչեն, կպարեն, կուրախանան, հարիսա կուտեն:

— Վա՛խ, — հառաչեց մի նախրորդ, — մեկն էլ չկա՝ գնա մեզ հարիսա բերի, մի գդալ ուտենք:

Դավիթը վեր կացավ:

— Իմ նախիրը պահե՛ք՝ ես գնամ, հարիսա բերեմ:

Գնաց, բարձրացավ ուխտատեղ: Տեսավ՝ յոթկանթանի պղինձը դրած է թոնրի մեջ, մի կաղ կին էլ խառնում է հարիսան: Դավիթը խնդրեց.

— Նանե՛, ինձ մի փշուր հարիսա տա՞ս: Յոթ գյուղի նախրորդ ահա ժողովվել են Սպիտակ աղբյուրի մոտ: Գյուղի աղքատը որ կա, նախրորդն է:

— Տերտերը պիտի հարիսան օրհնի, ժամավորն էլ պիտի իր հարիսան ուտի, նոր ավելցուկը տամ քեզ:

— Նանե՛, ավելցուկը շանն են տալիս, — բարկացավ Դավիթը, ձեռքը մեկնեց, պղինձը թոնրից հանեց, իր մահակն անցկացրեց պղնձի կանթերին, շալակեց, ինչքան որ հաց էին թխել, թևատակին դրեց:

— Ա՛յ ժողովուրդ, — ճչաց կինը, — Սասնա ծուռ Դավիթը հարիսան ու բոլոր հացերն առավ, գնաց:

Մի ուխտավոր աքլորացավ.

— Եկեք զարկենք դրան, հարիսան ձեռքից խլենք:

Մի ալևոր մարդ ասաց.

— Գործ չունեք: Դա Մհերի որդին է, թե՛ ծուռ է, թե՛ ազնավուր: Ձեզ կխփի, կանի խայտառակ:

Դավիթը հասավ Սպիտակ աղբուր: Տեսավ՝ նախրորդներն ահից ցամաքել են: Մի նախրորդ ասաց.

— Դավի՛թ, դու որ գնացիր, քառասուն ավազակ դև եկան, նախրից քառասուն կով քշեցին, տարան:

Դավիթը մահակն առավ, բարձրացավ սարը: Տեսավ՝ մի քարանձավից ծուխ է բարձրանում: Քառասուն դևն էլ այնտեղ էին: Դավիթը մի հսկա ժայռ դրեց քարայրի դռան դեմ ու գոռաց: Սարսափը տիրեց ավազակներին: Սկսեցին մեկ–մեկ դուրս գալ: Դավիթը մեկ–մեկ վզները ոլորեց ու մի կողմ գլորեց: Մտավ քարայր: Մի սենյակում լիքը ոսկի էր, մյուսում՝ արծաթ, երրորդում՝ զուգս ու գոհարեղեն: Դու մի ասի՝ այն օրվանից, ինչ Մհերը մահացել էր, այդ ավազակ դևերը Սասունն ավերել, թալանել, բերել ու լցրել էին այդ քարայրը: Մի սենյակում էլ մի սիրուն քուռակ կար: Մախազը լցրեց ոսկով, գնաց, յոթ գյուղի մարդկանց հավաքեց, ասաց.

— Այս ոսկին առե՛ք, բաժանե՛ք ձեր մեջ՝ ի փոխ ձեր կովերի, որ դևերը տարան մորթեցին:

Դավիթը եկավ Սասուն, գնաց Քեռի Թորոսի մոտ.

— Քեռի՛ ջան: Մարդկանց հավաքի՛ր, քառասուն պարկ առնենք, գնանք, ոսկի բերենք:

— Գնա՛, ա՛յ ծուռ: Մի բուռ կորեկ չբերիր, քառասուն պարկ ոսկի՞ պիտի բերես:

Դավիթը մեջքից արձակեց իր մախազը, ոսկին թափեց քեռու առջև: Քեռի Թորոսն ասաց.

—Դավի՛թ, սպանե՞լ ես այն ավազակ դևերին:

Վերցրին քսան ջորի, քառասուն պարկ, գնացին:

Դավիթը նրանց հասցրեց քարայր, ժայռը հետ տարավ, մտավ ներս: Հավաքեցին, ինչ որ կար՝ ոսկի, արծաթ, գոհարեղեն, լցրին պարկերը, բեռնեցին ջորիներին, եկան Սասնա քաղաք: Այդ ամենը լցրին Սասնա մառանները: Սասունը լողում էր ոսկու մեջ:

Դավիթն այդ առատ ավարից իր համար վերցրեց միայն մի քուռակ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ քեռի Թորոսը չէր հավատում Դավթին:
2. Նկարագրի՛ր սպանված դևերին պատկերացրածիդ պես:

ԴԱՍ 19 ԽԱՉԻԿ ԴԱՀՏԵՆՑ

ՏԵՐԳԵՎԱՆՔԻ ԳԻՀԵՐԸ
(Հատված «Ռանչպարների կանչը» վիպապքից)

Ծծմակի գագաթի մոտ մի բարձր քարաժայռ կար: Մագլցեցի վեր և նստեցի այդ ժայռին: Աջից մի խոր կիրճ էր բացվում, երևում էին վիհեր, անձավներ:

Ծծմակը հայտնի էր կաքավներով, որ արևածագից մինչև մայրամուտ կվկվում էին ձորերի ու ծերպերի մեջ՝ գունազեղ փետուրները ժայռերին թափելով:

Վարժապետ Սենեքերիմը պատմում էր, որ երբ Մշո դաշտի հեթանոս տաճարները կործանվեցին, նրանց քրմերն ու քրմուհիները քարակաքավներ դարձան ու թռան դեպի ապառաժոտ բլուրները: Նրանց մի մասը թաքնվեց Ծծմակա Քթի ծերպերի մեջ:

Ահա նրանք խմբերով բխում են Ծծմակի քարուտներից և զգույշ պտույտներ գործելով արևի տակ՝ մայրամուտից առաջ շտապում են թաքնվելու իրենց խոռոչներում: Ես նայում եմ նրանց, և մի տեսակ սրբազան դող է պատում ինձ:

Բարձր քարաժայռին նստած՝ երկար նայեցի Մշո դաշտին: Դաշտի առաջին բնակիչները, ըստ ավանդության, եղել են Սիմ նահապետի սերունդները, որ ջրհեղեղից հետո բնակություն են հաստատել Մշո թիկունքի լեռներին, որոնք նրա անունով կոչվել են Սիմ: Նրա կրտսեր որդի Տարբանին բաժին ընկավ այդ լեռների առաջ տարածված հարթությունը. այն էլ նրա անունով կոչվեց Տարբանի կամ Տարոնի դաշտ:

Իսկ Մելքոն վարժապետը պատմում էր, որ Մաշտոցի գրերից առաջ Հայաստանում եղել են քարե հեթանոս մատյաններ: Երբ թշնամին մտել է Տարոն և

սկսել է դրանք ջարդել, նրանց միջի բոլոր գրերը մի ակնթարթում դարձել են մեղուներ և աղմկալի դուրս փախչելով քարե մատյաններից՝ պարս են կապել Ծծմակի և Ծիրինկատարի ապառաժներին:

— Առաքելոց վանքի ձանապարհին, ուր Արաբոյի քարն է, — աչքերը սրբելով՝ ասաց մի անգամ Մելքոն վարժապետը, — մի գազաթ կա՝ թուխ ժայռերով, որ կոչվում է Մեղրի քարեր: Դա մեղրաձանձեր դարձած մեր հին ու հալածական գրերի հավերժական բնակավայրն է: Իմաստության փոխարեն նրանք այժմ մեղր են շինում մարդկանց համար:

Ծծմակա Քթի մեծ ժայռին նստած՝ նայում եմ Մեղրի քարերին: Մեղուները մայրամուտի ցոլքերի մեջ վերջին պտույտներն են գործում իրենց քարե փեթակների շուրջը:

Իմ աչքի առաջ է Տերգեվանքը՝ իմ մորաքրոջ գյուղը: Գինեվարդ մորաքույրս խաշած ցորեն է փռել տանիքին: Սարի կողերով շինականներ են իջնում դեպի գյուղ: Առաքելոց վանքից են գալիս: Գնացել են մոմեր վառելու Դավիթ Անհաղթի գերեզմանին: Մորաքույրս, ինձ մի օր վանքում տեսնելով, ասաց. «Դու էլ մի մոմ կպցրու Անհաղթի խաչքարին»: Ես ասացի՝ թող տերգեվանքցիք կպցնեն, իրենց գյուղում է ծնվել: «Ինչո՞ւ, դու հայ չե՞ս», — նեղացավ վրաս Գինեվարդ մորաքույրս և մի դեղնամոմ վառելով՝ տվեց ձեռքս՝ ինձ տանելով մի հին խաչքարի մոտ:

Այնքան հափշտակված էի Ծծմակից դեպի Մեղրի քարերը և Ալվառինջ ու Տերգեվանք գյուղերը բացվող տեսարանով, որ աննկատելի իջավ երեկոն: Նախ թանձր մթնեց, ապա երկնքի չորս կողմը առկայծեցին աստղերը՝ ասես իրարից լույս առնելով:

Գեղեցիկ է գիշերը Մշո դաշտում....

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. **Հայթայթի՛ր ասույթներ Խաչիկ Դաշտենցի մասին:**
2. **Կարդա՛ Խաչիկ Դաշտենցի «Ծուռ խութեցին» պոեմը և համեմատի՛ր քո կարդացած այլ պոեմների հետ:**
3. **Կարդա՛ նաև Խաչիկ Դաշտենցի «Ռանչպարների կանչը» վեպն ամբողջությամբ:**

Խաչիկ Դաշտենցի դիմանկարը, 1961 թ.
Նկարիչ՝ Հարություն Կալենց

Իր կյանքը անանձնական ապրած Խաչիկ Դաշտենցը իր հայրենիքի երջանկության բրաբիոն ծաղիկը որոնող «խենթերից» մեկն էր:

Մուշեղ Գալշոյան

ՍԱՍՆԱ ՊԱՌԱՎԸ ԵՎ ՈՐՍՈՐԴ ԴԱՎԻԹԸ

Դավիթն ավազակ դևերին որ կոտորեց, եղավ Սասնա սիրելին: Ջենով Օհանը Դավթին էլի տուն բերեց, նրա համար գտավ մի լավ բազե, ասաց.

— Տղա՛ս, Մհերի որդուն վայել չէ, որ նախիր արածեցնի, գնա՛, քեզ համար ո՛րս արա:

Դավիթը, վերցնելով բազեն, հեծնելով դևերից խլած քուռակը, կաքավ, լոր ու ճնճղուկ էր բռնում:

Սասունում կար իմաստուն մի պառավ: Ասում էին՝ ջահել ժամանակ Սասնա Մհերի սիրածն էր եղել: Պառավն ուներ մի կորեկի արտ: Մի օր գնաց՝ իր կորեկին աչք ածի, տեսավ՝ Դավիթը, քուռակը հեծած, կորեկի արտում լոր ու ճնճղուկ է բռնում:

— Դավի՛թ, ի՞նչ ես անում, կորեկս ոտքի տակ ես տվել: Դու իմ արտի ճնճղուկներո՞վ պիտի կշտանաս: Գնա՛ սարերը, եղնիկ ու վայրի ոչխա՛ր սպանիր:

— Նանե՛, սար որ գնամ, վայրի ոչխար ինչո՞վ զարկեմ: Կարգին նետ-աղեղ չկա:

— Գնա՛, հորեղբորիցդ ուզի՛ր քո հոր նետ-աղեղը:

Դավիթը եկավ տուն, հարցրեց Ջենով Օհանին.

— Հորեղբա՛յր, իմ հոր նետ-աղեղն ո՞ւր է:

— Գնա՛ ցախատուն, այնտեղ է: Թե կարողացար լարը կեռն անցկացնել, տա՛ր:

Դավիթը նետ-աղեղը բերեց, ձեռքը գցեց ու լարն անցկացրեց կեռի վրա: Հորեղբայրը զարմացավ.

— Մհերը մի ժամ չարչարվում էր, նոր այդ լարը կեռն էր գցում: Դու հենց ձեռք տվիր, լարը կեռն անցավ: Դու հորիցդ ուժեղ ես:

Դավիթը հոր նետ-աղեղով ամեն օր որս էր անում: Մի օր ճանապարհին տեսավ՝ ագռավի երամն ընկել է Պառավի արտը, կորեկ է ուտում: Մտածեց. «Նետով քսան ագռավ էլ խփեմ, մնացածները կթռչեն»:

Ձեռքը մեկնեց, մի բարդի արմատահան արեց ու, որ չտարավ-բերեց արտի այս գլխից այն գլուխը, ագռավ, կորեկ մեկտեղ հավաքեց, արեց մի բարդոց: Պառավը եկավ, տեսավ, ծնկներին խփեց, ասաց.

—Դավի՛թ, քո ուժն իմ արտի՞ն պատեց: Քո հայրը՝ ողորմածիկ Առյուծ Մհերը, աղքատի հայրն ու մայրն էր: Դո՞ւ պիտի լինես այն հոր տղան: Իմ հույսը այդ կորեկն էր, դու արմատահան տրորեցիր: Ի՞նչ ուտենք ես ու աղջիկս: Դու, որ այդքան զորեղ տղամարդ ես, ինչո՞ւ չես գնում Ծովասար:

— Ծովասարում ի՞նչ կա:

— Ծովասարը քո ողորմածիկ հոր որսատեղն է: Զորս բոլորը պարիսպ է քաշած, մեջը՝ ինչքան ուզես արջ, գայլ, կխտար, եղնիկ, վայրի ոչխար: Մսրա Մելիքը եկավ, քո հոր Ծովասարը գավթեց: Հիմա հրաման չկա, որ սասունցիները Ծովասար գնան, որս անեն: Ինչո՞ւ դու չես գնում՝ տիրես քո հոր որսասարին:

— Ես չգիտեմ՝ որտեղ է իմ հոր որսատեղը:

— Գնա՛, բռնի՛ր հորեղբորդ օձիքը, թող ցույց տա:

Դավիթը եկավ, բռնեց հորեղբոր օձիքը.

— Հորեղբա՛յր, տա՛ր ինձ Ծովասար:

Դավիթը, Ջենով Օհանը, Քեռի Թորոսը Սասնա ջահելների հետ գնացին, հասան Ծովասար: Սարի չորս բոլորը պարիսպ էր քաշած:

— Սա ի՞նչ պարիսպ է, — հարցրեց Դավիթը:

— Որդի՛ս, այս պարիսպը քո հայրն է քաշել, որ իր որսը սարից չփախչի:

Դավիթը ներս մտնելու դուռ չգտավ, մի կաղնի արմատահան արեց, հարվածեց, պարիսպը քանդեց:

Բոլորը միասին ներս մտան, տեսան՝ չորս կողմը կանաչ անտառ է, վճիտ աղբյուր է, լճակ է՝ ափերը մարմարով շինած: Այնտեղ կային շատ գազաններ՝ արջ, գայլ, աղվես, կխտար, եղնիկ, վայրի ոչխար:

Սասնա ջահելներն ուզեցին վայրի ոչխար սպանել:

— Հայ–հա՛յ, — գոռաց Դավիթը, — դուք դրանցից ոչ մեկին ձեռք չտաք: Հայրս մեղք է գործել, որ այս աստծու արարածներին դրել է բանտի մեջ: Բանտված գազանին Սասնա պառավն էլ կորսա: Տղամարդը նա է, որ իր որսին նշան կբռնի, կխփի ազատության մեջ:

Դավիթը պարիսպը չորս կողմից քանդեց. բոլոր գազաններն ու կենդանիները դուրս փախան: Դավիթը նայեց այս քարի տակ, այն ծառի հետև, ինքն իրեն ասաց. «Զլինի՞ թե մի գազան քնած է մնացել, մեղք է»: Ջահելներին ասաց.

— Հիմա գնացե՛ք, ով կտրիճ է, թող որս անի:

Ինքը երկու վայրի ոչխար խփեց, բերեցին լճակի մոտ, մորթեցին: Դավիթը մտավ ջուրը, լողացավ: Կրակ վառեցին, ոչխարները խորովեցին, կերան:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ Դավիթը քանդեց Ծովասարի պարիսպները:
2. Նկարագրի՛ր Ծովասարի որսատեղը:

ԴԱՍ 20

ԱՀՈՏ ԳՐԱՀԻ

Մաշտոցի հզոր լեզուն վառ հույսն է ամեն մի հայի:

Ահոտ Գրահի

Իսկական ազգանունը՝ Գրիգորյան: Ծնվել է 1910–ի մայիսի 9–ին Բաքվում (այժմ՝ Ադրբեջանում): 1929–ին ավարտել է տեղի Ալեքսանդր Մյասնիկյանի անվան հայկական դպրոցը, 1933–ին՝ Երևանի պետական համալսարանի պատմագրական բաժանմունքը: 1933–1946–ին եղել է Բաքվի հանրային գրադարանի հայկական բաժնի վարիչը, Ադրբեջանի խորհրդային գրողների միության հայկական բաժանմունքի քարտուղարը, «Կոմունիստ» հայերեն թերթի արվեստի և գրականության բաժնի վարիչը:

1946–ին տեղափոխվել է Երևան: Վախճանվել է 1973–ի փետրվարի 26–ին Երևանում:

Գրել է բանաստեղծություններ (որոնք ամփոփված են «Մուտք», «Քնարական», «Կռունկ», «Իմ գարունը», «Երգը թռչում է աշխարհով», «Սարերի սրինգը», «Ծիածանի յոթ երգը», «Արևի քույրը» և այլ ժողովածուներում), թատերգություններ («Ամպաբերդ» և այլն):

ԵՎ ԵՐԲ ԳՆՈՒՄ ԵՄ ԵՍ ՕՏԱՐՈՒԹՅՈՒՆ

...Եվ երբ գնում եմ ես օտարություն,
Քնքշորեն գրկած՝ տանում եմ ինձ հետ
Ձեզ, իմ հայրենի ամրտ ու արահետ,
Եվ քեզ, կիրճերում հառաչող իմ զետ:

Եվ երբ գնում եմ ես օտարություն,
Տանում եմ ինձ հետ իմ թախծոտ սրտում
Քեզ, զով մարգերում կորած մանկություն,
Ձեզ, լեռներ՝ քնած երկնի կապույտում:

Եվ երբ գնում եմ ես օտարություն,
Մայրիկիս մի բուռ արցունքն եմ տանում,
Օտար ցրտի դեմ՝ մեր արևն անհուն,
Երկրիս անունը՝ անմար մի անուն:

ՀԱՅՐԵՆԻՔ

Սարերդ ծաղկել, ձորերդ ծաղկել,
Զմրուխտ գարունքի շողեր են հագել,
Գարնան ճամփով ես գնում երջանիկ,
Անո՛ւշ հայրենիք, քնքո՛ւշ հայրենիք:
Վարդերը գարնան, շուրթերը վառման
Խոսում են մեզ հետ սիրով անսահման,
Քեզնով ենք միայն զվարթ, երջանիկ,
Անո՛ւշ հայրենիք, քնքո՛ւշ հայրենիք:
Արտերդ լիքն են ցորենի բերքով,
Լույս արտույտների հայրենի երգով,
Բերքով երջանիկ, երգով երջանիկ,
Անո՛ւշ հայրենիք, քնքո՛ւշ հայրենիք:
Ես էլ մի հասկ եմ քո կյանքի արտում,
Սիրտս՝ մի արտույտ, քեզ գովք է կարդում,
Քեզնով է միայն որդիդ երջանիկ,
Անո՛ւշ հայրենիք, քնքո՛ւշ հայրենիք:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Հայ գրականության համար ինչո՞վ է նշանավոր Աշոտ Գրաշին:
2. Համացանցում գտի՛ր լրացուցիչ տեղեկություններ Աշոտ Գրաշու ու նրա երկերի մասին և պատմի՛ր դասընկերներիդ:
3. Դասընկերներով հայթայթե՛ք ասույթներ՝ քաղված Աշոտ Գրաշու երկերից:
4. Սովորի՛ր Աշոտ Գրաշու խոսքերով գրված «Հայաստան աշխարհ» և «Բարի արագիլ» երգերը:
5. Գրքերում կամ համացանցում գտի՛ր Աշոտ Գրաշու խոսքերով գրված երկու այլ երգ և սովորի՛ր:

Աշոտ Գրաշիի «Արի գնանք Ղարաբաղ» գրքի կազմը

Իմ տան մոտ ապրիր, բարի՛ արագիլ,
Բոյն հյուսիր ծառին՝
Բարդու կատարին

Աշոտ Գրաշի



ԴԱՎԻԹԸ ՎԵՐԱՇԻՆՈՒՄ Է ԻՐ ՀՈՐ ՏԱՃԱՐԸ

Երեկոյան Քեռի Թորոսն ու Սասնա ջահելները գնացին քաղաք: Ձենով Օհանն ասաց.

— Դավի՛թ, բոլորը տուն գնացին, մենք էլ գնանք:

— Իմ հոր ոտքերը դիպել են այս քարերին: Ես գիշերը պիտի մնամ այստեղ: Ուզո՞ւմ ես՝ դու գնա՛:

— Ո՛չ, որ դու չես գնում, ես կմնամ քեզ հետ:

Նստեցին մի մեծ քարի վրա: Հարթ դաշտը երևում էր Սասնա սարերից մինչև Դիարբեքիր: Մութը մի քիչ էլ որ թանձրացավ, տեսան, որ ինչքան աստղ կա երկնքում, այնքան կրակ է վառվում դաշտի մեջ:

— Հորեղբա՛յր, դրանք ի՞նչ կրակներ են:

— Գյուղեր են, արոտատեղ են, հովիվ են, հոտաղ են, ճամփորդ են, իրենց համար կրակ են վառում:

Ձենով Օհանը քնեց: Իսկ Դավիթը նայում էր կրակներին: Դրանք մեկ–մեկ հանգան, մնաց մի կանաչ–կարմիր բոց, որ սարի գլխին անվերջ վառվում էր ու կանչում: Դավիթը մտածեց. «Տեսնես դա ի՞նչ կրակ է»: Վեր կացավ, գնաց այդ լույսի մոտ: Մարմարե մի գերեզմանից բխում էր կանաչ–կարմիր լույսը ու կամար կապում Ծովասարի գլխին: Դավիթը մոտեցավ, ձեռք տվեց բոցին, ձեռքը չայրվեց, հող լցրեց բոցի վրա, բոցը չհանգավ: Մտածեց. «Կա–չկա, սա է Մարութա բարձր Աստվածածինը»...

Այնտեղ նշան արեց, գնաց, հորեղբորը արթնացրեց:

— Հրաշք է եղել, հորեղբա՛յր, մարմարը բացվել է ահա, միջից կանաչ–կարմիր բոց է բխում, լույս կամար է կապել Ծովասարի գլխին: Գնանք, տե՛ս:

Դավիթը հորեղբորը տարավ գերեզմանի մոտ:

Ձենով Օհանը լաց եղավ, ասաց.

— Դա հորդ գերեզմանն է, տղա՛ս: Վանքն էլ, որ քարուքանդ է հիմա, քո հայրն է շինել: Նա որ մեռավ, Մսրա Մելիքը եկավ, հիմքից քանդեց քո հոր տաճարը, Սասունը թալանեց, գնաց:

Դավիթն այս բանը որ լսեց, մռնչաց ջահել առյուծի պես, ծունկի եկավ, գերեզմանի քարը համբուրեց, վեր կացավ, նետ–աղեղով մարմարի շուրջը գիծ քաշեց, հորեղբոր ձեռքն էլ համբուրեց ու լալով ասաց.

— Հերահո՛տ հորեղբայր, ես իմ սրտի մեջ ուխտ արեցի, որ իմ հոր ավերված վանքը վերաշինեմ: Վաղը՝ մինչև կեսօր, քեզնից ուզում եմ հինգ հազար մշակ, հինգ հարյուրական քարտաշ ու որմնադիր:

Թո՛ղ գան, մյուս օրը մինչև երեկո վանքը շինեն, որ այն մյուս օրը մեջը պատարագ լինի:

Ջենով Օհանը հիշեց իր երազը. Սասնա տան պարիսպը կանգնած էր, Սասնա բերդի ջահը վառվում էր, պարտեզը կանաչել էր, սոխակը երգում էր... Մտածեց. «Դավիթը կազատի Սասունը Մսրա Մելիքից: Ես Մհերի որդու խորհուրդը պիտի կատարեմ»:

— Մի՛ երկմտիր, տղա՛ս: Իմ ձայնը հասնում է քառասուն օրվա ճամփա, ձայն կտամ, քո ուզած մշակներն ու վարպետները կլսեն, կգան:

Ջենով Օհանը ձայն տվեց: Նրա կանչը լսելով՝ մշակներն ու վարպետներն ամեն կողմից եկան Սասուն, հավաքվեցին Ջենով Օհանի տանը, հաց կերան, գինի խմեցին, բարձրացան Ծովասար:

Տեսան՝ Դավիթը տաճարի տեղը գծել է, հիմքը փորել, հիմքում դրել ապառաժ մեծ–մեծ քարեր: Շատ զարմացան: Բոլոր մշակները թե միանային, այդ քարերից մեկն էլ տեղից շարժել չէին կարողանա:

Վարպետները եկան կանգնեցին պատի վրա: Մեծ քարերը Դավիթն էր բերում, դնում պատի վրա, մանր քարերը՝ մշակները: Սրանք շաղախ էին անում, վարպետներն էլ պատերն էին ծեփում: Վարպետ ու մշակ որ չէին նայում Դավթին, որ չէին տեսնում նրա ազնվական ուժն ու եռանդը, գլուխ պահողն ամաչում էր, իրեն թափ էր տալիս ու բանում իր ուժից յոթ անգամ առավել: Մինչև երեկո Մարութա բարձր Աստվածածինը շինեցին:

Ջենով Օհանը կանչեց, եկան տաճարի սպասավորներ, շաբաթ օրը պատարագ արեցին վանքում:

Դավիթն ուրախացավ, հոգին փառավորվեց: Բաթմանա Բուղային ու Ջարբահար Քամուն կարգեց վանքին պահապան, ասաց.

— Օտար չարամիտ մարդ որ կգա, դուռը վրան չբացեք, թե որ ուխտավոր կգա, աղքատ, անոթի մարդ կգա, դուռը բա՛ց արեք, հա՛ց տվեք՝ ուտեն:

Դավիթը դարձել էր կատարյալ մարդ. էլ չէր նեղում մարդկանց: Սասունցիներն իրար ասում էին.

— Դավիթն ասես Սասնա Առյուծ Մհերն է՝ հարություն առած:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ էր Մելիքը քանդել Միհերի կառուցած տաճարը:
2. Նկարագրի՛ր Մարութա բարձր Աստվածածին վանքը:

ԴԱՍ 21

ՍԵՐՈ ԽԱՆԶԱԴՅԱՆ

Խանզադյանը գալիս է զանգեզուրյան վեհանիստ լեռներից, գալիս է պարզ և հստակ, ինչպես անձեռազործ բնությունը, գալիս է հյուրասեր շինականի պես անսեթևեթ, դարերից ժառանգած ներքին իմաստնությամբ:

.... Հաճախ ինձ թվում է, թե նա հին, գունագեղ կարպետ է՝ ազգային նախշազարդերի հորինվածքով:

Նա գրական անընդմեջ ընթացքով կամրջվում է մեր գրականության դասական ավանդներին:

Ռաֆայել Արամյան

Ծնվել է 1915–ի դեկտեմբերի 3–ին Գորիսում: 1934–ին ավարտել է Գորիսի մանկավարժական ուսումնարանը, 1941–1945 թթ. մասնակցել է 2–րդ աշխարհամարտին: 1972–ից եղել է Հայաստանի գրողների միության գրական խորհրդական: Վախճանվել է 1998–ի հունիսի 26–ին Երևանում, թաղված է Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնում:

Գրել է բանաստեղծություններ, պատմվածքներ («Այրված տունը», «Սպիտակ գառը», «Յոթերորդ աղբյուրը», «Խղճի խայթը» և այլն), վիպակներ («Մատյան եղելությանց», «Ծարավ եմ, ջո՛ւր բերեք», «Մեռածները հիշում են», «Արաքսը պղտորվում է» և այլն), վեպեր («Մեր գնդի մարդիկ», «Հողը», «Երեք տարի, 291 օր», «Քաջարան», «Սևանի լուսաբացը», «Խոսե՛ք, Հայաստանի՛ լեռներ», «Թագուհին հայոց», «Վարք հարանց», «Անդրանիկ», «Հուշի», «Գարեգին Նժդեհ» և այլն), թատերախաղեր («Վահրամ Որոտանեցի» և այլն), հուշագրություններ («Հորս հետ և առանց հորս», «Ինչպես հիշում եմ», «Ղարաբաղը կրակների մեջ» և այլն), ուղեգրություններ («Հայրենապատում» և այլն), հայ ժողովրդի պատմության, գրականության, լեզվի խնդիրներին նվիրված ուսումնասիրություններ:

Հեղինակ է նաև մանկական պատմվածքների, վիպակների, զրույցների ու հեքիաթների («Որոտանի կիրճում», «Քարանձավի բնակիչները» և այլն):

Գլուխգործոցն է «Մխիթար սպարապետ» վեպը:

Նրա երկերի հիման վրա նկարահանվել են «Լքված հեքիաթների կիրճը» (ըստ «Այրված տունը» պատմվածքի), «Հուսո աստղ» (ըստ «Մխիթար սպարապետ» վեպի) ֆիլմերը:

ՏՈՐՔ ԱՆԳԵՂԻ ՀԵՏՔԵՐՈՎ
(հատված «Հայրենապատում» գրքից)

Սիսիանը քաղաք է դառնում: Սիսիան անունն առաջինը հիշատակել է պատմիչ Կիրակոս Գանձակեցին (13–րդ դար): Զաքարիա Սիսիանցին (17–րդ դ.), որ գրել է պատմական բնույթի բազմաթիվ աշխատություններ, 1683–ին Ֆրանսիայում տպագրված իր մի գրքում պատմում է, որ 1711–ին Տաթևի ամբողջ թեմը մորեխը կերավ՝ բացի Սիսիանից: Պատճառն այն է, որ Սիսիանը ծովից բարձր է 1600 մետր:

1607–ին գավառը կոչվում էր «Սիսաքեան նահանգ», իսկ գյուղը՝ Սիսիան (1617): Մովսես Խորենացին ասում է, թե Սիսական (Սիսիան) և Սյունիք անունները ծագել են Սիսակ նահապետի անունից:

Սիսիանը, սկսած 5–6–րդ հազարամյակներից, եղել է հայոց կյանքի կենտրոնավայրերից մեկը: Այստեղ է մեծաքար Երիվարաց բերդ–բնակավայրը: Ասում են՝ իբր այս քարե բերդը շինել է Հնհերում նստած Բոլի հսկան, որ Տորք Անգեղի ցեղից էր:

Որոտան գետի մեջ ցույց են տալիս մի քարե կղզի: Ասում են՝ Բոլին ժայռեր է պոկել լեռան կրծքից ու նետել գետը, վրան կալ շինել: Կաչաղակաբերդում էլ Հրուշան անունով հսկա է եղել: Նա իր ժայռեղեն բնի մեջ մի կարաս մածուն է թափել, իբր թե ինքը մարդ չէ, այլ արծիվ, որ ահա ծրտեց ու թռավ: Դրանով մոլորեցրել է մյուս հսկաներին ու քաշել դեպի իր ժայռեղեն խոռոչները, սպանել: Սրա նիզակը, ասում են, տասը զույգ եզ հազիվ է քաշել: Թերևս հայոց առասպելական Տորք Անգեղը՝ իբրև աստվածություն, պաշտվել է նաև Սիսական աշխարհում:

1805–ին արևելյան ու կենտրոնական Սյունիքը, դրա հետ նաև Սիսիան գյուղը, միացավ Ռուսաստանին: Սիսիանի բնակչության մեծ մասը 1828–ին եկել է Պարսկաստանի Սալմաստ գավառից: Մինչ այդ գյուղում ութ տուն բնակիչ է եղել՝ Բռնակոթի Մելիք Սաֆրազյան տան մի ճյուղը: Հիմա էլ մնում են նրանց տները՝ եվրոպական ճաշակով շինված և զարդարված:

Թուրքական բանակի էմիսար Իթթիհադ Ջա-

Սիսավանք
(Սյունի վանք)

18-րդ դարի նշանավոր առակախոս Պըլը Պուղու երգիծական գրույցների մի փունջ՝ Սերո Խանզադյանի մշակմամբ

բար բեյը 1918–ին գաղտնի ապրել է Սիսիանում: Սա գրգռել է Հաքի, Աղուտի, Վաղուտի և Ղզլջուղ գյուղերի թուրք բեկերին, որ ապրիլի քսանչորսի գիշերը անսպասելի հարձակվեն Սիսիան գյուղի վրա՝ հայերին սրի քաշելու մտադրությամբ: Ընդամենը քսաներկու զինված հայեր դեմ են կանգնել յոթ հարյուրից ավելի հակառակորդին: Հայերից զոհվել են երեք հոգի, իսկ թուրքերը, յոթանասունվեց դիակ թողնելով գյուղի պատերի տակ, փախել են:

Սիսիանում է Սյունի վանքը, որ հինգ–վեցերորդ դարերի շինություն է: Մի քիչ հեռու Սյունյաց իշխան Սմբատի որդի Աշոտի պալատն է (1017 թ.):

Սյունի վանքը կարմրավուն ժայռերի տակ է՝ կառուցված սևավուն քարից: Եկեղեցին կանգուն է: Նրա հիմունքը եռաստիճան քառանկյունի է: Դրա վրա շատ ավելի հին շենքն է եղել՝ Ծղուկ գավառի իշխանական նստոցը: Ծղուկ անունը թերևս ծագում է «ծուղակ» բառից՝ խիստ անմատչելի, թշնամու համար ծուղակ: Ստեփանոս Օրբելյանը գրում է, որ եկեղեցին հիմնադրել է Սյունյաց տիկին Վարազդուխտը:

Վանքը շատ արձանագրություններ և բարձրաքանդակներ ունի: Մեզ հիացրին կառուցող վարպետների թողած նշանները: Քարերի վրա հաշվեցինք այդպիսի 33 նշան: Հայերեն Ա, Թ, Ն, Ս, Ռ և այլն: Կան նաև խաչ, ձանկախաչ, հնգաթև աստղ, խարիսխ և այլ նշաններ:

Ինձ հետաքրքրեց մի արձանագրություն, որում կա Ռոստոմ անունը: Այս Ռոստոմը ինձ հայտնի անձ է: Իշխանությունը պահելու համար նա հավատափոխ եղավ ու բարեկամացավ պարսիկ տիրապետողների հետ: Նստավայրը տեղափոխեց Աշտարակ և Ամբերդ, սկսեց զորք ստեղծել Հայաստանի գահը վերականգնելու ազնիվ նպատակով: Ապրել է տասնհինգերորդ դարի առաջին կեսում: Երևի մեղքը քավելու համար այս «կորուսյալ» իշխանն այստեղ շինարարություն է կատարել:

Զարմանալի բան. պատի վրա հունարեն տառերով արձանագրություն կա՝ «Ես Գրեգոր գրեցի»: «Ց»–ն հայերեն տառով է գրել: Կարծում եմ՝ սա էլ Եվրոպայից եկած մեղայական հայ է եղել:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Հայ գրականության համար ինչո՞վ է նշանավոր Սերո Խանզադյանը:
2. Համացանցում գտի՛ր լրացուցիչ տեղեկություններ Սերո Խանզադյանի ու նրա երկերի մասին:
3. Դասընկերներով հայթայթե՛ք ասույթներ՝ քաղված Սերո Խանզադյանի երկերից:
4. Կարդա՛ Ս. Խանզադյանի «Քարանձավի բնակիչները» և համեմատի՛ր կարդացածդ այլ վիպակների հետ:
5. Կարդա՛ նաև Սերո Խանզադյանի «Մխիթար սպարապետ» պատմավեպն ամբողջությամբ:

ԱՆԱՆԱ ԾԻԵՐ

ՄՍՐԱ ՀԱՐԿԱՀԱՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Համբավը հասավ Մսրա Մելիքին, թե Դավիթը բարձրացել է Ծովասար, քանդել է Մհերի շինած պարիսպները, շինել է քո քանդած Մարութա բարձր Աստվածածինը, ասել է. «Ես Մսրա Մելիքին հարկատու չեմ, Մսրը՝ Մսրա Մելիքին, Սասունը՝ Սասնա Դավթին»: Մսրա թագավորը այս որ լսեց, կատաղեց, մորը նախատեց, ասաց.

— Ա՜խ, մարե՛, ես այն շան որբին պետք է սպանեի, դու չթողեցիր: Տեսա՞ր՝ ինչ արեց:

— Բան չկա, հարազա՛տս, դուք եղբայր եք: Թող Մսրա երկիրը քեզ մնա, Սասնա երկիրը՝ Դավթին: Նրա դեմ դու կռվի մի՛ գնա, դուք եղբայր եք:

Մսրա Մելիքը կանչեց իր երկրի խելոք մարդկանց, խորհուրդ հարցրեց. ի՞նչ կերպով Սասունն առնի ոտքի տակ, Սասնա Դավթին վերացնի: Ժողովում Կոզբադին անունով մի կտրիճ ճառ ասաց.

— Թագավո՛րն ապրած կենա, քո քաջությանը, քո փառքին ու գահին վայել չի լինի, որ ինքդ գնաս անհավատի վրա կռիվ: Տո՛ւր ինձ հազար զինվոր՝ գնամ Սասուն ու բերեմ յոթ տարվա հարկը, Դավթին էլ սպանեմ, գլուխը բերեմ, դնեմ քո առաջ:

— Դա քիչ է, — ասաց Մելիքը. — կքանդես Մարութա բարձր Աստվածածինը, կշինես Ծովասարի պարիսպը: Քեզ իրավունք եմ տալիս, ա՛ռ, ինչքան պետք է, զորք ու զորական, գնա՛ Սասուն:

Կոզբադինը զորք հավաքեց, մունետիկ ճամփեց այս ու այն կողմ, որ գովեն իր արշավանքը դեպի Սասուն: Մսրա կանայք, որն իր ամուսնուն, որն իր մինուճար որդուն տնից դուրս էր վռնդում.

— Ի՞նչ ես տանը պարապ–սարապ նստել, վե՛ր կաց, կռի՛վ գնա Սասուն, թալա՛ն բեր մեզ համար:

Կոզբադինն ու իր զորապետերը՝ Զարխադինը, Բադինը, Սուդինը, իրենց հազար կտրիճներով Սասնա սահմանի մոտ վրաններ խփեցին: Կոզբադինը քառասուն զորեղ կտրիճի, իր զորապետերի հետ քառասուն զորեղ ուղտով եկավ Ձենով Օհանի մոտ.

— Մսրա Մելիքը ինձ ուղարկել է, որ տանեմ յոթ տարվա հարկը, մեկ էլ ծուռ Դավթի գլուխը:

Ձենով Օհանի ծնկներն ահից թուլացան, բերեց եզ ու ոչխար մորթեց, նրանց կերուխում տվեց, ասաց.

— Դուք այստեղ հանգստացե՛ք, ես գնամ հարկը հավաքեմ ու տեսնեմ՝ որտեղ է Դավիթը:

Ձենով Օհանը վախենում էր, որ Դավիթն իմանա Կոզբադնի գալը, մեջ ընկնի, կռիվ անի, փորձանքի մեջ ընկնի: Գնաց այն կուզ տերտերի տուն, Դավիթն այնտեղ սաղմոս էր կարդում, դուրս կանչեց.

— Այսօր սիրտս վայրի ոչխար է ուզում: Գնա սա՛ր, մի հատ սպանի՛ր, բե՛ր՝ մորթենք, ուտենք:

Դավիթն անտեղյակ էր Սասնա գլխին եկած աղետին. նետ–աղեղն առավ, գնաց որսի:

Ձենով Օհանն ու Ցռան Վերգոն ընկան քաղաքի մեջ, հավաքեցին քառասունական կույս աղջիկ, կարճ կին, երկար կին, բերին լցրին մի մեծ մարագ, դուռը կողպեցին: Ապա հավաքեցին քառասնական ձի, երինջ, եզ ու կով, լցրին ուրիշ երկու մարագ, դուռը կողպեցին: Ապա մտան Սասնա մեծ մառանը, որ չափեին քառասուն ուղտաբեռ ոսկի:

Կոզբադինը, Զարխադինը, Բադինն ու Սուդինը ծալապատիկ նստած էին գորգի վրա, Ձենով Օհանը պարկն էր բռնել, Ցռան Վերգոն կոտով չափում էր Սասնա ոսկին, լցնում էր Մսրա պարկերը:

Այն ժամանակ Մսրա զորքն էլ Լերա դաշտից եկել, խուժել էր քաղաք, տներն էր թալանում, կին ու աղջիկ առևանգում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ էր զայրացել Մսրա Մելիքը:
2. Նկարագրի՛ր արշավանքի պատրաստվող Կոզբադնին:

ԴԱՍ 22 ՎԻԳԵՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ

Ծնվել է 1916–ի դեկտեմբերի 15–ին Երևանում: 1940–ին ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության բաժանմունքը: 1940–1943 թթ. մասնակցել է 2–րդ աշխարհամարտին: 1943–1956 թթ. եղել է Մատենադարանի ձեռագրատան վարիչը: Հետագայում աշխատել է «Սովետական գրականություն» ամսագրում որպես խմբագրի տեղակալ:

Գրել է պատմվածքներ ու նորավեպեր («Չատու խանի պարտությունը», «Կխտարի ձագը», «Աստվածամայրը», «Սրինգի վարպետը», «Ցայգածաղիկ», «Գլուխգործոցը», «Հիկացած ավազի վրա» և այլն), վիպակներ, վեպեր («Մեզ մոտ՝ հարավում», «Գիրք մաքառման», «Գիրք լինելության» և այլն), արվեստագիտական ակնարկներ («Գույներ և երանգներ» ժողովածուն և այլն), գիտահանրամատչելի երկեր («Գիրք գրոց» և այլն), մշակել է ժողովրդական զրույցներ ու լեգենդներ («Գիրք պանդխտության» ժողովածուն):

ԳԼՈՒԽԳՈՐԾՈՑԸ
(հատված)

Ես Մոմիկն եմ: Երիցակ ծաղկողը իմ իսկական պապը չէ: Ես նրան իմ պապն եմ համարում, որովհետև տասնհինգ տարեկան եմ և աշխարհում ոչ ոք չունեմ նրանից բացի: Մի՛ հավատացեք նրա գրած խոսքին, թե իբր անարժան է հիշատակվելու, և գունաթափ են իր նկարները: Նա մեծ, շա՛տ մեծ մարդ է և աշխարհում Հայոց՝ շատ նշանավոր: Ո՞ւմ ասես նա չի

Վիգեն Խեչումյանի հուշատախտակը Երևանում

հիացրել: Հատկապես Անի քաղաքում, որտեղ նա մի ժամանակ շուրջպարված էր փառք ու համբավով...

Թե ինչու հիմա մենք չենք ապրում այդ քաղաքում, ես ամբողջ իսկությունը չգիտեմ: Այնտեղ մի վատ դեպք է պատահել և պատճառ դարձել, որ Երիցակ պապը քաշվի հեռավոր այս գյուղակը:

Որ նշանավոր է իմ Երիցակ պապը, կհասկանաք իսկույն, եթե կես աչքով էլ տեսնեք, թե նա ինչպես է ձեռք զարկում ծաղկելու, երբ գրքի երեսները վեր ու վար ծածկում է գրով: Գլուխներից առաջ և լուսանցքում նա միևնույն եղեգնյա գրչով հազար ու մի հնարամիտ զարդ է հյուսում, հազար պատկեր քաշում, ծաղկավորում գլխատառերը:

Երկինք, ծով, գետ ու աղբյուր և ստվեր նկարելիս նա գործածում է թանկագին քարի փոշուց եփած այն մուգ կապույտ ներկը, որ կոչվում է լաջվարդ: Գայլի, հովազի աչք ու երախ, թռչունի ոտք ու կտուց և էլի շատ բան նկարելիս Երիցակ պապը քսում է հայոց որդան կարմիր կրակերանգ գույնը...

Մենք շատ ներկեր ու թանաքներ ենք եփում, նույնիսկ ջրից ու հրից չխամրող սաթե սև, արեգակնային նարինջ, զմրուխտե կանաչ... Եվ նույնիսկ ոսկի, որ չի կորցնում փայլը, և անգետները կարծում են, թե իսկական ոսկի է, ու փորձում են քերել մագաղաթից:

Սկզբում պապը չգիտեր, թե ես կարող եմ ծաղկել, ինչպես ինքը: Սկզբում ես հենց այնպես փորձեցի:

Ամռան մի օր էր, արև ու շոգ օր: Նստել էի մեր կիսավեր տնակի ստվերում, և հանկարծ մտքումս թուղթ տեսա և վրան՝ տարօրինակ մի թռչունի պատկեր: Նա սուր մագիլներ ուներ, ինչպես ցին, կեռապոչ էր, վիզը՝ երկար: Գլուխն էլ թռչունի չէր, ականջ ուներ, երկարուկ դնչիկ...

Ես տուն ընկա, ինչպես երդիկից՝ քամին, դուրս ելա թղթի մի անպետք կտորով, ներկով, հին մի գրչով և կպա գործի: Նկարեցի: Պապն այդպիսի պատկեր չէր արել երբեք: Ու ոչ ոք չէր արել...

Ու մեկ էլ գլխավերևս կանգնած տեսա նրան: Պապը թուղթս ձեռքն առավ, նայեց, ինչպես սովոր էր՝ խոժոռվելով: Բայց խոսք չասաց, միայն վերցրեց գրիչը և մի քանի տեղ մգացրեց կարմիր ներկը:

Մենք սնվում ենք միայն կորեկ հացով, խոտով ու ջրով: Տարին բոլոր հաց ու խոտ չկա: Միակ եղածը ձորապռունկի աղբյուրի ջուրն է, որ շառաչում, թափվում է քարերից ու խառնվում գետի ջրերին:

Իսկ թե պատահում է՝ հարևան շինականներից մեկնումեկը վարատեղ հաց տանելիս սառը սպաս կամ ոսպով կամ եղինջով ապուր է բերում մեզ համար, տոն է դառնում օրը: Երիցակ պապը վեր է առնում ձեռագրի թերթերից մեկը և ապա լուսանցքում մանր տառերով շարոց է անում մի քանի բառ. «Հիշեցե՛ք նաև հարս Վանինին, որ մի աման ապուր բերեց, և մենք Մոմիկի հետ կերանք ախորժակով»...

Նստել ենք մի անգամ աղբյուրատակին՝ եղեգնուտից քիչ հեռու, նայում ենք երկնքում ճախրող արծվին: Լողում է օդում՝ եղեգների գլխին: Ու մեկ էլ քարի նման ցած է ընկնում, կեռ կտուցով խփում եղեգնուտի եզրը ելած վայրի բադին: Բադը ճչում է և փռելով կարմիր ոտքերը՝ կպչում է գետնին:

Երեկոյան ես մագաղաթի մի անպետք կտորի վրա նկարեցի տեսածս: Ականջումս խեղճ բադի աղեկտուր ճիչն էր: Երիցակ պապը թողեց գործը, նայեց, ժպտաց: Հավանել էր երևի...

— Ճչում է անիրավը, — ասաց: — Ակա՛նջ դիր, տե՛ս՝ ոնց է ձայնը գլուխը գցել:

Եվ նորից ուզում էր գործը շարունակել, բայց ինչքան փորձեց, չստացվեց ոչինչ: Դժգոհ արածից՝ նա փակեց աչքերն ու մնաց:

— Հիվա՞նդ ես, պապի՛, — վախեցա ես:

— Գործի՛դ մնա, — աչքը չբացելով՝ ասաց նա:

Եվ քանի որ այդպես ասաց, քանի որ միտքս դեռ իմ պատկերների հետ էր, քաշեցի միայն մի կարմիր, երկարավիզ աքաղաղի պատկեր: Այնքա՜ն կարմիր, ինչպես մառախուղի մեջ քարացած արեգակը:

— Որտե՞ղ ես այդ հավքը տեսել, — բարկացավ պապը:

— Տեսել եմ, երբ փակել եմ աչքերս, ինչպես դու ես անում նկարելուց առաջ: Մտքով եմ նկարել տեսքն էլ, գույնն էլ և կեցվածքն ամբողջովին...

— Փակ աչքո՞վ, — հարցրեց նա և թվաց՝ չի բարկանում: Բայց զայրույթ կար խոսքի մեջ: — Ես վաղուց է, որ մտքով ոչինչ չեմ նկարում: Ի՞նչ ես դու տեսնում առավել, քան ծաղկող Երիցակը...

Ծաղանդը նման է սիրո, բոլոր սերերը մի ընդհանրություն ունեն, բայց յուրաքանչյուրը նման չէ մյուսին, յուրովի միակն է և անկրկնելի:

Այդպես է նաև Վիգեն Խեչումյանի տաղանդը: Այն, ինչ նա է տեսնում, լսում, ընկալում, ոչ ոք չի լսում և չի ընկալում, այն, ինչ նա է անում, ոչ ոք չի կարող անել:

Պարույր Սևակ

Դառն ու դժվարին էր ժամանակը, սով էր համատարած, առ ու ավար էր աշխարհում Հայոց…

Եթե հանդիպեք այս գրքին քսան, երեսուն սերունդ հետո, հիշեցեք ինձ՝ Երիցակ անարժան գրչիս և ծաղկողիս, ինչպես նաև Մոմիկ անունով պատանուն, որ որբ էր մանկությունից և մխիթարեց ինձ անօգնական ծերությանս օրերին իր հանձարով…

Եվ անմեղադիր եղեք, որ տառս և գիծս ծուռ եկան, ու արվեստս դարձավ գունաթափ…

Վիգեն Խեչումյան

Պապը կուզեր երևի չբարկանալ, բայց այդպես ստացվեց՝ բարկացավ: Ու երբ այդպես ստացվեց, նա ելավ ու գնաց տնից: Վերադարձավ, երբ մթնել էր:

Ինչպես եղավ, ամառնամուտին մի օտար ձանապարհորդ ներկ ու թանաք առավ Երիցակ պապից և փոխարենը մագաղաթե չծաղկված աղոթագիրք տվեց: Մյուս առավոտից մենք քանդեցինք աղոթագիրքը և թերթերը կրի շաղախի մեջ մի գիշեր պահելուց հետո սուր դանակով քերեցինք գրի սևն ու գլխատառի կարմիրը: Հետո պապը հայտարարեց.

— Գրում ենք, Մոմիկ… Սրանց վրա գրելու ենք, երգ կա, հայրեն են կոչում… Լսածս ենք գրելու: Երեկոյան հավաքվում են արհեստի մարդիկ, խնջույք–ժողով են անում, հայրեն են լսում, կաքավող պարուհիների նայում…

Երիցակ պապը ամեն օր գրում ու կարդում էր բարձրաձայն, գրում ու ոգևորվում: Մի երկու տող թեթև զարդագիծ քաշեց, մի երկու տեղ ներկի աստառը ծածկեց, ասաց, թե կամաց–կամաց կծաղկի…

Գիշերն իջնում էր թե չէ, պապը պառկում էր քնելու: Ես զգույշ բարձրանում էի տեղից, ստվերում ճրագի լույսը և աշխարհից գաղտնի՝ ուղղում, փոխում պատկերի գիծը, ծածկում ներկով, նկարում նորերը: Այսպես՝ ամեն շաբաթ, ամեն ամիս:

Իմ խեղճ Երիցակ պապին թվում էր, թե հրաշքով հետ էր եկել իր կորած ջահելությունը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. **Հայ գրականության համար ինչո՞վ է նշանավոր Վիգեն Խեչումյանը:**
2. **Համացանցում գտի՛ր լրացուցիչ տեղեկություններ Վիգեն Խեչումյանի ու նրա երկերի մասին:**
3. **Դասընկերներով հայթայթե՛ք ասույթներ՝ քաղված Վիգեն Խեչումյանի երկերից:**
4. **Կարդա՛ Վիգեն Խեչումյանի «Հիկացած ավազի վրա» պատմվածքը և համեմատի՛ր այլ պատմվածքների հետ:**
5. **Կարդա՛ նաև Վիգեն Խեչումյանի «Սրինգի վարպետը» պատմվածքը:**

ԴԱՎԻԹԸ ՎՌՆԴՈՒՄ Է ՄՍՐԱ ՀԱՐԿԱՀԱՆՆԵՐԻՆ

Դավիթը սարերում ընկած էր որսի հետևից: Կեսօրվա մոտ նետահարեց մի վայրի ոչխար, անցկացրեց նիզակի ծայրին, առավ ուսին, ճանապարհ ընկավ դեպի քաղաք: Ճանապարհին մտավ Սասնա պառավի բանջարանոցը: Դավիթը շաղգամ շատ էր սիրում: Դրա համար նրան կանչում էին «Սասնա ծուռ շաղգամակեր»: Մտավ բանջարանոց, որսը վար դրեց, նիզակի ծայրով շաղգամ էր հանում, ուտում:

Սասնա պառավը, Դավթին որոնելով, եկավ իր բանջարանոցը, տեսավ Դավթին, լաց եղավ.

— Դու այստեղ քեզ համար շաղգամ ես ուտում, այնտեղ Սասունը ձեռքից գնաց: Մսրա Մելիքը զորք է ուղարկել, որ յոթ տարվա հարկը տանեն: Ահա հորեղբայրներդ, քաղաքի մեջ ընկած, կին ու աղջիկ չեն թողել, հավաքել են, լցրել մարագը, որ ուղարկեն Մսրը: Մեկ մինուճար աղջիկ ունեի, այն էլ ինձնից խլեցին, տարան գերի: Կոզբադինն իր զորապետերով մտել է քո հոր մեծ մառանը. քո հորեղբայրներ Ցռան Վերգոն ու Ջենով Օհանը կոտով չափում են Սասնա ոսկին, լցնում են Մսրա պարկերը:

Դավիթը պառավի հետ մտավ քաղաք: Ամեն օր, երբ որսից գալիս անցնում էր քաղաքով, լսում էր մարդկանց խոսքն ու ծիծաղը, նվագն ու երգը, տեսնում էր նրանց պարն ու ուրախությունը: Այսօր քաղաքին ոնց որ հող մաղեն. լաց ու կոծ, վայ ու վայնասուն, ծեծ ու թալան: Դավթին էլ սասունցիներն անիծում են:

— Այս ի՞նչ է: Սրանք ինչո՞ւ են ինձ անիծում:

— Դու որ Ծովասարի պարիսպը քանդեցիր, Մարութա բարձր Աստվածածինը շինեցիր, Մսրա Մելիքը բարկացավ, զորք ուղարկեց Սասուն: Քո հորեղբայրները հիմա հարկը հավաքել, մարագն են լցրել:

— Նանե՛, դու ցո՛ւյց տուր ինձ մարագները, ես չեմ թողնի, որ տանեն Սասնա երկրից մի մազ:

Սասնա պառավը Դավթին տարավ մարագների մոտ: Պահակ էին կանգնած Մսրա տասը զինվոր: Դավիթը դրանց սպանեց, մարագի դուռը կոտրեց, կին ու աղջիկ ազատ արձակեց: Մյուս մարագները բացեց, Սասնա տավարը գերությունից ազատեց:

Հետո գնաց իր հոր մեծ մառանը, որ ի՞նչ տեսներ. Կոզբադինը, Ջարխադինը, Բադինն ու Սուդինը

ծալպատիկ բազմած են գորգի վրա, Զենով Օհանը պարկն է բռնել, Ցռան Վերգոն կոտով չափում է Սասնա ոսկին, լցնում է Մսրա պարկերը:

— Ի՞նչ եք անում, — գոռաց Դավիթը:

— Քո մեղքերն ենք սրբում, — ասաց Օհանը:

Դավիթը մոտեցավ, Ցռան Վերգոյի ձեռքը բռնեց.

— Հորեղբա՛յր Վերգո, դու շատ ես ծեր, դու վե՛ր կաց: Մեր Սասնա ոսկին ես պիտի չափեմ:

— Գործին մի՛ խառնվիր, — ասաց Զենով Օհանը:

Դավիթը Ցռան Վերգոյի ձեռքից կոտը խլեց, շրջեց բերանքսիվայր, ոսկին թիակով լցրեց կոտի հետևի վրա, փայտով կոտի հետևը մաքուր սրբեց ու դատարկված կոտը շրջեց Մսրա պարկի մեջ.

— Սա՝ մեկ... սա՝ երկու...

— Զենո՛վ Օհան, — գոռաց Կոզբադինը, — դու այս ծուռ լակոտին բերել ես, որ մեզ ծաղրի՞: Հեռացրո՛ւ դրան, թե չէ վեր կկենամ, գլուխը կթռցնեմ:

Դավիթն աչքը ոլորեց Կոզբադնի վրա, ասաց.

— Հայ–հա՛յ, հենց այդպե՞ս, գլուխս կթռցնե՞ս:

— Զենո՛վ Օհան, — վախեցած ասաց Կոզբադինը, — Մսրա հարկը տալիս ես՝ տո՛ւր, թե չէ կգնամ կասեմ Մսրա Մելիքին, կգա ձեր Սասունը կավերի, Սասնա հողը պարկերով կբարձի ձեր ձիերին, Սասնա քարերը կբարձի ձեր հղի կանանց, կտանի:

Դավիթը զայրացավ, կոտն առավ, նետեց Կոզբադնի վրա, Կոզբադինը գլուխը կռացրեց, կոտը պատին դիպավ, պատը ճեղքեց, գնաց յոթ օրվա ճամփա:

Կոզբադինը լեղապատառ վեր կացավ, որ փախչի, Դավիթը հասավ հետևից, օձիքը բռնեց, գլուխը յոթ անգամ պատին խփեց, ասաց.

— Գնա՛ Մսրը, Մելիքին բարև՛ տար, ասա՝ մեկ էլ զորք չուղարկի Սասուն: Սասնա հարկը մոռացե՛ք: Դավիթը՝ Առյուծ Մհերի որդին, հրեղեն Սանասարի թոռը, ասում է. «Մսրը՝ Մսրա Մելիքին, Սասունը՝ Սասնա ժողովրդին: Թող ինքն ապրի իր համար, մենք էլ ապրենք մեզ համար»: Գնա՛:

Հարկահանները Սասնա ոսկու մառանից լեղապատառ փախան, շունչ առան իրենց վրանների տակ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ էր Սասունում լաց ու կոծ:
2. Նկարագրի՛ր զայրացած Դավթին այնպես, ինչպես պատկերացնում ես:

ԴԱՍ 23 ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԻՐԱՋ

Իսկական անունը՝ Օնիկ Կարապետյան: Ծնվել է 1914–ի ապրիլի 27–ին Ալեքսանդրապոլ քաղաքում (այժմ՝ Գյումրի): 1920–ի թուրքական արշավանքի ժամանակ սպանվել է հայրը իր իսկ խրճիթի շեմին: Ընտանիքը ցրիվ է եկել: Թափառական Օնիկը որոշ ժամանակ անց հայտնվել է որբանոցում, հետո փախել այդտեղից: Ի վերջո գտել է մորը, որի հորդորով դարձել է կոշկակարի աշակերտ, ապա զբաղվել այլ արհեստներով: Միաժամանակ սկսել է գրել բանաստեղծություններ: Յոթնամյա դպրոցն ավարտել է Գյումրիում: Բարձրագույն կրթություն ստացել է Երևանի պետական համալսարանում և Մոսկվայի Մաքսիմ Գորկու անվան գրականության ինստիտուտում: Վախճանվել է 1984–ի մարտի 14–ին Երևանում: Թաղված է Երևանի Կոմիտասի անվան պանթեոնում: 2004–ին, համաձայն Հիրազի կտակի (նշված նրա բանաստեղծություններից մեկում), մի քանի հայրենասերների շնորհիվ նրա սիրտը թաղվել է Արարատ լեռան բարձունքներում՝ սառույցի մեջ:

Գրել է բանաստեղծություններ (ամփոփված են «Գարնանամուտ», «Արևի երկիր», Երգ Հայաստանի», «Բանաստեղծի ձայնը», «Երգերի գիրք», «Քնար Հայաստանի», «Հուշարձան մայրիկիս», «Համամարդկային» և այլ ժողովածուներում), պոեմներ («Բնության գլուխգործոցը», «Բիբլիական», «Հայոց Դանթեականը», «Անի», «Խաղաղություն ամենեցուն», «Հայոց հրաշքը. Մեսրոպ Մաշտոց» և այլն), հուշեր («Մի փետուր իմ արծիվ կյանքից»), առակներ («Մարգարիտն ու փրփուրը», «Լեռան առակը», «Հավերժական վեճը», «Սոխակի պատասխանը», «Արծիվն ու մժեղը» և այլն), ակնարկներ:

Ամեն օր՝ նույն ժամին, հայտնվում էր Աբովյան, Ամիրյան, Տերյան փողոցների խաչմերուկներում՝ գլխին հավաքելով իր տաղանդի երկրպագուներին: Սրանք ասես թե հաղորդակցվում էին Նոյի վաղնջական ժամանակներից, Ավարայրի ռազմաղաշտերից, Անիի բերդապարիսպներից, հայոց պատմության քառուղիներից մեր օրերը հասած հրաշագործ առասպելական հերոսի հետ:

Սուրեն Աղաբաբյան

Հովհաննես Շիրազի դիմանկարը
նկարիչ՝ Ալեքսանդր Գրիգորյան

Հիրազը սփյուռքի մեջ ամենաժողովրդական և սիրված բանաստեղծն է, հուզիչ կապ է մեր և մայր հայրենիքի ժողովրդի միջև, նրա ձայնը սփյուռքի մեջ սրտեր է գրավում... Տարբեր լարեր կան նրա քնարի վրա՝ թե՛ զուսանական, թե՛ քնարական, թե՛ իմաստասիրական, և նկարագրով էլ, որպես մարդ, նա հրաբխային բանաստեղծ է:

Լևոն-Զավեն Սյուրմելյան

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԵՐԳԸ
(Վերելք)

Աչքերիս մեջ՝ գարնան օրեր,
Ճամփես՝ բախտիս սարերն ի վեր,
Ելնում եմ ես քարերն ի վեր,
Ելնում եմ ես սարերն ի վեր,
Քարեր, սարեր, դարերն ի վեր:

Բախտս աստղերն են վեր պահել,
Ջահել եմ ես, ու ձիս՝ ջահել,
Շեմ նկատում քարեր ճամփիս,
Շեմ նկատում սարեր ճամփիս,
Քարեր, սարեր, դարեր ճամփիս:

Հանթն է բեկվում ճակտիս վրա,
Մահ, չգիտեմ՝ կա՞, թե՞ չկա,
Ելնում եմ ես ահերն ի վեր,
Ելնում եմ ես մահերն ի վեր,
Ահեր, մահեր, գահերն ի վեր:

Աչքերիս մեջ՝ գարնան օրեր,
Ճամփես՝ դեպի աստղերն անմեռ.
Ինձ ելնելու քարեր կան դեռ,
Ինձ ելնելու սարեր կան դեռ,
Քարեր, սարեր, դարեր կան դեռ...

ԻՄ ՍՈՒՐԲ ՀԱՅՐԵՆԻՔ

Իմ սո՛ւրբ հայրենիք, դու սրտիս մեջ ես,
Դու սրտիս մեջ ես, ո՛չ լեզվիս վրա,
Իմ սրտի միջից թե սիրտս ձեղքես,
Դրոշիդ բոցը պիտի հուրհրա:

Շեմ ուզում գոռալ իմ սիրո մասին,
Սակայն իմացի՛ր, հայրենի՛ք իմ մեծ,
Քեզ հարյուր տեղով խոցեց թշնամին,
Բայց հազար տեղով իմ սիրտը խոցվեց:

Ես ամբողջովին քոնն եմ, հայրենի՛ք,
Եվ մոմի նման ճամփեքիդ վրա
Քո փառքի համար թե մի օր վառվեմ,
Մոխրաբիծ անգամ ինձնից չի մնա:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Հայ գրականության համար ինչո՞վ է նշանավոր Հիրազը:
2. Համացանցում գտի՛ր լրացուցիչ տեղեկություններ Հովհաննես Հիրազի ու նրա երկերի մասին:
3. Հայթայթի՛ր ասույթներ Հովհաննես Հիրազի երկերից:
4. Կարդա՛ Հովհաննես Հիրազի «Բիբլիական» պոեմը և համեմատի՛ր քո կարդացած այլ պոեմների հետ:
5. Կարդա՛ նաև Հ. Հիրազի «Հայոց Դանթեականը» պոեմը:

Հովհաննես Շիրազի դիմաքանդակը նրա շիրիմի վրա
քանդակագործ՝ Արա Շիրազ

ԱՍՍՆԱ ԾՌԵՐ

ԴԱՎԻԹԸ ՊԱՏԺՈՒՄ Է ԿՈՂԲԱԴՆԻՆ

Կողբադինը զորապետերին խորհրդի կանչեց.

— Մենք մեր թագավորին խաբեցինք: Հիմա ի՞նչ երեսով կանգնենք նրա առաջ: Գնանք, քանդենք Մարութա բարձր Աստվածածին վանքը, թալանը տանենք Մսըր, ասենք՝ սա է Սասնա հարկը:

— Բա որ Մսրա Մելիքը Դավթի գլուխը ուզի, ի՞նչ ասենք, — հարցրեց Սուդինը:

— Կասենք՝ Դավիթը փախավ սարերը:

Կողբադինն իր զորքով բարձրացավ Ծովասար, պաշարեց Մարութա բարձր Աստվածածինը, բայց դուռը բացել չկարողացան: Զարխադինն ասաց.

— Բերեք զարկենք մի նապաստակ, Դավթի շորերի նման մի շոր արյունոտենք, նետենք պարսպից ներս, ասենք. «Կտրիճնե՛ր, ձեր տիրոջը սպանեցինք»: Դավթի շորերը որ տեսնեն, դուռը բաց կանեն:

Զարբահար Քամին ու Բաթմանա Բուղան ուժից հարուստ էին, խելքից՝ աղքատ: Նապաստակի արյունով ներկված հագուստը որ տեսան, մոխիր ցանեցին իրենց գլխին, լաց եղան, բայց վանքի դռները փակ պահեցին Մսրա զորքի դեմ:

Այն ժամանակ Կողբադինը բարձրացավ պարսպի վրա, վանքի միաբաններին ձայն տվեց, ասաց.

— Թե որ ձեր ձեռքով բացեք պարսպի դուռը, ձեր մեկ մազին էլ չենք դիպչի:

Բայց միաբաններն իրար ասին. «Դուռը չենք բացի, թող Կոզբադինը գոռալով տրաքի»:

Այնտեղ կար Ցռան Վերգոյի ցեղից մի վախկոտ վարդապետ: Գիշերը, երբ պահակ կտրիճները քնած էին, թաքուն մոտեցավ, պարսպի դուռը բաց արեց: Մսրա զորքը հեղեղի պես խուժեց ներս: Պահակները քնից արթնացան, տեսան՝ բանը բանից անցել է, գլուխներին խփելով փախան սարերը:

Մսրա զինվորները կոտորեցին բոլորին, վանքը թալանեցին, հավաքեցին շատ ոսկի, արծաթ, գոհարեղեն, գնացին: Սարկավագից մեկը թաքնված էր դիակների տակ: Նա առավ արյունաթաթախ մի փարաջա, բոթը տարավ Սասուն:

Դավիթը իր հասակի տղա–աղջիկների հետ խնջույք էր անում: Նա շատ գինով էր, երբ Մարութա վանքի սարկավագը լեղաճաք ներս մտավ.

— Դավի՛թ, Մարութա վանքը թալանեցին...

Սարկավագը արյունոտ փարաջան գցեց նրա առջև: Դավիթը գինովությունից սթափվեց: Վազեվազ հասավ Սասնա պառավի մոտ.

— Նանե՛, ինչպե՞ս Կոզբադնի առաջը կտրեմ:

— Գնա կանգնի՛ր Բաթմանա կամուրջի մոտ: Նա ուր էլ գնա, պիտի գա այդ կամրջով անցնի:

Դավիթը արմատահան քաշեց մի բարդի ծառ: Հասավ Բաթմանա կամուրջ, ձիերի դոփյուն լսեց:

Կոզբադինը ծիծաղում էր ու գոռգոռալով խոսում.

— Դավիթն ահից սարերն է փախել: Հիմա դեմս ելնի, վիզը պոկեմ, տանեմ Մելիքին:

— Հայ–հա՛յ, Կոզբադի՛ն, դե, վիզս պոկի՛ր:

Ասաց Դավիթը, ծառը աջ ու ձախ տարավ, Մսրա զորքը կոտորեց: Կոզբադինը ուզում էր փախչել: Դավիթը բռնեց, գետին գցեց, բռունցքով խփեց, վիզը ծռեց, ատամները հանեց, ճակատին շարեց, ասաց.

— Դե հիմա գնա՛ Մսրը, պատմի՛ր, թե ինչ է Սասունը: Ասա՝ Մելիքը թող գա, կռվենք:

Դավիթը Կոզբադնին վերցրեց ու դրեց նրա ձիու վրա, ոտքերը կապեց փորի տակ, խփեց գավակին.

— Տա՛ր քո տիրոջը մինչև Մսրը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ Կոզբադինը քանդեց Մարութա վանքը:
2. Նկարագրի՛ր Սասունից փախչող Կոզբադնին:

ԴԱՍ 24 ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԻՐԱԶ

ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Չգիտեմ՝ ինչու մանուկ ժամանակ
Համբուրում էի խաչքարերը ես,
Երբ մայրիկիս հետ միշտ ոտաբոբիկ
Վանքի սարն էի ելնում գառի պես...

Հիմա էլ սրտանց համբուրում եմ ես,
Բայց հիմա գիտեմ, թե ինչի՛ համար
Ես համբուրում եմ, ո՛վ նախահայրեր.
Քարից լույս կերտող ձեր ձեռքը ճարտար,

Որ վայրի ու բիրտ ժայռերի վրա
Ոգու տարերքն է հրաշագործել.
Եվ համբուրելով սուրբ հետքը նրա՝
Անմահությունն եմ համբուրում ես ձեր...

ԷՔՍՊՐՈՄՏ[1]

Մենք խաղաղ էինք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես խուժեցիք վայրագ[2]:

Մենք ձեր դեմ ելանք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես ոռնացիք վայրագ:

Բայց մենք հավերժ ենք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես կկորչեք վայրագ:

[1] հանպատրաստից, հանկարծակի և մի շնչով գրված երկ
[2] դաժան, կատաղի, բիրտ

Հովհաննես Հիրազը հայ ժողովրդի վշտի դարավոր մառախուղից ծագած աստղն է:
Ավետիք Իսահակյան

Հովհաննես Շիրազի հուշարձանը Երևանում, 2005 թ.
քանդակագործ՝ Արա Շիրազ

Նրա մեջ բոցկլտում էր մաշտոցյան լեզվի կրակը, նրա երակներում հոսում էր Նարեկացու և Քուչակի արյունը, իսկ սրտի միջով անցնում էր Խաչատուր Աբովյանի վերքը: Նա տիրապետում էր Սասունցի Դավթի ուժին, սակայն նրա բանաստեղծության մեջ ծաղկում էր մոր ծաղիկը, որի անունը քնքշություն է: Նրա քնարը պատվով կրում էր Կոմիտասի կարոտը և Մարտիրոս Սարյանի գույների ներդաշնակությունը:

Սուրեն Աղաբաբյան

* * *

Դուք ո՞ր երկրից եկաք, հովե՛ր՝
Այսքան քնքուշ ու մեղմ այսքան,
Ո՞ր լեռներից եկաք, հովե՛ր,
Համբույրի պես քրոջական.
Այնքան մեղմ եք, հեռվի՛ հովեր,
Կարծես շունչն եք քնած մանկան:

Մեր լեռներից, հեռվի՛ հովեր,
Համբո՛ւյր տարեք ձեր լեռներին,
Վարդերի բո՛ւյր տարեք, հովե՛ր,
Մեր դաշտերից ձեր դաշտերին:

Բայց թե մի օր, հեռվի՛ հովեր,
Հողմեր բերեք մեր լեռներին,
Մեր ամպերը մեր սարերից
Հանթ կբերեն ձեր լեռներին,
Հանթ կբերեն մեր լեռներից,
Մահ կսփռեն ձեր դաշտերին,
Ձեր դաշտերին, ձեր լեռներին,
Ձեր աշխարհին, ձեր արևին...

Մեր լեռներից, հեռվի՛ հովեր,
Համբո՛ւյր տարեք ձեր լեռներին,
Համբո՛ւյր տարեք,
Գարո՛ւն տարեք,
Արև՛ տարեք աշխարհներին:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Համացանցում գտի՛ր զավեշտալի տեղեկություններ Հ. Հիրազի կյանքից և պատմի՛ր դասընկերներիդ:
2. Դասընկերներով հայթայթե՛ք ասույթներ Հովհաննես Հիրազի մասին:
3. Կարդա՛ Հովհաննես Հիրազի «Անի» պոեմը և համեմատի՛ր քո կարդացած այլ պոեմների հետ:
4. Կարդա՛ նաև Հովհաննես Հիրազի «Առակս զինչ ցուցանե» առակների ժողովածուն:

ՄՍՐԱ ՄԵԼԻՔԸ ԶԱՅՐԱՅԱԾ

Լաց ու շիվան ընկավ Մսրա մեջ: Որն իր ամուսնուն էր ողբում, որն իր տղային, որն իր եղբորը: Մսրա քաղաքացիները գնացին Մսրա Մելիքի դուռը, գանգատ արին.

— Թագավո՛րն ապրած կենա, Կոզբադինը Մսրա զորքը տարավ Սասուն, զորքը թողեց այնտեղ, ինքը փախավ եկավ Մսրը: Կանչի՛ր, թող պատասխան տա:

Մսրա Մելիքը մեծ վեզիրին հարցրեց.

— Ո՞ւր է Կոզբադինը: Ինչո՞ւ չի գալիս ինձ մոտ:

— Կոզբադինը մեկ շաբաթ է, ինչ եկել պառկել է իր տանը, ամոթից չի գալիս քեզ մոտ:

— Հայտնե՛ք՝ թագավորը կանչում է: Որ չեկավ, թող ծեծելով բերեն:

Զորս կտրիճ գնացին Կոզբադնի տուն, տեսան՝ գլուխը կապել, պառկել է:

— Զորապե՛տ, Մսրա Մելիքը հրամայել է, որ գաս իր պալատ, որ չգաս, քեզ ծեծելով պիտի տանենք:

Կոզբադինը եկավ, կանգնեց իր թագավորի առաջ:

Մսրա Մելիքը տեսավ՝ իր զորապետի վիզը ծուռ է, ատամները շարած են ճակատին, բարկացավ, ասաց.

— Կոզբադի՛ն, այդ ի՞նչ օրի ես ընկել: Ո՞ւր են իմ հարկը, Սասնա Թալանը, Դավթի գլուխը, իմ զորքը:

Կոզբադինը կարկամել էր, լեզուն կապ էր ընկել, հազիվ կակազելով պատմեց եղածը:

— Դավթին տեսա՞ր: Ի՞նչ ասաց:

— Դավիթը երկու ձեռքով բռնեց երկու ծառ, իմ զորքը ջարդեց, ինձ այսպես հաշմեց, ասաց. «Գնա՛, Մսրա Մելիքին պատմի՛ր, թե ինչ է Սասունը»: Ասաց. «Մսրա Մելիքը թող գա՝ կռվենք»:

Կատաղեց Մսրա Մելիքը, աչքերն արյուն կոխեց, եկավ տուն, Իսմիլ խաթունին ասաց.

— Ա՜խխ, մարե՛, ես այն Թլոլ Դավթին պիտի սպանեի, դու չթողեցիր: Տեսա՞ր՝ ինչ արեց, ինչպես ինձ անպատվեց: Ես ի՞նչ հող տվի գլխիս, որ քո ասածն արի:

— Չէ՛, սիրելի՛ս, դու իմ ասածը չարիր, դու այն ճոռթած բերան Կոզբադնի ասածն արիր: Դու որ ինձ լսեիր, Դավթին հյուր կգնայիր տարին երկու անգամ, Դավթին էլ քեզ մոտ հյուր կկանչեիր, կուրախանար, կասեր՝ ես եղբայր ունեմ, կբռնեիք իրար

թիկունք, իրար կօգնեիք, էլ ո՞վ աշխարհում կհամարձակվեր ասել՝ ձեր աչքի վերև հոնք կա:

— Մարե՛, ախր ես արաբ եմ, նա՝ հայ: Հայն ու արաբը կեղբայրանա՞ն:

— Մելի՛ք, հարազա՛տս, բա քի՞չ է եղել, որ արաբ ու հայ եղբայրացել են, մեկ–մեկի հյուր են գնացել, իրար օգնել են, պաշտպանել: Դավիթը մեր շահած–պահած մանուկն էր, դու որ նրա հետ լեզու գտնեիր, Դավիթը քո ասածը կաներ, չէր խռովի քեզնից:

— Էէ՛, մարե՛, ասում ես, էլի՛: Ես ո՞նց հյուր գնայի անհավատի տուն:

— Լավ, դու նրա տուն հյուր չգնացիր, Դավթին քո տուն հյուր չկանչեցիր, էլ ինչո՞ւ զորք ճամփեցիր Սասուն, Դավթի շինած վանքն ավերեցիր: Դավիթն էլ զայրացավ, տեղը հանեց:

— Ա՛խխխ... Այդ Սասնա ծուռն ինձ այնպես անպատիվ արեց, որ ամոթից գլուխս չեմ կարողանա դուրս հանեմ: Զէ՛, ես պիտի գնամ, քարուքանդ անեմ Սասունը, Դավթի արյունը խմեմ, որ սիրտս հովանա:

— Մելի՛ք, դու Սասնա հետ գործ չունես: Ինչ որ ցանեցիր, այն հնձեցիր: Դու քո տեղը հանգի՛ստ կաց: Ես մի թուղթ կուղարկեմ Դավթին, նրան քեզ հետ կհաշտեցնեմ: Դու Սասնա հետ գործ չունես:

— Զէ՛, մարե՛, ես քո ասածն արի, վնաս տեսա: Ես պիտի գնամ Դավթի վրա կռիվ: Կա՛մ ես Դավթին կսպանեմ, կա՛մ Դավիթն ինձ կսպանի:

— Մելի՛ք, իմ խո՛սքը լսիր, դու չես կարողանա սպանել Դավթին:

— Ես չեմ կարողանա սպանել Դավթի՞ն: — Մսրա Մելիքը ելավ կանգնեց, ոնց որ օձի խայթած: — Զէ՛, մարե՛, դու իմ չարն ես ուզում:

Ասաց, մորը թողեց լաց ու շիվանի մեջ, գնաց:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ Մսրա Մելիքը չլսեց մորը, որ խորհուրդ չէր տալիս կռվել Դավթի դեմ:
2. Նկարագրի՛ր սուգ ու շիվանը Մսրում այնպես, ինչպես պատկերացնում ես:

ԴԱՍ 25 ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ

Իսկական անունը՝ Հմայակ Գրիգորյան: Ծնվել է 1914–ի ապրիլի 14–ին Սյունիքի մարզի Լոր գյուղում: 1927–ին տեղափոխվել է Բաքու, որտեղ ստացել է միջնակարգ կրթություն: 1939–ին ավար-տել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի հայկական բաժանմունքը: Աշխատել է Բաքվի «Խորհրդային գրող» ամսագրում: 1941–1945 թթ. մասնակցել է երկրորդ աշխարհամարտին: 1945–1951 թթ. աշխատել է Բաքվի հայալեզու «Կոմունիստ» թերթում: Այնուհետև տեղափոխվել է Երևան և աշխատել «Ավանգարդ», «Ոգնի» թերթերում: 1965–1967 թթ. եղել է «Գրական թերթի» գլխավոր խմբագիրը: Վախճանվել է 1993–ի հուլիսի 17–ին Երևանում: Թաղված է Կոմիտասի անվան պանթեոնում:

Գրել է բանաստեղծություններ (ամփոփված են «Որոտանի եզերքին», «Առագաստ», «Սլացքի մեջ», «Ծիածանը տափաստանում», «Բարձունքի վրա», «Նաիրյան դալար բարդի», «Քարափների երգը», «Տարիներս», «Սեզամ, բացվի՛ր», «Կանչե՛, կռունկ», «Իրիկնահաց», «Ժայռին մասուր է կաթում», «Կանաչ, կարմիր աշուն», «Տոհմի կանչը», «Դաղձի ծաղիկ», «Ինձ բացակա չդնեք» և այլ ժողովածուներում), պոեմներ («Վերադարձ», «Հայրենի գյուղ» և այլն):

Համո Սահյանի հուշարձանը Սիսիանում, 2004 թ.
քանդակագործ՝ Գեորգիկ Բաղդասարյան

ԱՆՈՒՆԴ ՏԱԼԻՍ

Հայաստա՛ն, անունդ տալիս
Ժայռի մեջ մի տուն եմ հիշում,
Ալևոր կամուրջի հոնքին
Ծիծառի մի բույն եմ հիշում,

Իմ ճանաչած բանաստեղծներից և ոչ մեկը այնքան միաձույլ չէր հայրենի հողի հետ, որքան Համոն: Նա ականջ է դնում հողին նույնքան ուշադիր, որքան զրուցակցին, նրան նայում է կենտրոնացած, ուժգնորեն, սիրող ու իմաստուն աչքերով, ինչպես կնայեր մոր դեմքին, աչքերին ու խոր կնճիռներին: Հայոց հողը բանաստեղծի մշտական, ամենալավ ու պաշտելի զրուցակիցն է, նրա բարձրագույն սերն ու հարստությունը...

Կայսին Կուլիև

Թեքված մի մատուռ եմ հիշում
Եվ բերդի տեղահան մի դուռ,
Ավերակ տաճարի մի վեմ
Եվ բեկված մի սյուն եմ հիշում:

Հիշում եմ լքված մի թոնիր՝
Բերանին մամռոտած մի խուփ,
Մամռոտած որմի խոռոչում՝
Մասրենու վարսաթափ մի թուփ,
Աշխարհի քարերին մաշված,
Աշխարհից խռոված մի ցուպ
Եվ հեռվում ինչ–որ ուշացած
Ջիերի դոփյուն եմ հիշում:

Արևոտ մի սար եմ հիշում՝
Ճակատին ձյունի պատառիկ,
Սարն ի վար բարակ մի առու՝
Հուրթերին հայրեն ու տաղիկ:

Ցորենի կանաչ արտի մեջ
Առվույտի կապույտ մի ծաղիկ
Եվ արտի եզրին՝ մենավոր
Մի բարդու շրշյուն եմ հիշում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Հայ գրականության համար ինչո՞վ է նշանավոր Համո Սահյանը:
2. Համացանցում գտի՛ր լրացուցիչ տեղեկություններ Համո Սահյանի ու նրա երկերի մասին և պատմի՛ր դասընկերներիդ:
3. Դասընկերներով հայթայթե՛ք ասույթներ՝ քաղված Համո Սահյանի երկերից:
4. Անգի՛ր արա Համո Սահյանի «Անտառում» բանաստեղծությունը և համեմատի՛ր այլ ոտանավորների հետ:
5. Կարդա՛ նաև Համո Սահյանի «Ինձ բացակա չդնեք» ժողովածուն ամբողջությամբ:

ՄՍՐԱ ՄԵԼԻՔԸ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է ԱՐՇԱՎԵԼՈՒ ՍԱՍՈՒՆ

Մսրա Մելիքը ժողով կանչեց: Եկան Մսրա վեզիր–նազիրը, Մսրա բոլոր իմաստուն մարդիկ: Մսրա Մելիքը նրանց հետ խորհուրդ արեց:

Մեջլիսում կային խելոք վեզիրներ, իմաստուն մարդիկ, որ չէին ուզում ո՛չ կռիվ, ո՛չ կոտորած, ո՛չ ավերմունք: Այդ մարդիկ վեր կացան, ասին.

— Թագավո՛րն ապրած կենա, Դավիթը քեզ ի՞նչ է արել: Ինչ որ արել ես, դու ես Դավթին արել: Դավիթն իր երկիրը պաշտպանեց, հիմա դո՞ւ ես բողոքավոր: Մեր խորհուրդը մեկ է. մի՛ գնա Սասուն: Աշխարհի երեք մասը քոնն է, թող մեկ մասն էլ մնա Դավթին:

— Ձայններդ կտրե՛ք: Որ այդպես եք ասում, վե՛ր կացեք, այստեղից գնացե՛ք, էլ չերևա՛ք իմ աչքին, անհավատի որդի անհավատնե՛ր:

Խորհրդականները իրար կամացուկ ասին.

— Ինքն է անհավատի որդի, մեզ է ասում...

Մսրա Մելիքը ժողովը ցրիվ տվեց, կանչեց իր մոտիկ զորապետերին, նրանց հետ խորհուրդ արեց.

— Ի՞նչ կասեք, Սասնա Դավթի հետ կռիվ անե՞նք:

Դավիթը Մսրա մեջ գուրզ խաղալու ժամանակ սպանել էր Կական ու Ասլան կտրիճներին: Նրանց հայրերը Դավթի վրա ոխ ունեին պահած, ելան, ասին.

— Թագավո՛րն ապրած կենա, դու Դավթի հետ պիտի կռվես կա՛մ այսօր, կա՛մ երբեք: Դավիթն այսօր փոքր է, քսան տարեկան է, պատերազմ անել չգիտի: Թե չէ, որ մեծացավ, եղավ երեսուն տարեկան, էլ Դավթին հաղթելու հնար չի լինի: Դավիթը կգա քեզ վրա կռիվ, քեզ կսպանի, Մսրը կգավթի: Լավն այն է՝ դու հիմա քո ամբողջ զորքը հավաքես, գնաս անհավատի վրա, երկիրն ավերես, Դավթի գլուխը կտրես, որ չմնա քեզ մշտական վտանգ:

—Դուք ճիշտ եք ասում. կա՛մ այսօր, կա՛մ երբեք:

Մի պղնձի տաշտ բերին, Մսրա Մելիքը ածելին զարկեց իր ճակատին, արյունը թափեց տաշտի մեջ, թուղթ առավ, իր արյունով գրեց, պատերազմ ու զորահավաք հայտարարեց:

Իսմիլ խաթունը գիշերը երազ տեսավ, գնաց, Մսրա Մելիքին ասաց.

— Մելի՛ք, որդի՛, կռիվ մի՛ գնա Սասուն: Ես այս գիշեր երազ տեսա. Սասնա տան աստղը պայծառ էր, Մսրա տան աստղը՝ խավար: Դավիթը քո եղբայրն է, կռիվ մի՛ գնա նրա դեմ: Սասունը փոքր է, իր թափն՝ ահագին: Դավիթն ունի Քուռկիկ Ջալալին, Թուր–կեծակին, Դավիթը հրեղեն է, քեզ կսպանի:

Մսրա Մելիքը այստեղ վախեցավ, ասաց.

— Մարե՛, ինչո՞ւ այդ ամենը չասիր առաջուց: Հիմա ինքս էլ չեմ ուզում կռիվ գնալ: Բայց զորք եմ հավաքել:

Իսմիլ խաթունը միտք արեց, ասաց.

— Դու զորապետեր քի՞չ ունես. ուրի՛շ մարդ բռնիր քո տեղ, թող զորքն առնի, գնա Սասուն: Ինքդ մի՛ գնա:

— Հայ–հա՛յ, զորքս տամ ուրիշ մարդու ձեռք, տանի կոտորե՞լ տա: Ինքս պիտի գնամ կռիվ: Ուրիշ ճար չկա:

Իսմիլ խաթունն այստեղ լաց ու կոծ արեց, ասաց.

— Մելի՛ք, ես քեզ մենակ չեմ թողնի: Դու որ գնում ես, ես էլ կգամ քեզ հետ:

Իսմիլ խաթունը հավաքեց քառասուն տղամարդ, որ վրան զարկեն, խորոված անեն, զուռնա փչեն. քառասուն կին, որ հատակ ավլեն, սեղան գցեն, ոտք մաժեն. քառասուն աղջիկ, որ դափ զարկեն, քյամանչա քաշեն, պարեն. այդ բոլորին առավ իր հետ, Մսրա զորքի հետևից ճանապարհ ընկավ դեպի Սասուն:

Մսրա Մելիքն իր զորքը բերեց մինչև Սասնա սահման, Լերա դաշտի մեջ վրաններ զարկեց ու թուղթ գրեց, ուղարկեց Սասնա քաղաքը:

«Դավի՛թ, կռիվներս կռիվ է, արի կռվենք: Թե չէ զորքս կթափեմ քաղաքիդ վրա, ինչքան որձ կա Սասնա մեջ, կսպանեմ, Սասունը քարուքանդ կանեմ»:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ էին ոմանք խրախուսում Մսրա Մելիքի կռիվն ընդդեմ Սասունի:
2. Նկարագրի՛ր հրաման գրող Մսրա Մելիքին այնպես, ինչպես պատկերացնում ես:

ԴԱՍ 26

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ

***

Մեր լեզուն մեր խիղճն է դա,
Սուրբ հացը մեր սեղանի,
Մեր հոգու կանչն է արդար
Ու համը մեր բերանի:

Մեր լեզուն ծուխն է մեր տան,
Մեր կշիռն աշխարհի մեջ,
Նա աղն է մեր ինքնության,
Էության խորհուրդը մեծ:

Մեր լեզուն արյունն է մեր,
Արյունից ավելի թանկ,
Մեր բուրմունքն ու գույնն է մեր,
Մեր լեզուն մենք ենք ու կանք:

Նա պիտի մեր առաջին
Ու վերջին սերը լինի,
Ի՞նչ ունենք էլ աշխարհում,
Որ այսքան մերը լինի:

* * *

Գարունդ հայերեն է գալիս,
Ձյուներդ հայերեն են լալիս,
Հայերեն են հորդում ջրերդ:
Հավքերդ երգում են հայերեն,
Խոփերդ հերկում են հայերեն,
Հայերեն են տոկում գրերդ:
Արևդ հայերեն է ծագում,
Ծառերդ հայերեն են ծաղկում,

Սոսկ բնաև կարներ չէ, որ Սահյանը բերեց մեր բանաստեղծությանը, այդ բնանկարների ծալքերում, նրա ամենախոր շերտերում մի արդար ու բարի, մեծ ու ազնիվ հոգու շարժում կա, հոգու ամբողջ մի պատմություն, իսկ ճշմարիտ բանաստեղծությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ պատկերների խորքում թաքնված հոգու պատմություն...

Վահագն Դավթյան

Համո Սահյանի դիմանկարը
նկարիչ՝ Հրանտ Ստեփանյան

Վարպետի՝ բնության մասին գրած բանաստեղծությունները քեզ տեղափոխում են նախապատմական ժամանակների հախուռն ու լուսնկա հոսքի մեջ, քեզ պարուրում վաղնջական օրերի ու գույների մաքրությամբ: Ավելի ճիշտ՝ հարստացնում...

Եթե բանաստեղծ Սահյանը ոչինչ ստեղծած չլիներ, նրա բնապաշտական երգերն իսկ բավական են նրան դասելու հայ բանաստեղծության նվիրյալ մեծերի շարքին:

Էդուարդաս Մեժելայտիս

Հայերեն են պայթում բառերդ:
Հունդերդ ծլում են հայերեն,
Ձեռքերդ կռում են հայերեն,
Հայերեն են լռում քարերդ:
Ձորերդ շնչում են հայերեն,
Ձոհերդ ննջում են հայերեն,
Հայերեն են տանջում ցավերդ:
Որքան էլ ձեռքից գնացել,
Դու էլի հային ես մնացել,
Հայերեն են հառնում սարերդ:
Թող Աստված եղածը պահի,
Եվ հետո ինչ էլ պատահի,
Ձյուներդ հայերեն են լալու,
Գարունդ հայերեն է գալու,
Հայերեն են գալու դարերդ...

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Համացանցում գտի՛ր լրացուցիչ տեղեկություններ Սյունյաց աշխարհի մասին և պատմի՛ր դասընկերներիդ:
2. Հայթայթի՛ր ասույթներ Համո Սահյանի մասին:
3. Կարդա՛ Համո Սահյանի «Նահիրյան դալար բարդի» բանաստեղծությունը և համեմատի՛ր քո կարդացած այլ բանաստեղծությունների հետ:
4. Անգի՛ր արա Հ. Սահյանի «Մասրենի» ոտանավորը:

ԱՆԱՆ ԾԻԵՐ

ՁԵՆՈՎ ՕՀԱՆ

Մսրա Մելիքի թուղթը բերեցին, տվեցին Ձենով Օհանին: Կարդաց, Մսրա Մելիքի կռվակոչն առավ, գնաց Վերգոյի մոտ, կանչեց Քեռի Թորոսին, նրանց հետ խորհուրդ արեց.

— Դավիթը Մսրա զորքը որ տեսավ, կռիվ կանի, կզոհվի, մեր գլխին եկած փորձանքն էլ կավելացնի:

— Կռիվ անելը մեր բանը չի, — ասաց Ցռան Վերգոն: — Մի սուտ կերուխում սարքենք, Դավթին ամուր խմեցնենք, որ չսթափվի, արծաթ ու ոսկի, աղջիկ ու կին տանենք Մսրա Մելիքին, ոտքերն ընկնենք, աղաչենք, որ մեզ չկոտորի:

— Լավ, — ասաց Քեռի Թորոսը, — հիմա ժամանա՛կ շահեք, մինչև ես իմ զորքը հավաքեմ, տանեմ սար: Որ կռիվ եղավ, պիտի կռվենք:

Ջենով Օհանը սուտ կերուխում սարքեց, Քեռի Թորոսը Դավթին կանչեց, ասաց.

— Թե որ այս յոթկանթանի պղինձը լիքը գինի խմես, կասեմ՝ դու Առյուծ Մհերի տղան ես:

Դավիթը խմեց, մինչև տակը դատարկեց, հարբած պառկեց գորգի վրա, քնեց:

Քեռի Թորոսն ասաց՝ փող փչեն, թմբուկ զարկեն, իր տոհմի քաջերին հավաքեց, այսպես խոսեց.

— Ակա՛նջ արեք, իմ որդինե՛ր, իմ Սասնա տան քաջե՛ր. Մսրա Մելիքը զորք է բերել, որ տանի մեր դառը դատած ոսկին, մեր կինը, մեր աղջիկը, մեր պատիվը: Ջենք տա: Կռիվ է ուզում՝ կկռվենք: Մի օր ծնվել ենք, մի օր կմեռնենք:

Քեռի Թորոսն իր զորքով վրաններ զարկեց Լերա սարի գլխին: Լույսը որ բացվեց, մերոնք տեսան Մսրա Մելիքի զորքը Լերա դաշտի մեջ: Երկնքի աստղերին հաշիվ կար, սպիտակ վրաններին հաշիվ չկար: Ոնց որ սարում ամառ լիներ, դաշտում՝ ձմեռ:

Քեռի Թորոսի կինը՝ Սանդուխտ տիկինը, եկավ Դավթի մոտ, նստեց, լաց եղավ: Արտասուքը, որ ընկավ Դավթի երեսին, Դավիթն արթնացավ.

— Քեռակի՛ն: Ինչո՞ւ ես լալիս:

— Ա՛խ, Դավի՛թ, դու կոտորեցիր Մսրա հարկահաններին, Մսրա Մելիքը բարկացավ. անհաշիվ զորք հավաքեց, եկել է մեզ վրա:

Դավթի գինովությունն անցավ, ասաց.

— Քեռակի՛ն, դու մի՛ վախեցիր: Ես կգնամ, պատասխան կտամ այն շուն Մելիքին: Ես չեմ թողնի, որ Մսրա զորքերը մեր մեկ հոտաղի մազին կպչեն:

Դավիթը գնաց իր հորեղբոր մոտ, ասաց.

— Հորեղբա՛յր Օհան, Մսրա Մելիքը զորքով եկել է ինձ վրա կռիվ: Ինչո՞ւ եք թաքցրել ինձնից:

— Դու ջահել ես, ո՞նց պիտի կռվես Մելիքի դեմ:

— Ես չկռվեմ, ո՞վ պիտի կռվի: Շուտ գե՛նք տուր:

Ցռան Վերգոն Դավթին ծաղրեց, ասաց.

— Դավի՛թ, Մսրա Մելիքին երբ կսպանես, նրա ձուն, թե որ կարողացար շալակել, բե՛ր հիշատակ:

Դավիթը մազ մնաց՝ մի հարված տար Ցռան Վերգոյի գլխին, բայց մտքում ասաց. «Հորեղբայրս է, մեծ մարդ է, թող իր համար խոսի»:

Դավիթը հորեղբոր հյուրասենյակից առավ ժան-



գոտած մի թուր, ավազակներից խլած քուռակը հեծավ, գնաց: Սասնա պառավը եկավ Դավթի առաջ.

— Դավի՛թ, քո հորեղբայր Օհանն ինչո՞ւ է քեզնից պահել քո հոր զգեստները, զենքերն ու ձին:

Դավիթը հետ եկավ, բռնեց հորեղբոր օձիքը, բարձրացրեց, ոտքերը հողից կտրեց, ասաց.

— Հորեղբա՛յր Օհան, իմ հոր զգեստները, զենքերը, Քուռկիկ Ջալալին որտե՞ղ են:

— Երբ Առյուծ Մհերը մեռավ, նրա զգեստներն ու զենքերը ես թաքցրի ներքնատան մեջ:

Իջան նկուղ: Դավիթը վերցրեց Մհերի զգեստները, հագավ: Մի քիչ մեծ էին իր վրա: Գնացին մեծ ախոռ: Քուռկիկ Ջալալին կապած էր այնտեղ: Դավիթը գրկեց ձիու վիզը, ճակատը համբուրեց.

— Մինչև այսօր քեզ տեր չկար, ես քո տերն եմ:

Դավիթը, իր հոր ձիու պախուրցը բռնած, ախոռից դուրս հանեց, Թամք–սադաֆին դրեց նրա վրա, փոկերը ձգեց: Թուր–կեծակին կապեց իր մեջքին: Աստծու կամքով Խաչ–պատերազմին եկավ իջավ Դավթի աջ թևին: Դավիթը հեծավ Քուռկիկ Ջալալին, փչեց իր հոր գալարափողը: Սասնա ամբողջ ժողովուրդը հավաքվեց հրապարակում:

Դեղձուն–Ծամը այն օրվանից, ինչ Առյուծ Մհերն ու Արմաղանը մեռան, մտել էր իր սենյակը, ուխտ էր արել. «Մինչև չմեծանա մեր նորամանուկ Դավիթը, մինչև չբռնի իմ Առյուծ Մհերի տեղը, մինչև չառնի նրա զգեստներն ու զենքերը, մինչև չհեծնի Քուռկիկ Ջալալին, ես իմ սենյակից դուրս չեմ գա»: Գալարափողի ձայնը լսեց, ուրախացավ: Պատուհանից ներքև նայեց, տեսավ՝ Դավիթը հեծել է Քուռկիկ Ջալալին, կանգնել է պատուհանի տակ, կանչեց.

— Քուռկի՛կ Ջալալի, դու Մհերիս օգնականն ես եղել, նրա որդուն էլ օգնական լինես: Իմ Դավթին տանես Կաթնաղբյուր, որ ջուր խմի, զորեղանա: Իմ Դավթին տանես Փորձաքար, որ Դավիթը թրով զարկի, երկաթե սյունը կտրի, նոր գնա կռիվ:

Քուռկիկ Ջալալին լեզու առավ, ասաց.

— Մե՛ծ մամիկ, դու հանգի՛ստ կաց: Ես կանեմ այնպես, ինչպես դու կամեցար:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ հորեղբայրները Դավթին հարբեցրին:
2. Նկարագրի՛ր Սասնա պառավին պատկերացրածիդ պես:

ԴԱՍ 27

ԳԵՎՈՐԳ ԷՄԻՆ

Իսկական անունը՝ Կառլեն Մուրադյան: Ծնվել է 1919–ի հոկտեմբերի 30–ին Աշտարակ գյուղում: 1927–ից ապրել է Երևանում: 1936–ին ավարտել է միջնակարգ դպրոցը, 1940–ին՝ Երևանի ճարտարագիտական համալսարանը: 1942–1944–ին ծառայել է խորհրդային բանակում: 1949–1950 թթ. սովորել է Մոսկվայի գրականության ինստիտուտին կից հայ գրողների ուսուցարանում, 1954–1956 թթ.՝ ԽՍՀՄ գրողների միությանն առընթեր գրական բարձրագույն դասընթացներում: 1951–1954 թթ. եղել է «Լիտերատուրնայա գազետա» թերթի սեփական թղթակիցը Հայաստանում, 1968–1972 թթ.՝ «Լիտերատուրնայա Արմենիա» ամսագրի խմբագիրը: 1973–1998 թթ. եղել է ՀՀ ԳԱԱ արվեստ ինստիտուտի ավագ գիտաշխատող: Վախճանվել է 1998–ի հունիսի 11–ին Երևանում: Թաղված է Աշտարակում՝ Կարմրավոր եկեղեցու բակում:

Գրել է բանաստեղծություններ (ամփոփված են «Նախաշավիղ», «Խաղաղության ծխամորճը», «Նոր ճանապարհ», «Նորք», «Որոնումներ», «Երևանի լույսերը», «Մինչև այսօր», «Երկու ճամփա», «Այս տարիքում», «Քսաներորդ դար» և այլ ժողովածուներում), պոեմներ («Սասունցիների պարը», «Արարատի գագաթին» և այլն), խոհագրական վիպակներ («Հավերժի ճամփորդը», «Յոթ երգ Հայաստանի մասին» և այլն), հուշեր, գրական դիմանկարներ, ակնարկներ, հոդվածներ:

Նրա բեմագրով ստեղծվել է «Յոթ երգ Հայաստանի մասին» ֆիլմը:



Այն բանի համար, որ ես այսօր ոչ թե կամուրջներ կամ ջրանցքներ եմ սարքում, այլ գրում եմ գրքեր, շնորհակալ եմ դպրոցում ինձ հանդիպած հայ փայլուն գրողներից մեկին՝ Եղիշե Չարենցին: Ես նաև շնորհակալ եմ իմ մասնագիտությանը. միայն ճիշտ գիտությունը կարող է օգնել ստեղծագործողին զարգացնելու իր մեջ հոգևոր հավասարակշռություն՝ խուսափելով շատախոսությունից և հաճախակի տասը քայլ անելուց այնտեղ, որտեղ մի քայլը բավական կլիներ:

Գևորգ Էմին

«Ես հայ եմ» բանաստեղծության առաջին տողը Գևորգ Էմինի գերեզմանի եզրին՝ Աշտարակի Կարմրավոր եկեղեցու բակում

ՄԵՆՔ
(հատված)

Մենք փո՛քր ենք, այո՛, փո՛քր՝
Լեռների ծերպից սուրացող այն քարի՛ նման,
Որ դաշտում ընկած ժայռի ո՛ւժն ունի.
Փո՛քր՝
Լեռնային մեր գետերի պես,
Որոնք վիթխարի ո՛ւժ են ամբարել,
Անծանո՛թ
Հովտի ծույլ–ծույլ գետերին:

Մենք փո՛քր ենք, այո՛,
Փո՛քր ենք,
Բայց ինչպես գնդակը՝ փողո՛ւմ,
Ինչպես կաղնու սերմն՝ արգավանդ հողում,
Ոսկու մի հատի՛կ,
Որ վերևի՛ց է նայում
Կապարի ու թուջի քաշին.

Մենք փո՛քր ենք,
Սակայն համեմունք ենք մենք,
Ա՛ղն այն մի պտղունց,
Որ հա՛մ է տալիս մի ամբողջ ճաշի...

Մենք փո՛քր ենք, այո՛,
Ձեզ ո՞վ էր ասում՝
Մեզ սեղմե՛ք այնքան,
Որ մենք ստիպված ... աղամա՛նդ դառնանք.

Ո՞վ էր ստիպում՝
Մեզ աստղերի պես ցիրուցա՛ն անեք,
Որ միշտ մե՛զ տեսնեք,
Ուր էլ որ գնաք...

Մենք փոքր ենք,
Սակայն մեր երկրի նման,
Որի սահմանը
Բյուրականից մինչ Լուսի՛ն է հասնում
Եվ Լուսավանից մինչև Ուրարտո՛ւ...

Փո՛քր
Այն հրաշք ուրանի նման,
Որ դար ու դարեր
Փայլո՛ւմ է,
Հողո՛ւմ,
Սակայն չի՛ հատնում...

ԵՍ ՀԱՅ ԵՄ

Ես հայ եմ, հին, ինչպես լեառն այս բիբլիական,
Թաց են ոտքերս դեռ ջրհեղեղի ջրից,
Իմ սուրբ հողն է տեսել Նոյն առաջին անգամ,
Բաբելոնյան Բելը խորտակվել իմ սրից:

Իմ մատների հետքն է կրում կողի վրա,
Քարն առաջին մամռոտ, որ իմ ձեռքով տաշված
Եվ միացած հողին շաղախով իմ արյան,
Արարատյան դաշտում մեհյանի վեմ դարձավ:

Իմ նահատակ որդոց արյունով է ոռոգ
Ամեն ծաղիկ ու ծառ հողում հայրենական,
Ամեն բլուր քաջի մի շիրիմ է նորոգ,
Եվ կոթողի բեկոր՝ ամեն սանդուղք ու քար:

Ես հայ եմ, հին, ինչպես լեառն այս Արարատյան,
Հազար սուր է բախվել իմ վահանին ահեղ,
Բայց փշրել եմ նրանց ես ցասումով արդար
Եվ լեռներիս նման գլուխս վեր պահել:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Հայ գրականության համար ինչո՞վ է նշանավոր Գ. Էմինը:
2. Համացանցում գտի՛ր լրացուցիչ տեղեկություններ Գևորգ Էմինի ու նրա երկերի մասին:
3. Դասընկերներով հայթայթե՛ք ասույթներ՝ Գևորգ Էմինի երկերից քաղված:
4. Կարդա՛ Գևորգ Էմինի «Սասունցիների պարը» պոեմը և համեմատի՛ր քո կարդացած այլ պոեմների հետ:
5. Կարդա՛ նաև Գ. Էմինի «Հավերժի ճամփորդը» գիրքը:

Կես ենք՝
Երկձեղքված,
Կիսված,
Երկգագաթ
Մեր խորհրդանիշ սուրբ լեռան նման...
Բայց վկա՝ ձեղքված Մասիս լեռը մեր,
Վկա՝ մեր կեսը՝ մորթված Տեր-Զորում
Եվ այն կեսը,
Որ ես եմ,
Դու և նա՛,
Մենք կմիանանք,
Մենք կամբողջանանք,
Կգտնենք մի օր
Լրիվ դառնալու հնարն անհնար:

Հատված «Մենք»-ից

ԴԱՎԻԹԸ ԵՎ ԻՄԱՍՏՈՒՆ ԾԵՐՈՒՆԻՆ

Քուռկիկ Ջալալին Մհերի որդուն տարավ Ծովասար, կանգնեց Կաթնաղբյուրի գլխին: Դավիթն իջավ, ջուր խմեց, պառկեց Կաթնաղբյուրի մոտ, որ հանգստանա: Երկու ժամ քնելուց հետո արթնացավ, տեսավ՝ մարմնով այնքան զորացել ու խոշորացել է, որ զգեստները հազիվ են վրայով գալիս:

Հեծավ ձին, գնաց մինչև փորձասյուն, Թուր–կեծակին զարկեց, երկաթե փորձասյունը կտրեց անցավ: Հետ նայեց. փորձասյունը մնացել էր կանգնած կտոր կտորի վրա: Դավիթն ինքն իրենից նեղացավ:

Մեկ էլ այն կողմից, ինքն իր պոչի վրա պտտվելով, եկավ մի զորեղ վիշապահողմ, փորձաքարը շուռ տվեց, անցավ: Դավիթը նայեց ու տեսավ՝ Թուր–կեծակին երկաթե սյունը մեջտեղից կիսել անցել էր: Ուրախացավ, ինքն իրեն օրհնեց, սրտապնդեց: Ապա ձին քշեց, գնաց կռվի դաշտ, կանգնեց մի բլուրի գլխին, աչք ածեց: Երկնքի աստղերին հաշիվ կար, դաշտի խոտերին հաշիվ կար, Մսրա Մելիքի զորքին հաշիվ չկար: Նրա վրանները սպիտակին էին տալիս Ծովասարի ստորոտից մինչև Բաթմանա կամուրջ:

Դավիթը քաջ էր, բայց երկմտեց. «Հայ–հա՜յ, ես ո՞նց պիտի կռվեմ սրանց դեմ: Սրանք լինեն կորնգանի արտ, ես լինեմ գերանդիով հնձվոր, չեմ կարողանա քաղել: Սրանք լինեն գզած բամբակի մի դեզ, ես լինեմ թեժ բոց–կրակ, չեմ կարողանա վառել»:

Քուռկիկ Ջալալին լեզու առավ, ասաց.

— Մի՛ երկմտիր, Դավի՛թ: Ինչքան որ դու սպանես քո թրով, այնքան էլ ես իմ պոչով կսպանեմ, ինչքան որ դու կոտորես գուրզով, այնքան էլ ես կճխլեմ իմ ոտքերի տակ, ինչքան որ դու վառես քո թրի կրակով, այնքան էլ ես կայրեմ պնչերիս բոցով, ինչքան որ պատուհասի քո խաչ–պատերազմին, այնքան էլ կտապալի իմ վազքի քամին... Մի՛ վախենա, Դավի՛թ. հենց որ դու շոգես, հոգնես, ես քեզ կառնեմ, կբարձրանամ Ծովասար, այնտեղ Կաթնաղբյուրից պաղ ջուր կխմես, կհանգստանաս, նոր ուժ կստանաս, նորից քեզ կիջեցնեմ կռվի դաշտ:

Դավիթն իր ձիու խոսքերից սրտապնդվեց, նոր ուժ ստացավ, պատրաստ էր նետվելու կռվի դաշտ: Բայց, ինչպես որ Սասնա տան հինավուրց ավանդն

էր, վճռեց Թշնամուն առաջուց իմաց տալ, նոր զարկել: Կանգնեց մի մոտիկ բլրի վրա, ձայն տվեց.

Ով քնած է, թող շուտով արթնանա,
Ով արթուն է, թող տեղից բարձրանա,
Ով վեր է կացել, զենք–զրա՛հ կապի,
Ով զենքն է կապել, թող իր ձին հեծնի.
Ելե՛ք, որ չասեք, ինքներս քնած՝
Դավիթը գող–գող եկավ ու գնաց:

Ապա Դավիթն իր ձին ասպանդակեց, թռավ ու կայծակի պես զարկեց Մսրա զորքի մեջ, աջ շուռ եկավ, ձախ շուռ եկավ, պտտվեց զորքի մեջտեղը, ինչպես ավազի մեջ վիշապ–քամին է պտտվում, և կոտորեց մինչև կեսօր: Ինչքան որ Դավիթը կոտորեց, այնքան էլ՝ Քուռկիկ Ջալալին:

Փոշին բարձրացավ երկինք: Արևը չէր երևում, Դավթի թուրն էր միայն կայծակին տալիս: Կեսօրին արյունը դարձավ հեղեղ, Մսրա զորքի դիակները քշեց մինչև Բաթմանա կամուրջը, լցրեց գետը:

Մսրա զորքի կեսը կոտորվել էր, կեսն էր մնացել: Դրանց մեջ կար մի սպիտակամորուս ծերունի: Ուզում էր կոտորածի առաջն առնել.

— Ճամփա՛ տվեք, որ գնամ խոսեմ Դավթի հետ:

— Ի՞նչ ես ուզում, ալևո՛ր, — հարցրեց Դավիթը:

— Դավի՛թ, ինչո՞ւ ես մեզ կոտորում:

— Ես ինքս էլ չեմ ուզում ձեզ կոտորել: Մսրա Մելիքը ինձ կանչեց կռիվ. բա ո՞ւմ հետ կռվեմ:

— Մսրա Մելիքն է քեզ կանչել կռիվ, դու մե՞զ ես կոտորում: Այս խեղճ ու կրակ մարդիկ ի՞նչ մեղք ունեն: Ամեն մեկը մի տան ճրագ է, ամեն մեկը՝ մի տան մինուճար: Որը տանն է թողել պառավ հայր ու մայր, որը՝ ջահել հարսնացու, որը՝ մի տուն լիքը երեխա: Մսրա Մելիքը բոլորին ուժով է բերել կռիվ, նա է Սասնա Թշնամին. դու նրա՛ հետ կռվիր:

— Ալևո՛ր, դու արդար ես խոսում: Բայց ո՞ւր է Մսրա Մելիքը: Մի տեսնեմ՝ այսքան զորք ինչո՞ւ է բերել. ի՞նչ է ուզում ինձնից, ի՞նչ է ուզում ձեզնից:

— Մսրա Մելիքը իր վրանի մեջ քնած է: Աա՛՛յ նրա վրանը՝ այն կանաչն ու մեծը:



ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ Դավիթը դադարեցրեց Մսրա զորքը կոտորելը:
2. Նկարագրի՛ր Մսրա իմաստուն ծերունուն այնպես, ինչպես պատկերացնում ես:

ԴԱՍ 28

ԳԵՎՈՐԳ ԷՄԻՆ



Այբուբեն չէ սա,
Բերդ է անմատույց,
Գանձ է աննված:

Դուռ է փրկության,
Ելք, երբ հույս չկա,
Զարթոնքի նվագ:

Էությունն է մեր,
Ընթացքն ու ուղին,
Թագ ու զորավար...

Հատված
«Մեր այբուբեն»-ից

ԶԳՈՒՅՇ ԽՈՍԻՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Զգույշ խոսիր Հայաստանում.
Այստեղ ամեն գագաթ ու ձոր
Արձագանք է տալիս հզոր
Եվ քո խոսքը հեռու տանում...

Թե բարի են խոսքերը քո,
Հայոց լեռներն ակնածանքով
Կխոնարհվեն քո դեմ լռին՝
Բաշը քսած քո ձեռքերին:

Իսկ թե չար են, լեռները մեր՝
Հրաբխի բներն անմեռ,
Որ լռել են, բայց չեն հանգել,
Քեզ լավայով կարձագանքեն,
Որ լեռներ է քշում տանում...
Զգույշ խոսիր Հայաստանում:

Զգույշ խոսիր Հայաստանում.
Նեղ են ճամփեքը լեռնական,
Երկու հոգու տեղ չեն անում,
Թե դեմ դիմաց ելնեն հանկարծ.
Թե բարեկամ ես ու ընկեր,
Ա՜նց կկենաք՝ իրար գրկված,
Թե դավով ես այստեղ ընկել,
Կգլորվես ժայռերից ցած,
Ո՞վ եղավ քո գալու վկան,
Գնալդ ո՞վ է իմանում...
Նեղ են ճամփեքը լեռնական,

Զգոյշ քայլիր Հայաստանում,
Զգոյշ գործիր Հայաստանում:

Մենք զահ ու թագ չենք ունեցել,
Եվ ... արքա՛ է ամեն մի հայ.
Զորք ու բանակ չենք ունեցել,
Եվ ... սպա է ամեն մի հայ:

Ամեն մի հայ՝ լեռան մի ծերպ,
Ամեն մի հայ՝ ուրոյն մի կերպ,
Ամեն մի հայ՝ մի Հայաստան՝
Բաժան–բաժան,
Անմիաբան,
Զատվա՛ծ, հատվա՛ծ,
Եվ սակայն մի,
Երբ սպառնում է թշնամին
Մեր դարավոր անմահ երթին
Եվ այս ժայռին թառած բերդին,
Որ Հայրենիք ենք անվանում...

Զգոյշ գործիր Հայաստանում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Դասընկերներով վերլուծե՛ք «Մենք» բանաստեղծությունը և քննարկե՛ք ձեր ուսուցչի հետ:
2. Հայթայթի՛ր ասույթներ Գևորգ Էմինի մասին:
3. Անգի՛ր արա Գևորգ Էմինի «Մեր այբուբենը» բանաստեղծությունը և համեմատի՛ր մեր լեզվի մասին քո կարդացած այլ ստեղծագործությունների հետ:
4. Կարդա՛ նաև Գևորգ Էմինի «Յոթ երգ Հայաստանի մասին» գիրքն ամբողջությամբ:

Գևորգ Էմինի հուշատախտակը Երևանում

Գևորգ Էմինի դիմանկարը
Նկարիչ՝ Գևորգ Պետրոսյան

ԱԼԱՆԱ ԾԹԵՐ

ԵԼՔ ԾՈՒՂԱԿԻՑ

Դավիթը քշեց գնաց մինչև կանաչ վրանը: Վրանի մուտքը պահպանում էին երկու զորեղ կտրիճ: Յոթ աղջիկ, Մսրա Մելիքի չորս բոլորը ծնկած, ճանճ

էին քշում, յոթը՝ ոտքերն էին մաժում, գլխավերևում նստած էր Իսմիլ խաթունը: Վրանի դռան առաջ ներսից փռված էր մի նախշուն գորգ: Դավիթն ասաց.

— Վե՛ր կացրեք Մսրա Մելիքին, թող դո՛ւրս գա:

— Յոթ օր պետք է քնի: Երեք օր է անցել:

Դավիթն ամպի պես որոտաց.

— Վե՛ր կաց, Մսրա Մելի՛ք: Եկել եմ, որ կռվենք:

Մսրա Մելիքը փնչալով վեր կացավ, ծանր ծմրկտաց, վրանից դուրս նայեց, տեսավ՝ Դավիթը, ոտքից-գլուխ արյունաթաթախ, կանգնած է այնտեղ: Մսրա Մելիքը փառ-փառ ծիծաղեց.

— Հա՛, հա՛, հա՛... Թլո՛ղ Դավիթ: Այդ ե՞րբ դու եղար ձիավոր: Ե՛տ դառ, գնա՛: Այն էլ պատիվ է քեզ, որ գնաս պարծենաս, թե «ես ձիով հասա Մսրա Մելիքի վրանը, նա վախեցավ, դուրս չեկավ»:

— Մելի՛ք, ծիծաղողը նա է, որ վերջում կծիծաղի:

Մսրա Մելիքը փչեց, որ Դավթին թռցներ, ինչպես փշախոտ: Նրա շնչից վրանը յոթ տեղով պատռվեց, խոտերն արմատահան եղան, խառնվեցին փոշուն, ծառերը կոտրվեցին, քարերը գլորվեցին, միայն Դավիթն էր աներեր նստած իր ձիու վրա: Մսրա Մելիքն այստեղ վախեցավ, եղանակը փոխեց.

— Դավի՛թ, ի՞նչ ես վռազում: Ձիուց իջի՛ր, արի նե՛րս՝ հաց ուտենք, հանգստանանք, նո՛ր դուրս գանք վրանից, կռվենք:

— Չէ՛, չեմ իջնի ձիուց: Այն խեղճ ու կրակ մարդկանց բերել ես կռիվ, նրանք այնտեղ ջարդվում են, մենք այստեղ հանգստանա՞նք:

Իսմիլ խաթունն առաջ եկավ, ասաց.

— Դավի՛թ, հարազա՛տս, այսօր դու կռիվ շատ ես արել, հոգնել ես: Ե՛կ, ձիուց իջի՛ր, հա՛ց կեր, հանգստացի՛ր, էլի ձեր կռիվը կռիվ է:

Շատ որ դեմն ընկան, Դավիթն ուզում էր ձիուց իջնել: Քուռկիկ Ջալալին ծառս էր լինում, փախչում էր դես ու դեն, չէր թողնում, որ Դավիթն իջնի:

Դու մի ասի՝ Մսրա Մելիքն ու իր մայրը վրանի շեմքի մոտ քառասուն գազ հոր էին փորել, բերանը ծածկել էին նախշուն գորգով, այնպես էին արել, որ Դավիթը գար, հորն ընկներ: Իսմիլ խաթունը շատ լեզու թափեց, աղաչեց, համոզեց ու Դավթին ձիուց վար բերեց: Քուռկիկ Ջալալին խռովեց, փախավ:

Դավիթը հենց որ ներս մտավ, հենց որ ձախ ոտքը կոխեց փափուկ գորգին, թը՛ռմփ... ընկավ հորը:

— Հող էիր, հո՛ղ դարձիր, — մռլտաց Մսրա Մելիքը ու նորից պառկեց, մտավ քուն:

Զենով Օհանն այդ գիշեր երազ տեսավ, զարթնեց.

— Վե՛ր կաց, կնի՛կ, վե՛ր կաց: Երազ տեսա, Մսրա աստղը վառվռում էր, Սասնա աստղը՝ մարմրում: Կա–չկա, մեր Դավիթը փորձանքի մեջ է:

— Ինչո՞ւ չես քնում, մա՛րդ: Դավիթը հիմա, ով գիտի որ կնոջ ծոցը մտած, զվարճանում է:

Զենով Օհանը զայրացավ.

— Օտարի աղջիկ ես, քո սիրտը չի ցավում Սասնա տան համար: Ե՛լ, ճրա՛գ վառիր, թե չէ...

Սառյան փնթփնթալով ելավ, ճրագ վառեց, բերեց մարդու զգեստներն ու զենք–զրահը:

Զենով Օհանը իրեն փաթաթեց յոթ գոմշի կաշի, յոթ գութանի շղթա, որ գոռալուց չպատռվի, գնաց գոմ, հեծավ իր Սևուկը, մի ակնթարթում հասավ Ծովասար, կանգնեց լեռան կատարին, նայեց չորս բոլորը: Քուռկիկ Ջալալին հեռվից Դավթի հորեղբորը տեսավ, մոտեցավ: Ջիու աչքերն արցունքոտ էին: Զենով Օհանը երկմտեց. «Վա՜խ, չլինի՞ Դավիթը սպանված է»... Զենով Օհանը ձիուց իջավ, իրեն մի հաստ պարանով կապեց կաղնի ծառին, որ գոռալու ձայնն իրեն չտանի, գոռաց.

Այ տղա՜, Դավի՜ի՜թ...
Որտե՞ղ ես, հիշի՛ր
Հացն ու գինին, տեր կենդանին,
Մարուքա բարձր Աստվածածին,
Հիշի՛ր քո խաչ–պատերազմին,
Որ կա քո աջ թևին.
Հիշի՛ր, կանչի՛ր ու թա՛փ տուր քեզ...

Զենով Օհանի ձայնն ընկավ սար ու ձոր, դմբդմբալով գնաց հասավ Դավթին, որ հորի մեջ կապկպված, խճճված էր երկաթե շղթաների ցանցով: Մտքում ասաց. «Հորեղբորս ձայնն է»: Իրեն թափ տվեց, երկաթե շղթաները կտրատեց, հորից դուրս թռավ, կանգնեց Մսրա Մելիքի առաջ.

— Է՜, Մսրա Մելի՛ք, հիմա՞ ինչ կասես. լուսաբացին եղբոր պես պիտի կռվե՞նք, թե՞ չէ:

Մսրա Մելիքի լեզուն ահից կապվեց: Նա էլ չհամարձակվեց Դավթին մոտենալ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ Դավիթն ընկավ ծուղակը:
2. Նկարագրի՛ր ծուղակն ընկած Դավթին:

ԴԱՍ 29

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

Չլիներ ծովը, երկնքի պատկերը երկրի վրա չէր լինի, չլիներ քո բանաստեղծությունը, շատ խավար կլիներ մեր երկիրը:

Ավետիք Իսահակյան

Իսկական անունը՝ Սիրվարդ: Ծնվել է 1919-ի հունվարի 20-ին Երևանում՝ Վանից գաղթած ընտանիքում: Նրա հայրը՝ Բարունակը, ազգային գործիչ էր, խմբագիր, որ սպանվեց 1920-ին: 1936-ին ավարտել է միջնակարգ դպրոցը, 1941-ին՝ ԵՊՀ բանասիրական բաժանմունքը, 1950-ին՝ Մոսկվայի Մ. Գորկու անվան գրականության ինստիտուտի բարձրագույն դասընթացը: Հրջագայել է սփյուռքի հայկական գաղթավայրերում, զբաղվել ազգային և հասարակական գործունեությամբ: Վախճանվել է 2006-ի օգոստոսի 25-ին Երևանում:

Գրել է բանաստեղծություններ (ամփոփված են «Երկու զրույց», «Օրերի հետ», «Հայնեական երգեր», «Երգ երգոց», «Լիլիթ», «Ձմեռ է գալիս», «Ձանգվի ափին», «Այս իմ երկիրն է», «Իմ հարազատները», «Սրտաբաց զրույց», «Բարի երթ», «Դեպի խորքը լեռան» և այլ ժողովածուներում), պոեմներ («Մտորումներ ձանապարհի կեսին» և այլն), ուղեգրություններ («Քարավանները դեռ քայլում են», «Խձանկար հոգու և քարտեզի գույներից», «Քարավանները հեռանում են», «Իմ կածանը աշխարհի ձանապարհներին»), հրապարակախոսական երկեր («Իմ ժամանակը: Հրապարակագրություն և ուղեգրություն», «Էջեր փակ զզրոցներից», «Վերջին զանգը» և այլն), թատերգություններ («Կռունկ, ուստի՞ կուգաս», «Եվ դո՛ւ, Բրուտո՛ս»):

Գրել է նաև մանկական բանաստեղծություններ (ամփոփված են «Փոքրիկ Արա, ակա՜նջ արա», «Մեր Լալիկը, սիրունիկը», «Տանը, բակում, փողոցում», «Մի տարով էլ մեծացանք», «Ծաղկանոց», «Երկու քույրիկ, երկու ուլիկ» և այլ ժողովածուներում):

ԸՆԴԻՄԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Այն ո՞վ է ասում,
Որ Արարատը ձերն է ու ձերը,
Անհեթեթ պատրա՞նք,
Քարտեզն է ձերը,
Քարտեզի վրա չափած–գծածը,
Իսկ ինքը՝ լեռը...

Նրա գագաթի զառամ ձյունները
Մեր ընկալմամբ են, որ հավերժության խորհուրդն
են առնում.
Նրան պարուրող մշուշն ու ամպը
Մեր աչքերո՛ւմ են եղեգան փողի ծուխ ու բոց դառնում.
Նրա ամեն մի անշունչ, անկենդան ավազահատը
Մեր արյան կարմիր գնդիկների՛ն է կենսահյութ
տանում:

Մոխի՛րն է ձերը,
Սարը բաղադրող կոշկոռը քարե,
Մեզ համար գործող հրաբուխ է նա,
Խառնարա՞ն ոգու,
Որ դար ու դարեր
Մեր ընդվզումի կրակն է ժայթքում
Եվ բորբոքում մեր ցասո՛ւմը կենաց:

Սառո՛ւյցն է ձերը,
Սառը, անհաղորդ սառույցը դեղնած,
Իսկ մեզ բյուրավոր արեգակների
Ներուժությո՛ւնն է անդուլ ճառագում նրա կողերից,
Որ տաքացնում է մի ողջ հողագունդ,
Այդ հողագնդին փռված–ծվարած մեր բեկորները:

Օ՜, սուրբ առասպե՛լ Արա արքայի,
Մեր էությունը ցոլացնող պատո՛ւմ,
Մեր փնտրումի գյո՛ւտ,
Որ երեսուն դար և դեռ ավելի
Սոսկ հոլովեցի՛ն, բայց չհասկացան
Բոլոր հին ու նոր Համիրամները:
Մարմի՛նն է ձերը

Սիլվա Կապուտիկյանի դիմանկարը
երգիծանկարիչ՝ Ալեքսանդր Սարուխան

Արա արքայի՝ Արարատ լեռան
Սպանված, մեռած մարմի՛նը միայն,
Որը չե՛ն կարող, չե՛ն կենդանացնի
Ձեր այլաբարբառ հարալեզները[1]...

Մերը հոգի՛ն է.
Սերնդեսերունդ անշեջ թևածող,
Վերջին շնչո՛ւմ իսկ հազար կերպ առած,
նորի՛ց պոռթկացող,
Մեզ արարչության հրահրող հոգին,
Որ չես սպանի զենքով ու դիրքով,
Ձե՛ս խլի երբեք գիր ու կնիքով
Եվ սահմանների փշալարերով երբեք չե՛ս բանտի...

Մերը հոգի՛ն է...

Սիլվա Կապուտիկյանը նկարիչ Մարտիրոս Սարյանի հետ

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Հայ գրականության համար ինչո՞վ է նշանավոր Սիլվա Կապուտիկյանը:
2. Համացանցում գտի՛ր լրացուցիչ տեղեկություններ Սիլվա Կապուտիկյանի ու նրա երկերի մասին:
3. Հայթայթի՛ր ասույթներ Ս. Կապուտիկյանի երկերից:
4. Անգի՛ր արա Սիլվա Կապուտիկյանի «Խոսք իմ որդուն» բանաստեղծությունը և համեմատի՛ր մեր լեզվի մասին քո կարդացած այլ ստեղծագործությունների հետ:
5. Կարդա՛ նաև Սիլվա Կապուտիկյանի «Մտորումներ ճանապարհի կեսին» պոեմը:

ԱԼԱՆ ԾԻԵՐ

ԴԱՎԹԻ ԿՌԻՎՆ ՈՒ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Դավիթը վրանից դուրս եկավ, տեսավ՝ Քուռկիկ Ջալալին չկա: Ելավ Ծովասար, որ իր ձին փնտրեր: Ջենով Օհանը նրան հեռվից տեսավ, կանչեց.

— Արի՛, Դավի՛թ, Քուռկիկ Ջալալին այստեղ է:

Դավիթը գնաց հորեղբոր մոտ, նրա ձեռքը համբուրեց: Ապա ձին քշեց Կաթնաղբյուր, հանգստա-

[1] մեռածին վերակենդանացնող առասպելական արարած

ցավ: Լուսաբացին գնաց Մսրա Մելիքի վրանի մոտ.

— Վե՛ր կաց, Մելի՛ք: Էլ ինձ չես խաբի:

Դավթի ձայնը երկրաշարժի պես որոտաց, Քուռկիկ Ջալալին պնչերից բոց հանեց, Թուր–կեծակին արևի տակ բոցկլտաց: Մսրա Մելիքը դուրս եկավ.

— Դավի՛թ, արի հաշտվենք: Արի՝ քեզ հարկ տամ, քեզ հպատակ լինեմ՝ կռիվ չանենք:

— Հազիվ թե հաշտվենք: Մեր կռիվը կռիվ է:

Մսրա Մելիքը տեսավ՝ ճար չկա, հարցրեց.

— Դավի՛թ, իրար խա՞ռը զարկենք, թե՞ հերթով:

— Ուզում ես՝ խառը, ուզում ես՝ հերթով:

— Հերթով զարկենք, — ասաց Մսրա Մելիքը: — Դավի՛թ... առաջին զարկը ի՞մն է, թե՞ քոնը:

— Քոնն է, Մելի՛ք: Առաջին երեք զարկը թող քոնը լինի: Դու իմ մեծ եղբայրն ես:

Դավիթը գնաց կանգնեց Լերա դաշտի մեջտեղը:

Մելիքն առավ իր վաթսուն փթանոց գուրզը, հեծավ իր Սևազդր ձին, քշեց գնաց մինչև Բաթմանա կամուրջ, թափ առած եկավ ու զարկեց՝ գը՛մփ...

Գետինը պատռվեց, փոշին բարձրացավ, բռնեց երկինքը, արևը չէր երևում: Մսրա Մելիքն ասաց.

— Հող էր, հող դարձավ Դավիթը: Ափսո՛ս, պահեցինք, շահեցինք, մի զարկով սպանեցինք:

Դավիթը փոշեմուժի միջից կանչեց.

— Մելի՛ք, ես կենդանի եմ: Մեկ է՛լ զարկիր:

Փոշին փարատվեց: Մսրա Մելիքը տեսավ՝ Դավիթն իր ձիու վրա կանգնած է դաշտի մեջ, ասաց.

— Հայ–հա՛յ, մոտիկ տեղից եկա, թափ քիչ առա:

Այս անգամ քշեց գնաց մինչև Դիարբեքիր, ավելի ուժեղ զարկեց: Դավիթը նորից կանչեց.

— Մելի՛ք, ես կենդանի եմ, վերջին զա՛րկդ տուր:

Մսրա Մելիքը ահից կատաղեց: Ձին քշեց մինչև Մսրա հող, եկավ ու զարկեց: Դավիթը կանչեց.

— Մելի՛ք, կենդանի եմ: Զարկելու հերթն իմն է:

Մելիքի երեսը ահից դեղնեց, շուրթերը դողացին, ոտքերը թուլացան, Իսմիլը ծնկաչոք մոտեցավ.

— Դավի՛թ, եղբայրասպան չլինե՛ս:

— Երբ քո Մելիքն էր զարկում ինձ, ինչո՞ւ չասացիր. «Մելի՛ք, Դավիթը քո եղբայրն է»:

— Դավի՛թ, — ասաց Մելիքը, — քեզ աղաչանք. յոթ ժամ տաս ինձ՝ հանգստանամ, նոր դու զարկես:

Մսրա Մելիքը մտավ Դավթի համար փորած քառասուն գազ հորը, բերանին քաշեց քառասուն գոմշի կաշի, քառասուն ջրաղացի քար ու գոռաց.

— Դավի՛թ, հերթը քոնն է, զարկի՛ր:

Դավիթը եկավ, նայեց Մսրա Մելիքի հորին.

— Աստված վկա՛, մեր պապերը լավ են ասել. «Ուրիշին հոր փորողն ինքը մեջը կընկնի»:

Դավիթը հեծավ ձին, Ծովասարից թափ առավ եկավ, պիտի զարկեր... Իսմիլը իրեն գցեց առաջ.

— Դավի՛թ, քեզ քաղցը ծիծ եմ տվել, այս մեկ զարկը բաշխի՛ր ինձ:

Դավիթն իր թուրն իջեցրեց, համբուրեց, ասաց.

— Մարե՛, դու չես թողել, որ Մելիքն ինձ սպաներ, երբ պստիկ էի... Այս մի զարկը բաշխեցի քեզ:

Դավիթը նորից թափ առավ, պիտի զարկեր... Մելիքի մեծ քույրն իրեն գցեց առաջ.

— Դավի՛թ, երբ դու փոքր էիր, շատ եմ քեզ շալակել, խաղացրել, այս մեկ զարկն էլ բաշխի՛ր ինձ:

Դավիթն իր թուրն իջեցրեց, համբուրեց, ասաց.

— Քույրի՛կ, այս մեկ զարկն էլ քեզ բաշխեցի:

Դավիթը նորից թափ առավ, եկավ: Իսմիլը իր հետ բերած աղջիկներին հրաման տվեց, որ փող փչեն, թմբուկ զարկեն, պարեն: Դավիթը մտածեց. «Սա ինձ համար է, որ շփոթվեմ, զարկս թուլանա»: Ու զարկեց ամբողջ ուժով: Կտրեց քառասուն ջրաղացքարն ու գոմշի կաշին, կտրեց Մելիքին գլխից մինչ ոտքեր, թուրը յոթ գազ էլ գնաց անդուդ:

Մսրա Մելիքը հորի միջից գոռաց.

— Դավի՛թ, ես այստեղ եմ, մեկ է՛լ զարկ:

— Չէ՛, կտրիճի զարկը մեկ է լինում, երկու չի լինի: Մի շնո՛րհ արա, քեզ թա՛փ տուր...

Մսրա Մելիքն իրեն թափ տվեց: Կեսն ընկավ աջ, կեսն ընկավ ձախ: Մսրա Մելիքը սատակեց:

Մսրա Մելիքի մայրն ու քույրը լաց եղան, ողբացին, վերջում Իսմիլ խաթունն աչքերը սրբեց, ասաց.

— Դավի՛թ, Մսրա Մելիքին դու սպանեցիր... Եկ նրա կնոջն ա՛ռ, Մսրն էլ քեզ լինի, Սասունն էլ:

— Չէ՛, մարե՛, Մսրա թագուհին ինձ կին չի լինի, Մսրա երկիրն ինձ հայրենիք չի լինի, ոնց որ Մսրա Մելիքն ինձ եղբայր չեղավ: Ուզո՞ւմ ես, արի՝ քեզ տանեմ Սասուն, մոր պես պահեմ: Թե չես ուզում, Մսրա հողը քոնն է, այնտեղ հանգիստ ապրի՛ր:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ Դավիթը հրաժարվեց իր երկու զարկերից:
2. Նկարագրիր հորում թաքնված Մսրա Մելիքին:

ԴԱՍ 30 ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

ՄԵՐ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻՆ

Հայերը հատուկ զենք ունեն, որով
մեր կռվողներին վախ են ներշնչում:
(աղրբեջանական հաղորդագրություն)

Հատուկ է զենքը մեր, արդարև,
Օ՛, այն նյութված է բյուր տարրերից.
Դեռ հնուց անտի[1], դեռ դարերից
Ալքիմիկոս ենք մենք հանձարեղ:
Ու մեր գնդակը Հայկյան նետի
Ջորք–զորությունը ունի իր մեջ,
Ունի հուռութքը՝[2] աստվածամերձ
Մեր ճշմարտության, մեր հավատի:
Վարդանանց հուշն է իր ձուլվածքում,
Խուրձ–խուրձ կայծեր կան Թուր–կայծակից,[3]
Ու մեր ցասումն է արդարագույն
Դուրս ժայթքում ամեն մի գնդակից:
Ցասումը գերված, լլկված հողի
Ու մեր պատմության առևանգված,
Մեր լույս կույսերի՝ հարեմ տարված,
Գողացված, պղծված մեր վանքերի:
Ոգու հրաշքն է մեր զենքի մեջ,
Ցավը մահերի մեր անհամար:

Օ՛, մեր վառողը նյութված է մեր
Մեծ ազատության տենչից համառ:
Դրա համար է խուճապահար

Երդվում եմ՝
Պահպանել քեզ որպես սերնդե-
սերունդ փոխանցված
Եվ ինձ վստահված տոհմական
սրբություն,
Նվիրումովս լրացնել քո մա-
սունքանման կորուստները,
Նորոգել քո մազաղաթյա ազն-
վականությունը
Նոր ժամանակների հյութ ու
ավիշով.
Քեզնով արտասանել միայն ար-
դարության խոսքեր:
Երդվում եմ կրել քեզ շնչովս,
արյունովս, այրումովս
Եվ ինձնով տանել–հաղորդել
զավակներիս
Քո հավերժական կենդանու-
թյունը:

Հատված «Հայ պատանու երդումը մայրենի լեզվին» արձակ բանաստեղծությունից

[1] անչափ հնուց
[2] հմայիլ
[3] Սասնա ծռերի թրից

Ոսոխը փախչում, ասես չարքից:

Մենք՝ ալքիմիկոս մի անհնար,
Ու մեր գնդակը՝ արդար ոսկի՛...

Սիլվա Կապուտիկյանի դիմանկարը
Նկարիչ՝ Մարտիրոս, Սարյան

ՄԵՐ ՍԵՐԸ

Հայաստա՛ն աշխարհ,
Դու մե՛ր եղար ու մերը չեղա՛ր,
Դրա համար էլ մենք քեզ սիրեցինք սիրահարի՛ պես...

Դու մե՛ր եղար,
Ինչպես որ մերն է մեր երակներում հոսող արյունը,
Եվ մերը չեղար,
Ինչպես մերը չէ Վարագա սարի[1] արևածագը,
Սասնա անտառին իջնող մանանան,
Մշո դաշտերը շոյող սոսափը...
Դու մոտի՛կ եղար՝
Սրտիդ տրոփը մեր կոշտ ձեռքերին հաղորդելու չափ,
Եվ հեռու եղար՝
Սահմանից այն կողմ,
Անիի կարմիր ավերակներից մեզ երևացող
Մայր տաճարի՛ պես:
Դու տաք հո՛ղ եղար,
Մեր պիրկ խոփերի տենչանքին հլու,
Մեր զգվանքներից ծլարձակող հո՛ղ,

Եվ տեսիլք եղար՝
Կապույտ, անշոշափ ու անբռնելի.
Մենք՝ անվերջ հասնո՛ղ,
Իսկ դու՝ հեռացո՛ղ, անվերջ հեռացո՛ղ...

Հայաստա՛ն աշխարհ,
Դու այսպե՛ս եղար,
Եվ դրա համար մենք քեզ սիրեցինք

Սիլվա Կապուտիկյանը՝
Ալիսիա Կիրակոսյանի հետ

[1] Լեռ Արևմտյան Հայաստանում

Ո՛չ ազգականի հանդարտիկ սիրով,
Այլ սիրածի՛ պես, սիրահարի՛ պես.
Ցավո՛ւտ, ցավախառն
Երազով, լույսով, երգող տխրությամբ,
Մերթ խռովելով,
Մերթ հաշտվելով,
Քո գրկո՛ւմ անգամ քեզ կարոտելո՛վ,
Քեզ կորցնելու ահից տագնապա՛ծ,
Քեզ ունենալու խինդից երջանի՛կ
Եվ բախտիդ համար անվերջ, ամեն պահ մեռնել–
ապրելո՛վ...

Հայաստա՛ն աշխարհ...

Սիլվա Կապուտիկյանի շիրիմը Կոմիտասի անվան պանթեոնում

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Հայթայթի՛ր ասույթներ Սիլվա Կապուտիկյանի մասին:
2. Կարդա՛ հատվածներ Ս. Կապուտիկյանի «Խճանկար հոգու և քարտեզի գույներից» ուղեգրությունից և համեմատի՛ր քո կարդացած այլ ուղեգրությունների հետ:
3. Անգի՛ր արա Սիլվա Կապուտիկյանի «Հայ պատանու երդումը մայրենի լեզվին» բանաստեղծությունը:

ԱՍՍՆԱ ԾՌԵՐ

ԴԱՎԹԻ ՊԱՏՎԵՐԸ ՄՍՐԱ ԶՈՐՔԻՆ

Դավիթն իր ձին քշեց, մտավ Մսրա զորքի մեջ.

— Ձեզ հետ եմ, լսե՛ք, զինվորնե՛ր, զորապետե՛ր: Ամենքիդ իրավունք եմ տալիս, գնացեք այնտե՛ղ, որտեղից եկել եք: Հանգի՛ստ առեք, աղո՛թք արեք ինձ համար, իմ հորն ու մորը ողորմի՛ տվեք:

Մսրա զորքերն այս ու այն կողմից օրհնեցին.

— Դավի՛թ, քո թևը թող դալար մնա, քո թուրը՝ կտրուկ: Ուր գնաս, քո ճամփին կանաչ բուսնի:

— Ձեր երկիրը ձեզ լինի. մեր երկիրը՝ մեզ: Իրար հետ հաշտ ապրենք: Բայց որ մեկ էլ ընկել եք մեկ ուրիշ Մելիքի հետևից ու եկել մեզ վրա կռիվ, լա՛վ իմացեք. ձեր դեմ նորից դուրս կգան Սասնա Դավիթը, Քուռկիկ Ջալալին ու Թուր–կեծակին:

Իսմիլ խաթունն իր զորքի մնացուկով գնաց Մսրը:

Մելիքի հետ եկած հարկատու թագավորներն ու զորապետերը իրենց մարդկանցով ցրվեցին աշխարհի չորս կողմը, ամեն տեղ Դավթի գովքն արին.

— Սասնա Դավիթն իր հոր ուխտը կատարեց, Մսրա Մելիքին կռվում սպանեց. իր Սասունն ազատեց, աշխարհին խաղաղություն բերեց:

Դավիթը Մսրա Մելիքի կեսը թաղեց Լերա դաշտում, նրա ձուն կտրեց, բարձեց մի սայլի վրա, որ տաներ Սասուն՝ Ցռան Վերգոյին հիշատակ:

Սասունցիները խմբով եկան Դավթի առաջ, նրա ճամփին ծաղիկներ շաղ տվին, գորգեր փռեցին, երգով, պարով, ցնծությունով տարան քաղաքամեջ, Քուռկիկ Ջալալու արյունոտ պնչերը համբուրեցին, Դավթի արյունոտ զգեստներն ու զենքերը համբուրեցին, լաց եղան, խնդացին ու գոռացին.

— Դավի՛թ, մեր ազատարարն ես...

— Դավի՛թ, հազար ու հազա՛ր տարի ապրես...

Դավիթը նիզակի ծայրով Մսրա Մելիքի ձուն սայլի վրայից գցեց իր հորեղբայր Վերգոյի առաջ.

— Հորեղբա՛յր Վերգո, Մելիքի ձուն բերել եմ. թե կարողանաս գետնից վերցնել, տա՛ր քեզ հիշատակ:

Ժողովուրդը փառ–փառ ծիծաղեց:

Սասունցիները յոթ պղնձով ջուր տաքացրին, Դավիթը լողացավ, Քուռկիկ Ջալալուն լողացրեց: Ապա գնաց Սասնա պառավի տուն, մի տակառ գինի խմեց, պառկեց ու քնեց երեք օր: Երբ քնից ելավ, ասաց.

— Նանե՛, ես մայր չունեի, դու ինձ մայրություն արիր: Այսօրվանից ինչ ասես, կգնամ քո խոսքով:

— Դավի՛թ, դու փոքր էիր, հիմա մեծացար, բռնեցիր Առյուծ Մհերի տեղը: Հորեղբորդ ասա՛, որ քո հոր գահասենյակը բաց անի, մեջը նստես:

Դավիթը գնաց հորեղբոր մոտ, ասաց.

— Հորեղբա՛յր, հորս գահասենյակը բացի՛ր:

— Կբացեմ: Դու որ չնստես քո հոր տեղը, ո՞վ պետք է նստի: Սասնա ճրագը հանգած էր, դու վառեցիր: Քեզ վայե՛լ քո հոր զգեստներն ու զենքերը, քո հոր Քուռկիկ Ջալալին, քո հոր գահասենյակը, քո հոր անունը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ պատվիրեց Դավիթը Մսրա զորքին:
2. Նկարագրի՛ր ցնծացող սասունցիներին այնպես, ինչպես պատկերացնում ես:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍ 1 3
Ե. ՉԱՐԵՆՑ, «ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ», «ՄԵՐ ԼԵԶՈՒՆ»

ԴԱՍ 2 7
Ե. ՉԱՐԵՆՑ, «ՈՒՂԵՐՁ ՄԵՐ ՀԱՆՃԱՐԵՂ ՎԱՐՊԵՏՆԵՐԻՆ»

ԴԱՍ 3 11
Դ. ԴԵՄԻՐՃՅԱՆ, «ՀԱՅԸ»

ԴԱՍ 4 16
Ա. ԲԱԿՈՒՆՑ, «ՕԻՐԱՆԻ ՓՈՂԸ» (ՀԱՏՎԱԾ)

ԴԱՍ 5 22
Ա. ԲԱԿՈՒՆՑ, «ԱԼՊԻԱԿԱՆ ՄԱՆՈՒՀԱԿ» (ՀԱՏՎԱԾ)

ԴԱՍ 6 28
Ս. ՋՈՐՅԱՆ, «ԶՐՈՒՅՑ ԵՐԳԻ ՄԱՍԻՆ»

ԴԱՍ 7 33
Ս. ՋՈՐՅԱՆ, «ՍՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ» (ՀԱՏՎԱԾ)

ԴԱՍ 8 39
Կ. ՋԱՐՅԱՆ, «ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՉՈՒՄԸ»

ԴԱՍ 9 44
Վ. ԹՈՌՈՎԵՆՑ, «ԿՅԱՆՔԸ ՀԻՆ ՀՌՈՎՄԵԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՎՐԱ» (ՀԱՏՎԱԾՆԵՐ)

ԴԱՍ 10 49
Ն. ՋԱՐՅԱՆ, «ՀԱՅԵՐԵՆ», «ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ»

ԴԱՍ 11 53
Ն. ՋԱՐՅԱՆ, «ԱՐԱ ԳԵՂԵՑԻԿ» (ՀԱՏՎԱԾՆԵՐ)

ԴԱՍ 12 57
Գ. ՄԱՀԱՐԻ, «ՀԱՅԵՐԵՆ», «ԳԱՋԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ»

ԴԱՍ 13 61
Վ. ԱՆԱՆՅԱՆ, «ԱՀԸ»

ԴԱՍ 14 66
Գ. ՍԱՐՅԱՆ, «ՄԱՅՐԵՐԻՆ»

ԴԱՍ 15 70
ՍԱՐՄԵՆ, «ՄԵՍՐՈՊ ՄԱՀՏՈՑ» (ՀԱՏՎԱԾ)

ԴԱՍ 16 74
Հ. ՔՈՉԱՐ, «ԱՐՏԱՍՈՎՈՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»

ԴԱՍ 17 80
Հ. ՔՈՉԱՐ, «ՋՈՒԹԱԿԱՀԱՐԻ ՊԱՏՄԱԾԸ»

ԴԱՍ 18 86
Խ. ԴԱՀՏԵՆՑ, «ՀԱՅԵՐԵՆ»

ԴԱՍ 19 90
Խ. ԴԱՀՏԵՆՑ, «ՌԱՆՉՊԱՐՆԵՐԻ ԿԱՆՉԸ» (ՀԱՏՎԱԾ)

ԴԱՍ 20 94
Ա. ԳՐԱՀԻ, «ԵՎ ԵՐԲ ԳՆՈՒՄ ԵՄ ԵՍ ՕՏԱՐՈՒԹՅՈՒՆ», «ՀԱՅՐԵՆԻՔ»

ԴԱՍ 21 98
Ս. ԽԱՆԶԱԴՅԱՆ, «ՏՈՐՔ ԱՆԳԵՂԻ ՀԵՏՔԵՐՈՎ»

ԴԱՍ 22 103
Վ. ԽԵՉՈՒՄՅԱՆ, «ԳԼՈՒԽԳՈՐԾՈՑԸ» (ՀԱՏՎԱԾ)

ԴԱՍ 23 109
Հ. ՀԻՐԱՔ, «ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԵՐԳԸ», «ԻՄ ՍՈՒՐԲ ՀԱՅՐԵՆԻՔ»

ԴԱՍ 24 113
Հ. ՀԻՐԱՔ, «ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ», «ԷՔՍՊՐՈՄՏ», «ԴՈՒՔ Ո՞Ր ԵՐԿՐԻՑ ԵԿԱՔ, ՀՈՎԵՐ»

ԴԱՍ 25 117
Հ. ՍԱՀՅԱՆ, «ԱՆՈՒՆԴ ՏԱԼԻՍ»

ԴԱՍ 26 121
Հ. ՍԱՀՅԱՆ, «ՄԵՐ ԼԵԶՈՒՆ», «ԳԱՐՈՒՆԴ ՀԱՅԵՐԵՆ Է ԳԱԼԻՍ»

ԴԱՍ 27 125
Գ. ԷՄԻՆ, «ՄԵՆՔ», «ԵՍ ՀԱՅ ԵՄ»

ԴԱՍ 28 130
Գ. ԷՄԻՆ, «ԶԳՈՒՅՇ ԽՈՍԻՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ»

ԴԱՍ 29 134
Ս. ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ, «ԸՆԴԻՄԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ»

ԴԱՍ 30 139
Ս. ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ, «ՄԵՐ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻՆ», «ՄԵՐ ՍԵՐԸ»

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶԱՔԱՐՅԱՆ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
6

Սփյուռքի դպրոցների համար

(արևելահայերեն ուսուցմամբ)

Հրատարակչության տնօրեն՝ Էմին Մկրտչյան
Համակարգչային ձևավորումը՝ Վահե Մուրադյանի
Ժազ Թոփալազյանի
Սրբագրիչ՝ Տաթևիկ Մանուկյան

«Սասնա ծռեր» դյուցազնավեպի նկարազարդումը՝ *Արա Բաղդասարյանի*

Տպագրությունը՝ օֆսեթ
Չափը՝ 70x100 1/16: Թուղթը՝ օֆսեթ
Ծավալը՝ 9 տպ. մամուլ
Տառատեսակները՝ AraRusa, Grqee

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+374 10) 23 25 28
էլ. փոստ՝ info@zangak.am, էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak